Կախված հայացքների քաղաքական և գիտական ուղղվածությունից, հայտնի են աշխարհայացքի տարբեր տեսակներ՝ գիտական, աթեիստական, դասակարգային, կոմունիստական, մետաֆիզիկական, մատերիալիստական, կրոնական, բուրժուական և այլն: Այդ բոլոր ձևերի մեջ կա մի ընդհանուր բան՝ աշխարհընկալում: Այդ ընդհանուրում աշակերտների համար անհրաժեշտ է ստեղծել ազատ մտածելու և ինքնուրույն կողմնորոշվելու իրական նախադրյալներ՝ արժեքային համակարգ ձևավորել:

Կենսաբանության աշխարհայացքային նշանակությունը բխում է առարկայի բովանդակությունից: Այդ իմաստով առաջնային են հետևյալ հիմնական հասկացությունների, օրենքների, օրինաչափությունների և համակարգերի գիտաճանաչողական ընկալումը (Դավթյան 2010. 261- 267; Թանգամյան 2011).

- բնությունը որպես ամբողջական համակարգ,
- կենսաբանական համակարգերը բնության մեջ,
- օրգանական աշխարհի և օրգանիզմների կազմավորվածության մակարդակները, դրանց զարգացման օրենքները և օրինաչափությունները,
- ինտեգրված կենսաբանական համակարգերը, որոնցում արտահայտված են ներառարկայական և միջառարկայական կապերը,
- հասարակության և բնության փոխհարաբերությունը,
- բնության կենդանի և անկենդան բաղադրիչների փոխհարաբերությունը,

- քանակական փոփոխություններից որակականի անցման և հակառակ օրինաչափությունը,
- երևույթների պատճառահետևանքային և հետադարձ կապը,
- կառուցվածքի և ֆունկցիայի փոխհարաբերությունը:

Սույն աշխատանքի նպատակը հանրակրթական դպրոցում կենսաբանության աշխարհայացքային դերի բացահայտումը, այդ խնդրի լուծման մեթոդական համակարգի նախանշումը և ուղիների ստեղծումն է՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ ի՞նչ գործոնների ազդեցությամբ է հնարավոր խթանել աշակերտների գիտական աշխարհայացքի և համոզմունքների ձևավորումը:

Հետազոտվող խնդիրներին են նվիրված փիլիսոփայական (Карпинская 1980, Магомедова 2001, Морозова 2004, Тангамян 2006), հոգեբանական (Залеский 1994, Сиземская 2001) և մեթոդական (Комиссаров 1991, Пивоварова 2009) բազմաթիվ աշխատանքներ:

Ուսուցիչներին ուղղված հարցաթերթիկների միջոցով բացահայտվել է հիմնախնդրի դրվածքը և առկա վիճակը (1,2): Այն հարցին, թե «կենսաբանության դասերը նպաստո՞ւմ են աշակերտների գիտական աշխարհայացքի ձևավորմանը» 90 ուսուցիչներից 85-ը (94,4%) պատասխանել են դրական, իսկ 5-ը (5,6%) տվել են անորոշ պատասխան:

«Արդյոք անհրաժե՞շտ է կենսաբանության դասերի ընթացքում աշակերտների մեջ ձևավորել գիտական աշխարհայացք» հարցին 90 ուսուցիչներից 86-ը (95,5%) պատասխանել են դրական, իսկ 4-ը (4,5%) տվել են անորոշ պատասխան:

90 ուսուցիչներից 87-ը (96,7%) պատասխանել են, որ պատրաստ են և ցանկանում են դասերի ընթացքում անդրադառնալ աշա-

կերտների գիտական աշխարհայացքի ձևավորման հարցերին, 3-ը (3,3%) տվել են անորոշ պատասխան:

Հարցումների արդյունքում բացահայտվել է, որ ուսուցիչների 5,5%-ն է հետևողականորեն անդրադառնում աշակերտների գիտական աշխարհայացքի ձևավորման խնդիրներին (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Ուսուցիչների պատասխանները կենսաբանության դասերի ընթացքում աշակերտների գիտական աշխարհայացքի խնդիրներին անդրադառնալու մասին

N	Հարց	Ուսուցիչների թիվը	Պատասխան					
			Այո	%	Ոչ	%	Այլ	%
1	Կենսաբանության դասերը նպաստում են աշակերտների գիտական աշխարհայացքի ձևավորմանը	90	85	94,4	-	-	5	5,6
2	Արդյոք անհրաժեշտ է կենսաբանության դասերի ընթացքում աշակերտների մեջ ձևավորել գիտական աշխարհայացք	90	86	95,5	-	-	3	3,3
3	Պատրաստ եք և ցանկանում եք կենսաբանության դասերի ընթացքում իրականացնել աշակերտների գիտական աշխարհայացքի ձևավորման աշխատանքներ	90	87	96,7	-	-	3	3,3
4	Հետևողականորեն անդրադառնում եք աշակերտների գիտական աշխարհայացքի ձևավորման խնդիրներին	90	5	5,5	74	82,2	11	12,2

Ցանկության (96,7%) և իրականության (5,5%) միջև նկատվող հակասությունը բացահայտելու նպատակով ուսուցիչներին դիմել ենք «Ի՞նչն է կենսաբանության դասերի ընթացքում աշակերտների գիտական աշխարհայացքի ձևավորման խնդիրն չանդրադառնալու պատճառը և ի՞նչ դժվարություններ կան» հարցով (աղ. 2):

90 ուսուցիչներից 62-ը (68,8%) խնդրին չանդրադառնալու պատճառը համարում են մեթոդական ցուցումների պակասը, 18-ը (20%)՝ գիտելիքների և մանկավարժական պայմանների պակասը, իսկ 10-ը (11,11%)՝ տեղեկատվության պակասը:

Աղյուսակ 2

Ուսուցիչների պատասխանների արդյունքները

Հարց	Ուսուցիչ	Պատասխանների	Պատասխաններ
------	----------	--------------	-------------

	ների թիվը	պայմանական տարբերակ	Ուսուցիչներ	%
Ի՞նչն է կենսաբանության դասերի ընթացքում աշակերտների գիտական աշխարհայացքի ձևավորման հիմնախնդիրներին չանդրադառնալու պատճառը և ի՞նչ դժվարություններ կան	90	Մեթոդական ցուցումների պակասը	62	68,88
		Գիտելիքների և մանկավարժական պայմանների պակասը	18	20
		Տեղեկատվության պակասը	10	11,11


Անկետային հարցումների միջոցով բացահայտվել է, որ ուսուցիչները և աշակերտները հստակ չեն պատկերացնում «Ի՞նչ է գիտական աշխարհայացքը» (50-60%) և կենսաբանական համակարգը (51-54%) (1,2): Հետևաբար կենսաբանության ուսուցման գործընթացում աշակերտների մտածողության զարգացման և գիտական աշխարհայացքի ձևավորման մեթոդական համակարգը դեռևս մշակված չէ և այդ բնագավառում անելիքներ շատ կան:

Առաջ քաշված խնդիրների լուծման նպատակով մշակվել է աշակերտների մտածողության զարգացման և գիտական աշխարհայացքի ձևավորման գործնական ուղիներ, որոնցում կարևորվում է ինտեգրված կենսաբանական համակարգերի դե-


րը: Դպրոցական կենսաբանության ծրագրի սահմաններում, գրեթե բոլոր թեմաների համար կազմվել և փորձարկվել են միջառարկայական և ներառարկայական կապերն արտահայտող բազմաթիվ ինտեգրված կենսաբանական համակարգեր (Թանգամյան 2002; 2011. 75-79; 2004. 82):

Փորձի համար ընտրվել են ավագ դպրոցի 10-րդ և 11-րդ դասարանները: Ստուգիչ դասարանում ուսուցումը կազմակերպվել է առանց թեմատիկ համակարգերի, իսկ փորձնական դասարաններում կիրառվել են կենսաբանական և բնական երևույթների պատճառահետևանքային կապերն արտահայտող ինտեգրված համակարգեր:

Բերենք և քննարկենք դրանցից երկուսը (նկ.1 և 2):



Նկ 1. Ֆոտոսինթեզի և շնչառության փոխադարձ կապը բնության մեջ:



Նկ.2 Բնության կենդան և անկենդան բաղադրիչների փոխհարաբերությունը:

Նկ. 1-ում քննարկվում է ֆոտոսինթեզի և շնչառության փոխադարձ կապը բնության

համակարգում: Նկ. 2 բերված համակարգն արտահայտում է բնության անկենդան (Արե-

գակ, ջուր, հանքային տարրեր, թթվածին, ածխաթթու գազ) և կենդանի (բույս, կենդանի, մարդ և այլ օրգանիզմներ) բաղադրիչների փոխադարձ կապը և ամբողջականությունը:

Ուսուցիչը դասի ընթացքում մեկնաբանում է քննարկվող համակարգի առանձին օղակների կապը, բերում կոնկրետ օրինակներ:


Համակարգում ֆոտոսինթեզի և շնչառության օրինակով մեկնաբանվում են նաև ասիմիլյացիայի և դիսիմիլյացիայի փոխադարձ կապը, էներգետիկական բնույթը, ամբողջականությունը և փոխապայմանավորվածությունը:

Հաճախ աշակերտները շփոթում են այն, թե բույսն օրվա  $n^{\circ}$  ժամին է ֆոտոսինթեզ կատարում և շնչում: Միշտ չէ, որ շնչառությունը համարում են անընդհատ պրոցես: Եր-

բեմն շնչառությունը շփոթում են ֆոտոսինթեզի հետ, այն կապելով ածխաթթու գազի կլանման հետ:

Քննարկվող համակարգն ունի բնաճանաչողական, բնապահպանական, էկոլոգիական, բույսերի տիեզերական նշանակությունը մեկնաբանող, դաստիարակչական և աշխարհայացքային նշանակություն:

Հաճախ սովորողները դժվարանում են ամբողջական և համակարգված պատկերացում ունենալ բույսերի կենսական ցիկլում սերունդների հերթագայության մասին և կենսական ցիկլը մեկնաբանել որպես ամբողջական համակարգ:



Նկ.3 Ծաղկավոր բույսերի անհատական ցիկլը:

Նպատակահարմար է համարվել վերջինս ներկայացնել նկ. 3-ում պատկերված համակարգով:

Քննարկվող համակարգն ամբողջացնում է փոշեհատիկի և սաղմնապարկի զարգացումը, փոշոտումը, կրկնակի բեղմնավո-

րումը, ծաղիկ, պտուղ, սերմ, բույս, միջավայր փոխհարաբերությունը, բացասման բացասումը և այլն:

Մեկնաբանել համակարգը նշանակում է բացահայտել.

- համակարգի ծագման սկիզբը և աղբյուրը,
- կառուցվածքը, համակարգում տարրերի հաջորդելիությունը և ներքին կապը քանակական և որակական բնութագիրը,
- համակարգի զարգացումը և ինքնակարգավորումը,
- համակարգը բնութագրել որպես մեկ այլ համակարգի տարր,

Փորձի ավարտին «Ի՞նչ է գիտական աշխարհայացքը» և «Ի՞նչ է կենսաբանական համակարգը և ի՞նչ պատճառահետևանքային կապերի վրա է հիմնված այն» հարցերով դիմել ենք ստուգիչ և փորձական դասարաններին: Արդյունքը շոշափելի է: «Ի՞նչ է գիտական աշխարհայացքը» հարցին ճիշտ են պատասխանել 10-րդ դասարանի աշակերտների 76,6%-ը, իսկ 11-ում՝ 71,8%, ստուգիչում՝ 55,5% և 53,3%: Մեծ է նաև սխալ պատասխանող աշակերտների թիվը՝ մոտ երկու անգամ (աղ. 3):

*Աղյուսակ 3*

*«Ի՞նչ է գիտական աշխարհայացքը» հարցի պատասխանները 10-րդ և 11-րդ դասարաններում*

Հարց	Դասարաններ		Աշակերտների թիվը	Պատասխանները							
				Ճիշտ		Թերի		Խիստ թերի		Սխալ	
				Աշակերտներ	% + -	Աշակերտներ	% + -	Աշակերտներ	% + -	Աշակերտներ	% + -
Ի՞նչ է գիտական աշխարհայացքը	Փորձական	10	90	60	76,6	6	6,6	5	5,5	10	11,1
		11	90	65	71,8	5	5,7	3	3,5	17	18,8
	Ստուգիչ	10	90	50	55,5	15	16,6	7	7,8	18	20
		11	90	48	53,3	8	8,8	4	4,4	30	33,3

«Ի՞նչ է կենսաբանական համակարգը և ի՞նչ պատճառահետևանքային կապերի վրա է հիմնված այն» հարցին ճիշտ են պատասխանել 10-րդ դասարանի աշակերտների

84,4%-ը, իսկ 11-ում՝ 86,6%-ը, ստուգիչում 57,7 և 58,9%-ը: Այս հարցին սխալ պատասխանող աշակերտների թիվը փորձականի համեմատ 7-10 անգամ մեծ է (աղ. 4):

«Ի՞նչ է կենսաբանական համակարգը և ի՞նչ պատճառահետևանքային կապերի վրա է հիմնված այն» հարցի պատասխանները 10-րդ և 11-րդ դասարաններում

Հարց	Դասարաններ		Աշակերտների թիվը	Պատասխանները							
				Ճիշտ		Թերի		Խիստ թերի		Միսալ	
				Աշակերտներ	% + -	Աշակերտներ	% + -	Աշակերտներ	% + -	Աշակերտներ	% + -
Ի՞նչ է կենսաբանական համակարգը և ի՞նչ պատճառահետևանքային կապերի վրա է այն հիմնված	Փորձառն	10	90	76	84,4	8	8,8	4	4,4	2	2,2
		11	90	78	86,6	9	10	1	1,1	2	2,2
	Ստուգիչ	10	90	52	57,7	15	16,6	5	5,5	18	20
		11	90	53	58,9	17	18,9	6	6,6	14	15,5

Հետևաբար ուսուցման գործընթացում աշակերտների մտածողության զարգացման և գիտական աշխարհայացքի ձևավորման գործընթացում նպատակահարմար է կիրառել ինտեգրված կենսաբանական համակար-

գեր: Այլապես աշակերտների գիտելիքները կլինեն արագ մոռացվող հիշողությունների չաշխատող բեռ:

ՄԵԶԲԵՐՎԱԾ ԵՎ ՀՂՎԱԾ  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Դավթյան, Ն.Ն. (2011): Աշակերտների գիտական աշխարհայացքի ձևավորման հիմնախնդրի պրակտիկ վիճակը հանրակրթական ավագ դպրոցում «կենսաբանություն» առարկայի ուսուցման պրոցեսում, Ստեփանակերտ, Կրթությունը և գիտությունը Արցախում:
2. Դավթյան, Ն.Ն. (2010): Ուսուցիչների և աշակերտների հարցման արդյունքները կենսաբանության ուսուցման գործընթացում գիտական աշխարհա-

յացքի և համակարգերի դերի մասին, Ստեփանակերտ, ԱրՊՀ տեղեկագիր:

3. Թանգամյան, Տ.Վ. (2002): Կենսաբանության դպրոցական դասընթացի համակարգված ուսուցման տեսությունն ու պրակտիկան, Երևան, Դոկտ. ատենախոսություն:
4. Թանգամյան, Տ.Վ. (2011): Կենսաբանության ինտեգրված համակարգերի դերը աշակերտների մտածողության զարգացման և գիտական աշխարհայացքի ձևավորման գործընթացում, Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ (միջբուհական կոնսորցիումի գիտական հանդես), Երևան, № 3:



5. Թանգամյան, Տ.Վ. (2004): «Կենսաբանության ուսուցման գործընթացում համակարգային մոտեցման կարևորությունն ու փիլիսոփայական իմաստավորումը», Գիտամեթոդական վերլուծական ամսագիր, ՀՀ ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտ, Երևան, №3 :
6. Թանգամյան, Տ.Վ., Դավթյան, Ն., Ուզունյան, Բ. (2011): Կենսաբանական համակարգեր: «Էդիթ Պրինտ», Երևան:
7. Богомолова, А.А. (2006). Системный подход к изучению мира живой природы в курсе биологии 6-7 классов общеобразовательной школы. Автор. канд. пед. наук, Москва.
8. Залеский, Е.Е. (1994). Психология формирования мировоззрения и убеждений личности. Москва, Изд. МГУ.
9. Каропа, Г.Н. (1994). «Системный подход к экологическому образованию и воспитанию». Минск
10. Карпинская, Р.С. (1980). Биология и мировоззрение. Москва, «Мысль».
11. Комиссаров, Б.Д. (1991). Методологические проблема школьного биологического образования. Москва, "Просвещение".
12. Магомедова, А.М. (2001). Формирование основ научного мировоззрения у выпускников основной общеобразовательной школы: Автор. дис. на сис. уч. сост. канд. пед. наук, Ставрополь.
13. Морозова, М.И. (2004). Формирование научного мировоззрения у учащихся при обучении общей биологии. Дисс. на сос. уч. степ. канд. пед. наук. Санкт-Петербург.
14. Пивоварова, Л.В. (2009). Теория и технологии формирования биологической грамотности на Интегративной основе. Автор дисс. На соиск. уч. степ. доктора пед. наук. Ростов на Дону.
15. Реброва, Л.В., Калинова, Г.С. (1989). Формирование научного мировоззрения школьников на уроках биологии. Сб. науч. тр., АПНСССР, Москва.
16. Реншетов, З.А. (2002). Формирование системного Мышления в обучении. М., ЮНИТИ. ДАПАСиземская И.Н. (2001) Мировоззрение как ценность образования. "Педагогика", № 1.
17. Тангамян, Т.В. (2006). «Философские аспекты роли биологических систем в учебном Процессе», Вестник МАНЭБ, том 11, №8.
18. Фаминых, Ю.Ф. (1993). Интегративный подход к формированию мировоззрения школьников. "Педагогика", № 4.

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ  
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ  
ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ

ԱՄՓՈՓՈՒՄ

Անհատի և հասարակության զարգացման, մարդ և բնություն փոխհարաբերության, բնական երևույթների և օրինաչափությունների բացահայտման, դրանց պատճառահետևանքային կապի գիտական և ճիշտ ընկալման, գնահատման և գործնականում կիրառման, գիտական աշխարհայացքի ձևավորման գործում շատ կարևոր է բնական գիտությունների դերը:

Հանրակրթական դպրոցում գերակայում է ուսուցման առարկայակենտրոն մոդելը: Բնական երևույթները չեն մեկնաբանվում կազմավորվածության համակարգված և պատճառահետևանքային կապի սկզբունքով, որը հանգեցնում է բնագիտական առարկաների համակարգում լուրջ և դիսկրետ գիտելիքների ձևավորմանը, ինչը նվազեցնում է բնական գիտությունների, այդ թվում նաև կենսաբանության, աշխարհայացքային ֆունկցիան:

Կենսաբանական այս կամ այն երևույթը ավելի հեշտ է յուրացնել և հիշել համակարգում, քան մեկուսացված: Բնության ամբողջականության ընկալման կարևոր ուղիներից է երևույթների պատճառահետևանքային կապի բացահայտման համակարգված բնույթը և դրանց փիլիսոփայական մեկնաբանությունը:

Աշխատանքում վերոնշյալ սկզբունքով մեկնաբանվել է կենսաբանության դերը աշակերտների մտածողության զարգացման և գիտական աշխարհայացքի ձևավորման գործընթացում:

*Հանգուցային հասկացություններ.* Կենսաբանական համակարգեր, փիլիսոփայություն և կենսաբանություն, աշխարհայացք, մտածողություն, նյութափոխանակություն, բնության կենդան և անկենդան բաղադրիչներ, ֆոտոսինթեզ և շնչառություն:

THE ROLE OF BIOLOGY IN THE PROCESS OF THE  
DEVELOPMENT OF SCHOOL STUDENTS' THINKING AND SCIENTIFIC OUTLOOK  
FORMATION

SUMMARY

A particular biological phenomenon is easier to digest and remember in the system, rather than isolated. Separation of internal and external systems, the neglect of their unity has a negative impact on identification of many biological systems. One of the important ways of knowing the integrity of nature is the systematic identification of causal relationships between events and philosophical interpretation of biological systems.

*Key concepts:* biological systems, Philosophy and Biology, world view, thinking, metabolism, animate and inanimate components of nature, photosynthesis, breathing. biological systems, Philosophy and Biology, world view, thinking, metabolism, animate and inanimate components of nature, photosynthesis, breathing.

## ՀԱՍՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Բազմաթիվ վկայություններ կան այն մասին, թե ինչպես են ռուս հասարակության տարբեր շերտեր վերաբերվել առաջին աշխարհամարտին: Պատմաբանների մեծ մասի պնդմամբ տեղի է ունեցել ազգային գիտակցության վերելք, որը տարածվել է ողջ երկրով և ընդգրկել է ռուս հասարակության բոլոր շերտերը: Հանրության տարբեր խավերի ներկայացուցիչներ գորակոչվում էին ծառայության հանուն հայրենիքի, իսկ շատ մեծահարուստներ կատարում էին նվիրատվություններ երկրի փրկության համար: Անգամ կայսրուհին արքայադստրերի հետ աշխատում էր ռազմական հոսպիտալում որպես բուժքույր (Уткин 2000: 12):

Խորհրդային պատմագրությունը պատերազմը որակել է որպես թալանչիական և նվաճողական, ուստի և՛ անարդարացի: Նրանք գտնում էին, որ հասարակությունը դեմ է եղել պատերազմին և իր վերաբերմունքը ցույց է տվել պատերազմի հենց սկզբից: Այսուհանդերձ, պատերազմի նկատմամբ ռուսաց հասարակության տարբեր խավերի վերաբերմունքի հիմնախնդրում խորհրդային պատմագրությունը միակարծիք չէ:

Խորհրդային պատմաբանների մի մասը պնդում էր, թե եղել է հակասություն կառավարության աջ թևի ներկայացուցիչների և ազատական-ժողովրդավարական թևի ներկայացուցիչների միջև: Որոշ աշխատանքներում ներկայացվում է, որ պատերազմի նկատմամբ առավել ագրեսիվ էին տրամադրված առաջին խմբի ներկայացուցիչները, իսկ մյուս մասը զբտնում էր, որ ավելի շատ

նվաճողական տրամադրություն ունեին լիբերալ բուրժուական շրջանները՝ մասնավորապես կադետները, կապված Կ. Պոլսի և նեղուցների հետ: Խորհրդային պատմաբան Վ. Ս. Վասյուկովի կարծիքով էլ ցարական իշխանությունների և բուրժուական շրջանների միջև ոչ մի ռազմաքաղաքական հակամարտություն չի եղել, պարզապես երկու կողմում էլ եղել են տարակարծություններ: Իսկ հիմնական հարցերում, ըստ նրա, նրանց բոլորի կարծիքները համընկնում էին (Восюков 1966: 3-5):

20-րդ դարասկզբի Ռուսաստանի ներքաղաքական իրավիճակի վերաբերյալ գնահատականը մեր օրերում լիովին փոխվել է նորագույն հետազոտողների ուսումնասիրությունների շնորհիվ: Այժմ պատմաբաններին անհանգստացնում է այն հարցը, թե պատերազմի տարբեր փուլերում ինչպեսի՞ն է եղել հասարակության վերաբերմունքի փոփոխության դինամիկան և փորձ է արվում սպառիչ պատասխաններ տալ, ինչու և ինչպես պատերազմի սկզբում համազգային ոգևորություն ապրող հասարակությունը ընդամենը երկու տարվա ընթացքում կերպարանափոխվեց և հրաժարվեց համազգային համերաշխությունից և միասնությունից:

Գերմանիայի կողմից Ռուսաստանին պատերազմ հայտարարելը երկրում առաջացրեց հայրենասիրական մեծ պոռթկում: Մայրաքաղաքում և մյուս խոշոր քաղաքներում տեղի ունեցան բազմահազարանոց ցույցեր և հանրահավաքներ, որոնք ընթա-

նում էին հետևյալ՝ «Պատերազմ, մինչև հաղթական ավարտ» կարգախոսով: Այս հանրահավաքներն ու ցույցերը ուղեկցվում էին հակազերմանական գործողություններով, որի ընթացքում Պետերբուրգում ավերվեց գերմանական դեսպանատունը և այլն (Политические партии и общество в России 1914-1917 2000: 196-198):

Հակազերմանական տրամադրություններն իրենց արտահայտությունը գտան մայրաքաղաքի անվանափոխությունում՝ Պետերբուրգը վերանվանվեց Պետրոգրադի: Փակվեցին գերմանական թերթերը, գերմանական ազգանուն կրող մարդկանց հանդեպ առաջացավ հակակրանք և անհանդուրժողականություն: Ժողովրդական զանգվածներին հայրենասիրությամբ ոգևորելու համար պատերազմն անվանվեց «Երկրորդ Հայրենական»: Քարոզչական պատերազմում Գերմանիային ներկայացվում էր որպես ռուսաց պետականությունը կործանող, ռուս ժողովրդին բնաջնջող և ստրկացնող պետություն (Кузьмин-Караваев 1914: 417-423):

Հուլիսի 26-ի Պետդումայի մեկօրյա նըստաշրջանում որոշում ընդունվեց (բացառությամբ սոցիալ-դեմոկրատներին) մի կողմ դնել գաղափարական և միջկուսակցական պայքարը և միավորվել հայրենիքի պաշտպանության սուրբ գործի շուրջ: Ներդաշնակ միասնությանը խոչընդոտում էին միայն սոցիալ-դեմոկրատները, որոնք կոչ էին անում «Հաստատել խաղաղություն աշխարհի բոլոր աշխատավոր ժողովուրդների միջև»: Արմատական ընդդիմադիր կեցվածք ունեին հատկապես բոլշևիկները, որոնք ոչ միայն ընդդիմանում էին պատերազմին, այլև առաջ քաշեցին սեփական երկրի կառավարության պարտության և իմպերիալիստական պատերազմը քաղաքացիականի վերածելու քարոզությունը:

Սակայն համընդհանուր ոգևորության և ազգային ինքնագիտակցության վերելքի պայմաններում, որը տիրում էր պատերազմի առաջին շրջանում, բոլշևիկների դիրքորոշումը ոչ միայն հաջողություն չունեցավ այլև զգալիորեն զցեց նրանց քաղաքական վարկանիշը (Федоров 2008: 447-448):

1914 թ. օգոստոսի 2-ին առավոտյան Նիկոլայ Երկրորդը հատուկ հրամանով ազդարարեց ռազմական գործողություններ սկսելու մասին: Ցարական պալատի առջև հավաքվել էին հազարավոր մարդիկ, որոնք եկել էին ցարի կոչը լսելու համար: Նրանք երգում էին պետական հիմնը, ամենուրեք հնչում էր «Աստված, պահպանիր Ցարին» (Масси 1996: 311-317):

Պետերբուրգում ամեն օր տեղի էին ունենում ցույցեր ի պաշտպանություն կայսեր և դաշնակիցների: Ֆրանսիական դեսպանատան պատուհանից դեսպան Ս.Ս.Պալեոլոգը մեծ ոգևորությամբ հետևում էր, թե ինչպես ժողովուրդը դրոշներով և սրբապատկերներով դուրս է եկել հանրահավաքի՝ հնչեցնելով «Փառք ֆրանսիային» կարգախոսը: Ս. Ս. Պալեոլոգը նկարագրում է, թե ինչպես ցուցարարները ծածանում էին երեք դաշնակից պետությունների դրոշները և հանդես էին գալիս միասնության կոչերով (Paleolog 1991: 188-189):

«Հանուն հավատի, հանուն Ցարի և Հայրենիքի» և «Ի պաշտպանություն սուրբ Ռուսիայի» կոչերը համակել էին ողջ ազգաբնակչությանը: Ա. Կերենսկին հիշում է, որ ի տարբերություն ռուս-ճապոնական պատերազմի, ժողովուրդը Գերմանիայի դեմ պատերազմը ընդունեց որպես գոյության կոիվ, որտեղ դրված էր Ռուսաստանի լինել չլինելու հարցը (Керенский 1993: 66-70):

1914-1918 թթ. պատերազմի ժամանակ ժողովրդի և երկրի առջև դրված հիմնական

խնդիրն էր. նախ՝ երկրի պաշտպանության ապահովումը, ապա՝ պատերազմը հաղթական ավարտի հասցնելը: Իշխանություններն ունեին իրենց ռազմական նպատակները, որի համաձայն պետք է ամրապնդվեին Ռուսաստանի դիրքերը: Պ.Միլյուկովն իր հուշերում գրում է, որ իրենց նպատակն է եղել ժողովրդական զանգվածներին ցույց տալ, որ պատերազմը չի սկսվել Ռուսաստանի ցանկությամբ, այլ պարտադրվել է թշնամու կողմից: Այս հենքով էլ կաղետները փորձել են բարձրացնել պատերազմի դերն ու նշանակությունը ռուսաց հասարակության համախմբման գործընթացում:

Սակայն ռուսաց հասարակության և քաղաքական շրջանակներում տեղի ունեցան արմատական փոփոխություններ՝ կապված պատերազմի հաղթական ավարտի հետ հատկապես «Մեծ նահանջ»-ից հետո: Գաղափարաքաղաքական միասնության ներդաշնակությունը, որը իշխում էր պատերազմի առաջին օրերին, իրականում այնքան էլ երկար չտևեց: «Մեծ նահանջ»-ի ընթացքում ժողովրդական զանգվածները աստիճանաբար փոխում էին իրենց վերաբերմունքը բանակի և կառավարող շրջանների նկատմամբ: Ջենքի և զինամթերքի պակասը, ցուրտը և պարենամթերքի մատակարարման խափանումները էապես նպաստեցին տրամադրվածության անկմանը: Սակայն, եթե զինվորական կարգապահության շնորհիվ ռազմաճակատում գորքը, այնուամենայնիվ, պահպանում էր իր ռազմունակությունը, ապա թիկունքում պատկերը այլ էր՝ շնորհիվ ընդդիմադիր ուժերի և առաջին հերթին բոլշևիկների կոչերի: Պատերազմը չափազանց ծանր բեռ էր ողջ երկրի բնակչության համար: Բանակ գորակոչվեց աշխատունակ բնակչության մեծ մասը, որն իր ազդեցությունն ունեցավ տնտեսության անկման վրա:

Հայրենասիրական պաթոսը մարեց և բնակչության համար պատերազմը կորցրեց իր սկզբնական նշանակությունը՝ որպես հայրենական: Մեծ վերելքով սկսված գորակոչը սկսեց դանդաղել: Ջինվորն այլևս պատերազմի դաշտ էր մեկնում մահվան դատապարվածի հոգեբանությամբ, այլ ոչ թե հայրենիքը պաշտպանելու և հաղթելու վճռականությամբ: Պատերազմում կրած անհաջողություններն ավելի էին սրում երկրի ներքին դրությունը, ինչը ևս հող էր նախապատրաստում հակապատերազմյան գաղափարների տարածման համար: Այս ամենը իր արտացոլումը գտավ նաև Դումայում: 1915թ. Հուլիսի 19-ին բացված նստաշրջանում կաղետների ընդդիմադիր շարքերին էին հարել նաև կենտրոնական ուժերը (Օկոյաբրիստներ, պրոգրեսիվիստներ), ինչպես նաև ազգայնական ուժերը: Դրությունը ավելի շիկացավ, երբ ցարը փոխարինեց գորքերի գլխավոր հրամանատար Նիկոլայ Նիկոլանիչին՝ ողջ հրամանատարությունը կենտրոնացնելով իր ձեռքում: Դա առաջացրեց կառավարական ճգնաժամ, որի արդյունքում ութ նախարար հրաժարական տվեց:

1916թ. նոյեմբերի մեկին՝ Պետդումայի նստաշրջանի բացման օրը, կաղետների ղեկավար նույն Պ.Ն. Միլյուկովը, որը 1914թ. կոչ էր անում միավորվել ցարական կառավարության շուրջը, ընդամենը երկու տարի անց հանդես եկավ մի բոցաշունչ ճառով, որտեղ առաջ էր քաշում բազմաթիվ մեղադրանքներ՝ ղեկավարության հասցեին. կապ «գաղտնի ուժեր»-ի հետ, Գերմանիայի հետ գաղտնի կապեր, ուժերի ոչ ճիշտ օգտագործում և այլն (Милюков 1991: 157-162): Յուրաքանչյուր մեղադրանքից հետո հռետորը իր խոսքն ավարտում էր հետևյալ հարցադրմամբ՝ «Ի՞նչ է սա, հիմարություն, և

թե՞ դավաճանություն»: Միլյուկովի ճառը մեծ պայթյուն առաջացրեց ոչ միայն Դումայում այլ նաև ողջ երկրում: Արդեն նայեմքերին ընդդիմադիր կեցվածք ընդունեց նաև պետական խորհուրդը: «Գաղտնի ուժեր»-ի հետ համագործակցության գաղափարը գնալով երկրում ավելի շատ էր տարածվում և խորացնում էր ընդդիմության և ցարական իշխանության հարաբերությունները: Նիկոլայ Երկրորդին համոզում էին ազատվել Ռասպուտինից, որպեսզի ցրեն «մութ ուժերի» հետ ցարական ընտանիքի կապի կասկածը: Բայց այդ հորդորները արդյունք չտվեցին և Բարձրաստիճան որոշ պաշտոնյաներ ձեռնարկեցին Ռասպուտինի սպանությունը (1916 թ. Դեկտեմբերի 16-ին):

Պատերազմի առաջին օրվանից սկսած ռուսաց հասարակության վրա մեծ ազդեցություն է ունեցել նաև մամուլը, որը սկզբի օրերին լցված էր հայրենասիրական մտքեր արտահայտող հոդվածներով և կոչերով: Այնուամենայնիվ ոստիկանությունը պատերազմի առաջին օրվանից սկսած հատուկ հսկողություն սահմանեց մամուլի վրա, որպեսզի չտպագրվեն սարսափազդու երևույթների մասին նյութեր և այլ արատավոր տեղեկություններ (Измозик 1997: 156): Մամուլի վրա հսկողությունը ծանր հետևանքներ ունեցավ հեղափոխական ուժերի համար և նրանք պատերազմի սկզբնական շրջանում բավականին թուլացան:

Պատերազմի առաջին ամիսներին ոստիկանությունը Պետրոգրադում փակեց մի շարք հասարակական, քաղաքական, մշակութային հաստատություններ, որոնց մեծ մասը կադետական և սոցիալ-դեմոկրատական թերթերի խմբագրություններ էին: 1915թ. փետրվարից մինչև հուլիս ամիսը Պետրոգրադում ձերբակալվեց 118 բոլշևիկ, որոնք աշխատում էին տարբեր թերթերի

խմբագրություններում և փորձում էին իրականացնել ղեկավարների պատվերները (Меницкий 1925: 125-127, 244-246): Չնայած այս ամենին՝ հեղափոխական ուժերին հաջողվեց շարունակել տպագրական անօրինական գործունեությունը: Դա հատկապես ակտիվորեն շարունակվում էր Սիբիրում, որտեղ շատ կադետներ և սոցիալ դեմոկրատներ հանդես էին գալիս իրենց հոդվածներով տարբեր թերթերում և ամսագրերում: Չարտոնագրված թերթերի խմբագրությունների նկատմամբ մեծամասշտաբ ձերբակալություններ իրականացվեցին 1915 թ. վերջերին, սակայն դա էլ լիովին չկանխեց երևույթի տարածումը: Որոշ հեղափոխական թերթեր սկսեցին գործել արտասահմանում և այստեղից սկսեց ներմուծվել մեծ քանակությամբ խմբաքանակ դեպի Ռուսաստանի տարբեր խոշոր քաղաքներ (Сочовская 1978: 92-93, 107-108): Մամուլի միջոցով հեղափոխական ուժերը տարածում էին ապատեղեկատվություն և հաճախ ժողովրդական զանգվածներին ահաբեկում սխալ տեղեկություններով: Իսկ որոշ հեղափոխականների կարծիքով Ռուսաստանը կանգնած էր անդունդի եզրին և միայն ժողովուրդը կարող էր փրկել նրան, եթե միավորվեր և աջակցեր հեղափոխական ուժերին: Այս տեսանկյունից ուշագրավ է կադետ Վ. Ս. Միլյուկովի հոդվածը տպագրված 1915 թ. սեպտեմբերին «Русское ведомство»-ում, որտեղ նա խոսում էր մեծ արագությամբ շարժվող ավտոբուսի մասին, որը չունեք վարորդ և նկարագրում էր ուղևորների խղճուկ վիճակը: Պարզ է, որ սա ուղղված էր անմիջապես Նիկոլայ Երկրորդին, սակայն սա գաղափարական և հոգեբանական բացասական մեծ ազդեցություն ունեցավ երկրի միավորման վրա, քանի որ եթե հասարակությունը չունի ղեկավար ապա պարզ չէ նրա ճակա-

տագիրը և սրանով ընկնում էր ցարի հեղինակությունը հասարակության շրջանում (Авреха 1987: 39-40): Դեռևս 1915 թ. օգոստոսի 11-ին տեղի ունեցած մինիստրների Խորհրդի խորհրդակցության ժամանակ Ս.Լ.Գորեմիկինը անհանգստանում էր, որ դեռևս շարունակվում է «սուտը թերթերում տպագրվել» և այդ ամենը օրեցօր փոխում է հասարակության կարծիքը և բացասական տրամադրվածությունը դեպի ղեկավարությունն ավելի է ուժեղանում երկրում: Օգոստոսի 18-ին Պետրոգրադի շրջանի գործերի գլխավոր հրամանատար Պ.Ա.Ֆլորովը առաջարկեց, որ թույլ տան իրեն ձերբակալելու որոշ թերթերի խմբագիրների, որոնք հեղինակություն են վայելում հեղափոխականների շրջանում: Ըստ նրա այս քայլը կստիպեր հեղափոխական ղեկավարներին լռել: Օգոստոսի 24-ին այս առաջարկը դրվեց քննարկման մինիստրների խորհրդի կողմից: Այստեղ Գորեմիկինը, կողմնակից լինելով հիշյալ առաջարկին, հիշեցնում էր, որ ցարը դեռևս 1906 թ. ասել է «...պետք չէ հեղափոխության վտանգով լի ժամանակահատվածում չարություն կիրառել տպագրության և մամուլի նկատմամբ, պետք է գործել միայն օրենքի սահմաններում և չթողնել, որ հասարակությունը բաժանվի մի քանի մասի»: Չնայած ծավալված երկխոսություններին՝ մինիստրների խորհուրդը մերժեց այդ առաջարկը (Госцен 1993: 64-65, 75-76, 78, 105):

Ցարական իշխանությունների գոյության վերջին ամիսներին մամուլը, առավել քան առաջ էր, կենտրոնակ դարձավ իրականացնելու հեղափոխականների ծրագրերը: Մոսկովյան պարետային ծառայության պետի 1916 թ.-ի հոկտեմբերի 23-ի հաշվետվության մեջ նշվում է, որ մամուլը մեծ դեր է խաղում ղեկավարության հեղինակագրկման և հասարակությանը նրա դեմ տրամա-

դրելու գործում: Թերթերը ըստ նրա «ստեղծում են տպավորություն, որ ամեն ինչ քանդվում, կործանվում, թալանվում է և ոչ ոք չի պատժվում երկրի կողոպտման համար: Իսկ կենտրոնական և տեղական ղեկավարությանը մեղադրում են թալանողներին և կողոպտողներին քողարկելու մեջ, որոնց պետությունը իբրև համարում է ժողովրդի բարեկամներ»: Ըստ նշված հաշվետվության ահաբեկչական աստիճանի է հասել «Русское слово» թերթը (Figes 1999: 20):

Մինչև իր գոյության վերջին ամիսները ցարական իշխանությունը բազմաբնույթ միջոցառումներ կիրառեց, փորձելով կանխել մամուլում տպագրվող հակակառավարական նյութերը: Սակայն սա չէր ազդում լրագրողների վրա նրանց արգելելու տեսանկյունից: Մամուլի միջոցով հեղափոխական ղեկավարները արդեն կարողացել էին վստահեցնել ժողովրդական զանգվածներին, որ պատերազմը թալան է և կողոպուտ, իսկ ցարական իշխանությունները չեն կարող հաղթել պատերազմում (Figes 1999: 22, 27):

Ռեզոլյուցիայի ևս դրությունը գնալով վատթարանում էր, քանի որ ռուսական զորքը կրում էր ծանր պարտություններ և բանակում տիրում էր տրամադրվածության անկում ու օր առաջ պատերազմն ավարտելու ցանկություն էր առաջանում: Իսկ բոլշևիկները օգտվելով դրանից ավելի ակտիվ սկսեցին գործել զորքի շրջանում: Բանակ զորակոչվեցին նաև նրանց գաղափարները կրող զինվորներ և սպաներ, որոնք ավելի արագացրեցին զենքը սեփական իշխանության դեմ ուղղելու գործընթացը: Այս ամենն էլ հող նախապատրաստեց նախ փետրվարյան, ապա հոկտեմբերյան հեղաշրջման իրականացման համար: Այս ամենի արդյունքում երկիրը հայտնվեց ռազմաքաղաքական բարդ իրավիճակում և ստիպված Գեր-



մանիայի հետ կնքեց ոչ շահավետ Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը և կատարեց զգալի զիջումներ ու դուրս եկավ պատերազմից: Փաստորեն, կարող ենք ասել, որ նախքան փետրվարյան և հոկտեմբերյան իրադարձություններն ռուս հասարակությունը և ցարական իշխանությունները ոչ միայն միմյանցից օտարվել էին, այլև ինչ-որ չափով սեփական երկրում թշնամացել էին միմյանց հանդեպ: Հասարակությունը ցանկանում էր ազատվել պատերազմից և չէր էլ պատկե-

րացնում, թե արդյո՞ք լավ կլինի, եթե բոլշևիկները գան իշխանության. նրանց համար տվյալ պահին պետք էր այլ ուժ, որը վերջ կտար այդ իրավիճակին: Եվ այդ պահին հասարակությունը սատարեց բոլշևիկներին, որոնք էլ, գալով իշխանության, հասարակության համար ոչ միայն չապահովեցին խոստացված պայմաններ այլև հրաժարվեցին իրենց խոստումներից և ավելի վատթարացրին ազգաբնակչության վիճակը:

#### ՄԵԶԲԵՐՎԱԾ ԵՎ ՀՂՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Авреха, Я. (1987). Документы Департамента полиции как источник по изучению либерально-оппозиционного движения в годы первой мировой войны, № 6. Москва, История СССР.
2. Госсен, И.В. (1993). Архив русской революции. Т. 18. Москва.
3. Бережной, А.Ф. (1967). Царская цензура и борьба большевиков за свободу печати (1905 - 1914). Ленинград.
4. Восюков, В.С. (1966). Внешняя политика Временного правительства. Москва.
5. Уткин, А.И. (2000). Россия в первой мировой войне. Смоленск.
6. Политические партии и общество в России 1914-1917гг. (2000). Сбор статей и документов. Москва.
7. Кузьмин-Караваев, В. Д. (1914). Вопросы внутренней политики. Вестник Европы. N8. Москва.
8. Федорова, В.А. (2008). История России 19 век. начало 20 век. Москва.
9. Масси, Р.К. (1996). На зашиту Святой Руси /Николай и Александр/. Москва.
10. Палеолог, М.Ж. (1991). Царская Россия во время мировой войны. Москва.
11. Керенский, А.Ф. (1993). Россия на историческом повороте. Мемуары. Москва.
12. Милюков, П.Н. (1991). Как принята была война в России?/Воспоминания/. Москва.
13. Измозик, В.С. (1997). Первые советские инструкции по перлюстрации. Минувшее. 21. Москва.
14. Меницкий, И. (1925). Революционное движение военных годов (1914 - 1917), Москва.
15. Сосновская, Л.П. (1978). Ссылка и общественно-политическая жизнь в Сибири (XVIII - начало XX в.). Новосибирск.
16. Figes O. (1999). Interpreting the Russian Revolution. New Haven - London.

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ  
ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

ԱՄՓՈՓՈՒՄ

Պատմական, քաղաքական ծավալ ունեցող որոշակի դեպքերն ու դեմքերը կարող են հասարակական նոր փոխակերպումների պատճառ հանդիսանալ: Ասվածը հավասարապես վերաբերում է նաև Առաջին Աշխարհամարտի տարիներին ռուսաց հասարակությանը: Այդ պատերազմը հասարակական տարբեր շերտերի կողմից միանշանակ չընդունվեց և միննույն գնահատականին չարժանացավ: Ռուս հասարակությունը սկզբում այն ընդունեց որպես Երկրորդ Հայրենական պատերազմ և միահամուռ կերպով փորձեց պաշտպանել երկիրը: Իսկ հեղափոխական ուժերը օգտագործելով պատերազմի հետևանքով առաջացած տարաբնույթ դժվարությունները, ժողովրդական լայն զանգվածներին կարողացան տարբեր ճանապարհներով հեղափոխել և դուրս բերել ցարական իշխանությունների դեմ: Հաջողության գրավականը ժողովրդին բարեկեցություն և խաղաղություն խոստանալն էր, որն անգամ հեղա-

փոխության հաղթանակից հետո չիրականացավ:

Խորհրդային պատմագրությունը ցարիզմի տապալումը վերագրում էր միայն բոլշևիկներին: Մինչդեռ նորագույն հետազոտողները, նորահայտ և հրապարակված արխիվային նյութերը վկայում են, որ ցարիզմի տապալման և բոլշևիկների հաջողությունների մեջ մեծ դեր է խաղացել ժամանակի մամուլը: Հենց այդ մամուլի միջոցով կազմակերպված ամենօրյա քարոզչության արդյունքն էլ հասարակությանը ենթարկել է որոշակի փոխակերպումների:

*Հանգուցային հասկացություններ.* ռուս հասարակություն, հակազերմանական տրամադրություններ, ժողովրդական զանգվածներ, օկտյաբրիստներ, բոլշևիկներ, իմպերիալիստական պատերազմ:

## THE FIRST WORLD WAR AND RUSSIAN SOCIETY

### SUMMARY

This article introduces Russian relationships and political part's attitude about the First World War. Existing sources show that from the very beginning of the War population were into the government. But making some great mistakes the government raised great amount of people against them, people who were tired of wars and wanted to end it.

All these also forced by social-democracy especially bolsheviks, who used population's displeasure and realized tsarizm fall.


*Key concepts:* russian society, contragerman moods, national masses, oktobrists, bolsheviks, imperialistic war.

## CIVILIZATION – PROGRESSION OR REGRESSION?

Can you imagine life back then living in a cave without civilization? Human beings went through the complex process stated evolution. Then, the evolutionary process was followed by the civilization and also globalization. Nowadays as civilized creatures of our contemporary earth let us take a pause and ask ourselves: what will the result of this civilization and modern world be? Although civilization has had a positive impact upon the modern world a lot of things at some point went wrong and we are not absolutely good at every aspect of our lives.

It's obvious that every human being knows about Darwin's theory of Evolution, which brought the idea that our life is related

and has progressed from a common ancestor: that complex creatures developed from more simplistic ancestors naturally over time. So, according to Darwin's theory homo sapience, – the reasonable man, genetically comes from the sort of apes and we members of the contemporary world are the only homo genes that survived through history (Darwin, 1859). Now, let's look at the Figure 1, which precisely shows the evolution of human kind. From the first sight it may seem quite abrupt to see a pig at the end, but let's analyze why the painter put it there. We see the starting of human race from ape-to-human, then the stages of development.




**Figure 1. Freud on Evolution**

This picture has much deeper meaning rather than it can initially seem to have. It shows even the technological development of the world – if the early type of homo sapience is holding an arrow as a weapon, the later one is already using a powerful gun. These perhaps are the positive sides of the picture, the technology really made some things easier for people. But let's move on. We see a fat man eating and holding a package which reminds and supposes to contain fast food. This actual-

ly shows the greediness of human kind and the result of it will be becoming a “pig” or already being a “pig”. So what? We are civilized, we became thinking creatures, and the advanced technology makes our lives more “pleasant” and easier. But is that what we actually were supposed to become? This civilization has caused a great gap between man and nature, which existed long before it. All we do is destroy and pollute the nature that our grand ancestors lived in. For me even the

background color of the picture symbolizes the separation from the nature – a dark polluted green color. So, the picture depicts about


the great problem of our times – we are far away from nature and are becoming day by day.



**Figure 2. Entertainment: The Evolution of Life Skills**

Now next let's look at the Figure 2, which again looks like those pictures showing the human evolution, but with a different ending. Again, at first, we see apes evolving into modern human beings. The main focus of the picture I find in technology. In the picture it is clearly shown how the weapons changed during time periods of human development. This progress of the technology is ongoing. Of course I can never imagine my life without these modern equipments, but the way equipment takes us may insinuate new situations the results of which can be adverse and incorrigible. Isn't this ongoing process again about human greediness? The more we achieve the more we want. Where is the end? Is there a predictable end? The picture suggests how catastrophically the contemporary human being comes close to the shape of the

ape. This precisely witnesses the adverse effects of technological development and how it causes degradation of human relations. If the first picture was focused on human and nature separation this one is more focused on not only human – human separation, but also the separation of people from their own spiritual essence. In the picture we see both regressive and progressive sides of civilization. It shows how the modern technology makes people live easier, feel safe and sound and at the same time causes degradation, separation and transformation from humans to robots. However, these kinds of problems that occur in our society and humanity have not yet destroyed us at all. Yet, we are only the slaves of technology until we become a "technology" ourselves.



**Figure 3. Columnists: If robots divide us they will conquer**

This picture is one of the Ingram Pinn's cartoons, that makes much more sense than it can seem to. A man sitting in the shape of "ape" kills his time without even noticing the monsters that he has made. The Figure 3 is kind of the result of the Figure 1 and 2. It represents the final degradation that can be caused because of human greediness and ignorance. An ardent wish to progress more and more makes people blind and they do not notice the harmful side effects of ongoing progression. If we are not yet cyborgs or robots at all, this picture shows how inconspicuously we can become so and realize that only when it would be too late to prevent humanity from being destroyed. We live in a world of chances. The modern technologies and equipments could be a great path for creating a successful and perfect society, but the problem is that we don't know how to use the chances given. Moreover, we constantly regress, without taking a retrospective look, without thinking about recovery. It is in the nature of human being to take everything for granted. We do need to think more about Aristotle's theory of golden mean, where he explains the development, nature and origin of virtues, which are mandatory for achieving happiness and the eventual goal. All of the problems appear because we cannot find that "golden mean" and create a balance between progression and regression. Nowadays, professionals and scientists are producing robot nannies, waitresses, toys that can serve people very effectively. In some countries there also appeared cars that need no driver to be driven. What is this? A robot nanny that can take care of the child while the parents are away. Why don't we think about the consequences? Maybe we later will just make a robot of ourselves so that they can do the entire work instead of us and we will just become

"couch potatoes". By the help of this cartoon Ingram Pinn tries to raise awareness and encourage people to analyze every single aspect of their lives and start a recovery until it's not too late.

The problems of human progression, evolution and civilization are also revealed in a lot of movies. Godfrey Reggio directed an experimental film which is called: ***Powaqqatsi: Life in Transformation***. The film has no dialogue and focuses on the traditional ways of life versus the new ones. The name *Powaqqatsi* itself means: "parasitic way of life" or "life in transition" (Goodfrey-Reggio/ Powaqqatsi Review, 2013-2014). The film is both observational and critical. It reflects the diversity of traditions and modes of transition across the globe and perhaps accepting the inevitable pull of Western-style concepts and products both good and bad. The music is dynamic and seems to have a warning mood. The film starts with early ages when people were used to work in plants and develops to nowadays. It clearly shows the arrival of the civilization and the effects of it, how the fabrics and immense constructions of our modern cities pushed out the nature from our daily lives. This quotes us back to our pictures. As the world is becoming more and more civilized and modern the nature is getting less and less important. Reggio very effectively used the music of the film and scenes that make the watcher think deeper and analyze his or her life. It has a great warning message that is aiming to prevent humanity from becoming or recovering from "pig" and "ape" shapes.

Both the pictures and the movie illustrate that human beings have not been stuck in the same place. They moved, they progressed and to bring into discussion the Plato's "Allegory of the Cave" human beings stepped outside of the cave. But let us think about it,

where did the way from the cave to the contemporary world bring us? Our human race was not afraid to leave the cave and see what's there outside of the cave. We stepped out made a civilized world but where are we going now? How can we make sure that from

that "cave" we didn't pass to another one? Let us look at this case from Einstein's point of view. This figure 4 is made according to his saying: "I do not know with what weapons World War III will be fought, but



Figure 4. World War IV – Einstein

World War IV will be fought with sticks and stones" (Einstein, 1949). We see in the picture how our contemporary world is being destroyed by the same weapons that humans themselves made. And then after it we see that the Darwin's Evolution starts over. To go deeper into the meaning of this quote we see that the danger that the human race could fade away, existed even back then in 1949s. Isn't this all about going back to the Plato's cave? We have created a reality which can eventually destroy us. So, the new inhabitants of our Planet that would be later on already developed men of reason will have to start everything from nothing – from a new "cave age". The human sins and greediness

will actually absolutely destroy the world if we won't find a way to get everything to the point of "Golden Mean". As an initial pace to take we can start thinking about the world of separations that we have created – separation from nature, from humans, from our inner souls.

So, the complex processes of evolution and civilization have had both negative and positive impacts for human race. But what we have now is a great danger of human dissolution. In order to save the planet from a new kind of "cave age" or cyborgs & "pigs" we should really take time to think about the nature, our virtues, greediness and faults.

## REFERENCES

1. Aristotle. (1990). *The Nicomachean Ethics Translated with an Introduction by David Rose*. Oxford/New York: Oxford University Press.
2. Darwin, C. (1859). *On the Origin of Species*.
3. Einstein. (1949, April-May). Liberal Judaism 16 . (A. Werner, Interviewer)

4. *Goodfrey-Reggio/ Powaaqatsi Review*. (2013-2014). Retrieved May 1, 2014, from Dialogue Talk: <http://dialoguetalk.org/godfrey-reggio/powaqqatsi/>
5. The Cave. In Plato, *The Republic*.
6. Figure 1. *Fred on Evolution*. (2012, October 4). Retrieved May 1, 2014, from Apocalypse
- a. Cometh: <http://apocalypsecometh.com/fred-on-evolution/>
7. Figure 2. *Entertainment: Is Gen Y the Outsource Generation?* (2012, August 7). Retrieved May 1, 2014, from Kiki Tea: <http://kikiandtea.com/2012/08/gen-y-outsource-generation/>
8. Figure 3. Wolf, M. (2014, February 4). *If robots divide us, they will conquer*. Retrieved May 20, 2014, from Columnists: <http://www.ft.com/intl/cms/s/0/e1046e2e-8aae-11e3-9465-00144feab7de.html#axzz32RrrkYws>
9. Figure 4. *Albert Einstein*. (2013, October 12). Retrieved May 23, 2014, from God is Heart: <http://godisheart.blogspot.com/2013/10/i-do-not-know-with-what-weaponsworld.html>

MANE KHACHIBABYAN

## CIVILIZATION – PROGRESSION OR REGRESSION?

### SUMMARY

This paper is aiming to raise the awareness of the readers to think about the world they are living in and encourages them to effectively separate the progression from regression. The writing is based on analysis of the pictures which accurately help the reader to get the main points and ideas. Nothing can be more effective and obvious for people to get the right point than an immediate visual reference. By referring to the different works or sayings of Aristotle, Plato, Einstein and Goodfrey-Reggio I tried to highlight and bring the attention of the audience to the actual dangers that exist in our world that can very soon cause a dissolution of

human race, because of ongoing progression and greediness. People always tend to progress and get much more civilized than they are and on their way they never take a moment to think about the side effects and regressive consequences. The success causes blindness and makes people more avaricious. Accordingly, we need to take a pause and by analyzing all of the negative side-effects of ongoing progression try to save the planet from being destroyed.

*Key concepts:* civilization, evolution, progression, regression, nature, human dissolution, cyborg.



ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ.  
ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ ԹԵ՞ ՀԵՏԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածը միտված է ոգեշնչելու և քաջալերելու ընթերցողին մեկ անգամ ևս մտորելու աշխարհի ու դրանում առկա խնդիրների, առաջադիմությունն ու ետադիմությունը սահմանազատելու մասին: Հետազոտությունը հիմնված է նկարների վերլուծության վրա, քանի որ ոչինչ այնքան արդյունավետ և ակնհայտ կերպով չի օգնում առաջադրված խնդրի, հիմնական գաղափարների և տեսակետների ճշգրիտ ըմբռնմանը, որքան ճիշտ ընտրված ակնառու պատկերը: Մեջբերելով Արիստոտելի, Պլատոնի, Էյնշտեյնի և Գոդֆրի-Ռեջոյի տարբեր աշխատությունները և ասացվածքները՝ փորձ է արվել ընթերցողի ուշադրությունը սևեռել իրականության մեջ առկա իրական վտանգների վրա, որոնք կա-

րող են նպաստել մարդկության անհետացմանը: Ձգտելով ավելի առաջադեմ և քաղաքակիրթ լինելու, մարդը մեկ բույե անգամ չի մտածում կողմնակի ազդեցությունների և ետադիմական հետևանքների մասին: Հաջողությունը կուրացնում և նպաստում է նրա ավելի ազաի դառնալուն: Ահա, թե ինչու մենք պետք է մի պահ դադար տանք և առկա առաջադիմության կողմնակի բացասական ազդեցությունները վերլուծելով՝ փորձենք փրկել աշխարհը կործանումից:

*Հանգուցային հասկացություններ. քաղաքակրթություն, էվոյուցիա, առաջադիմություն, ետադիմություն, բնություն, մարդկային օտարում, մարդ-մեքենա:*

**ԹԻՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԷՊԻՍԵՄԱԲԱՆԱԿԱՆ-ԱՐԺԵՔԱՅԻՆ  
ՉԱՓՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԾԱԳՄԱՆ ՎԱՂ ՓՈՒԼԸ (ՖԻԼԵՈԳԵՆԵԶ)**

Թվի ծագման տեսությունը վերաբերում է գիտելիքի երկու ոլորտի՝ փիլիսոփայությանը և բուն մաթեմատիկային (ավելի կոնկրետ մաթեմատիկայի պատմությանը):

Փիլիսոփայության մեջ թվի ծագման տեսությունը հենվում է մարդու, հասարակության, հասարակական մտքի ծագման-կազմավորման և զարգացման մասին տարբեր գիտությունների (բնական պատմություն, մարդաբանություն, նշանաբանություն, հոգեբանություն, սոցիոլոգիա) կողմից ստացված փաստերի վրա:

Ինչ որ իմաստով թվի ծագման տեսությունը գուցա հեռվում է լեզվի ծագման տեսությանը: Բանն այն է, որ մաթեմատիկան (ավելի կոնկրետ մաթեմատիկական լեզուն) կարելի է դիտարկել որպես բնական լեզվի մի ենթաբարբառ, որը ծագել է մարդու (մարդկության) որոշակի տեսակի կարիքները հոգալու համար:

Լեզվի ծագման հիմնախնդիրը լուծվում է մի շարք՝ իրար հաջորդող, տեսությունների շրջանակներում (հասարակությունը պարզապես չի կարող շրջանցել լեզվի առաջացումը իմաստավորելու հարցը): Տարբեր ժողովուրդների առասպելաբանության մեջ կան լեզվի առաջացմանը վերաբերող առասպելներ. դրանցում լեզվի առաջացումը կապվում է մարդու առաջացման հետ:

Բայց, եթե կան լեզվի առաջացման բազմաթիվ տեսություններ (**լոգոսային, հասարակական պայմանագրային, բնաձայնական, սոցիալական**), ապա նույնը չի կարելի ասել թվի առաջացման մասին: Ընդունված կարծ-

իքը՝ «թիվն առաջացել է մարդու (մարդկության)՝ հաշվումներ և չափումներ կատարելու անհրաժեշտությունից», քիչ է լույս սփռում հիմնախնդրի լուծման վրա:

Մոտ քսան հազար տարի առաջ, վերին քարե դարում, ավարտվեց մարդայնացման գործընթացի կենսաբանական փուլը, որի արդյունքում մենք դարձանք այնպիսին, ինչպիսին կանք այսօր. մարդու կառուցվածքը ընդունեց ժամանակակից տեսքը, մարդը սկսեց տիրապետել քարից և ոսկորից պատրաստված գործիքների: Երևի այդ ժամանակահատվածում է սկսվել լեզվագենեզը՝ լեզվի և խոսքի զարգացումը, խոսքի օրգանների և դրանք ղեկավարող ուղեղային կենտրոնների կազմավորումը և, ամենակարևորը, ուղեղային ասիմետրիայի ձևավորումն ու մարդու հոգեկան աշխարհի բյուրեղացումը:

Այս գործընթացի մասին գիտական պատկերացումները կուտակվում են դանդաղորեն և դժվարությամբ: Համեմատական լեզվաբանությունը հնարավորություն է տալիս կատարելու հնագույն լեզուների հետևաբանություն (ռեկոնստրուկցիա). արդեն հայտնի են նոստրատիկ և սինատիբեթյան բառամթերքի արմատները: Քիչ հավանական է, որ համեմատական լեզվաբանությունը թափանցի ավելի հին լեզվաշերտեր. Այստեղ երևի, անհրաժեշտ է հետևել այլ բնութագրիչների էվոյուցիային՝ ըստ էության անցում կատարել լեզվաբանությունից հոգելեզվաբանության բնագավառ, և ապա՝ իմաստաբանություն, նշանաբանություն, կոգնիտիվ լեզվաբանություն և այլն: Բայց, եթե այս բնա-

գավառներում արդեն կայունացել են «**Կոնցեպտ**», «**Աշխարհի լեզվական տեսլական**», «**Մտային ներկայացումներ (mental representation)**» և այլ եզրույթներ, ապա բացակայում է «**Աշխարհի թվային տեսլականը**»:

Համենայն դեպս, եթե մենք ցանկանում ենք գերմանացի մաթեմատիկոս Կոմերի «**Բնական թվերն ստեղծել է Աստված, իսկ մյուսներն արդեն մարդու ձեռքի գործն են**» պնդում-դարձվածքին տալ «գիտական» տեսք, ապա պետք է ընդունենք, որ մարդուն հատուկ է «**աշխարհի թվային տեսլականը**»:

Այս շրջանակում առաջադրվել են թվի առաջացման տարբեր վարկածներ.

1. *պրագմատիկ*՝ թիվն առաջացել է հարողակցման անհրաժեշտությունից,
2. *կոնցեպտային*՝ մարդու մեջ դրված է մեկ թվի կոնցեպտը և հատուկ ապարատ՝ հաջորդ թվերն ստանալու համար,
3. *ժխակատարային*՝ թիվը հատուկ կոդ է, որը նկարագրում է աշխարհը՝ հավատի, երաժշտության, պոեզիայի, արվեստի, ճարտարապետության և այլնի համատեքստում:

Թիվն ամենավաղ նախամաթեմատիկական գաղափարն է. 1, 2, 3 ... օբյեկտներն այնքան կայուն են եղել, որ դրանք տարբեր մշակույթներում ընդունել են խորհրդանշական և հավատաբանական իմաստ: «**Երեքը**» առնչվում է քրիստոնեական *Երրորդության* հետ, «**երկուսը**»՝ բուդդայական *նիրվանայի* հետ. նիրվանան ծագել է սանսկրիտի nir-dva-n-dva-ից, որում dva-ն հենց երկուսն է, իսկ ամբողջ nirdvandva-ն նշանակում է, որ մարդը՝ ճնշելով իր անձը՝ միաձուլվում է Տիեզերքի հետ:

«**Վեցը**» սատանայի նշանն է քրիստոնեության մեջ, իսկ համաշխարհային մշակույթում՝ դաշինքի և հավասարակշռության.

այլութագորասյան համակարգում՝ հաջողության և երջանկության նշան. Խորանարդը (կանոնավոր վեցանիստը) կայունության և ճշմարտության խորհրդանիշ է:

«**Յոթը**» սրբազան, Աստվածային նշան է: Հին հույները յոթը համարում էին բարձրագույն կատարելության նշան:

Բնական թվերը դառնում են *մաթեմատիկական գաղափար*, եթե՝

1. հնարվում են դրանց հետ գործառնելու այնպիսի եղանակներ, ասես թե դրանք նյութական օբյեկտներ են (գումարում, բազմապատկում),
2. վեր են հանվում բնական թվերի ամբողջ շարքին (կառուցվածքին) վերաբերող հատկություններ, ասենք՝ պարզ թվեր և դրանց անվերջությունը, բնական թվերից յուրաքանչյուրը պարզ արտադրիչների վերլուծելու հնարավորությունը:

Մեզ հասած հնագույն ձեռնակերտերը (artefact) և այլ փաստերը հավաստում են, որ սկզբում և՛ թվերը, և՛ դրանց հետ գործառնումները կողավորվել են որոշակի նյութական օբյեկտների միջոցով՝ ձեռքի մատեր և մարմնի այլ մասեր, հաշվեփայտիկներ:

Հետագա հետկառուցումը (ռեկոնստրուկցիան), արդեն, պետք է դիտարկել հոգե-լեզվաբանության առումով, այն է՝ ֆիլեոգենետիկական էվոլյուցիան դիտարկել օնթոգենետիկականի գուգահեռությամբ: Թիվ հասկացության պատմական էվոլյուցիայի տեսակետից դա նշանակում է, որ մարդանացման գործընթացը պետք է համադրել մանկան (երեխայի) մոտ թիվ հասկացության ձևավորման գործընթացի, ինչպես նաև՝ զարգացման պարզագույն աստիճանի վրա գտնվող ցեղախմբերի մոտ դրա առկա վիճակի հետ:

Հոգեբանության մեջ (գուգահեռաբար նաև մաթեմատիկայում) մինչև 20-րդ դարի երրորդ քառորդն այն կարծիքը կար, որ երեխայի մոտ թիվ հասկացությունը ձևավորվում է մեծերի հետ շփման գործընթացում, այլ կերպ ասած ընդունվում էր պրագմատիկ մոտեցումը:

20-րդ դարի վերջին կատարված ուսումնասիրությունները (որպես, օրինակ, (1)-ը (2)-ը, (3)-ը) ցույց են տալիս, որ արդեն 5-6 ամսական մանուկները տարբերում են քանակություններ, հատկապես մեկով ավելացված (պակասեցված) քանակությունները, իհարկե դա արտահայտվում է ոչ բառային միջոցներով: Հավանական եզրակացությունն այն է, որ երեխան ի ծնե օժտված է մտային այնպիսի կարողությամբ, որն, ըստ էության, քանակությունը մեկով ավելացնելն է: Սա հուշում է թվի առաջացման կոնցեպտային մոդելի մասին:

Ասվածը լավ կորելացվում է հայտնի լեզվաբան Ն.Չոմսկու (5) տեսության հետ, ըստ որի մարդն օժտված է լեզվին տիրապետելու գործիքով (ապարատով), որում ներառված են շարահյուսությանը, քերականությանը և պրագմատիկային վերաբերող բնածին ընդունակությունները: Այս գուգահեռությամբ մենք պնդում ենք, որ մարդն օժտված է թիվ հասկացությանը տիրապետելու բնածին կոնցեպտով:

Քանի որ հակառակը պնդող փաստեր չկան, ապա այս վարկածը կարելի է համարել աշխատանքային: Իհարկե, ապագա հետազոտությունները լույս կսփռեն այդ կոնցեպտի վրա՝ կենտրոնանալով այդ խնդրի շուրջ՝ թե ինչպես և ինչ սահմաններում է գործառնվում այն:

Այս վարկածի մեկ այլ անուղղակի հաստատում է մոտ 30000 տարի առաջ գայլի ոսկորի վրա արված խազերը՝ 55 հատ՝ խմբա-

վորված հինգ-հինգ. դա թվի գրառման ամենահին օրինակն է: Եվ հավանական է, որ թվի առաջին գրառումները նախորդել են պատկերագրերին և վերջիններիս ծագման համար կատալիզատորի դեր են խաղացել: Նույն կերպ, հավանական է, որ թվի առաջին գրառումները նախորդել են այբուբենին:

Ինչ վերաբերում է մաթեմատիկական սկզբնաղբյուրներին, ապա մեզ հասած հնագույն տեքստերը (Բաբելոն, Եգիպտոս) արդեն արտացոլում են զարգացած մաթեմատիկական գիտելիքներ, մասնավորաբար՝ բնական լեզվից անջատված մաթեմատիկական լեզուն. դրանում հիմնական տեղ էր զբաղեցնում թվերի նշանակման և դրանց հետ գործողությունների կատարման համակարգը:

«Մ.թ.ա. 2074 թվականին Շուլգի թագավորը որոշեց անցկացնել ռազմական բարեփոխումներ Շումերական թագավորությունում: Ըստ այդ բարեփոխումների՝ աշխատող բնակչության մեծ մասը բաժանվեց բանվորական բրիգադների, իսկ հսկող գրագիրները դարձան այդ բրիգադների արտադրողականության պատասխանատուներ: Արտադրողականությունը չափվում է վերացական միավորով՝ աշխատանքային օրվա 1/60-րդ մասը՝ 12 րոպե: Ամբողջ աշխատանքը և դրա արդյունքները պետք է մանրագնին չափվեին: Դրա համար անհրաժեշտ էր կատարել հսկայական քանակությամբ բազմապատկման և բաժանման գործողություններ: Միջանկյալ հաշվումներ կատարելու համար ներմուծվեց 60 հիմքով դիրքային համակարգ, ընդ որում անհրաժեշտություն առաջացավ կազմել բազմապատկման և հակադարձների աղյուսակներ և դրանք ուսուցանել դպրոցներում» (4, էջ 9):

Ավելի վաղ տեքստեր դեռևս չեն հայտնաբերվել և մ.թ.ա. 1500-3000 թթ. ժամանա-

կահատվածի մասին գուցե կարելի է պատկերացումներ կազմել ներկայումս զարգացման «նախնական» աստիճանի վրա գտնվող ցեղախմբերում մաթեմատիկական պատկերացումների մասին հետազոտությունների միջոցով, այն է՝ ազգագրական նյութերի հետազոտության միջոցով:

Այդպիսի ցեղախմբերից շատերի մոտ կան միայն մի քանի «փոքր» բնական թվերի անվանումներ. ավելի մեծ թվերն ունեն մի անվանում՝ «շատ»: Այսպես, պապուասյան հենդե, քաթի, քամորո լեզուներում կան միայն երկու թվի անվանում՝ «մեկ», «երկու», իսկ ապա հաշիվը գնում է ձեռքերի և ոտքերի մատերի միջոցով՝ մինչև «քսան»:

Ամեն դեպքում, թվի վաղ շրջանի ծագման մասին ցանկացած վարկած, կամա թե ակամա, արտահայտվում է փոխաբերությամբ, որովհետև չկա համապատասխան հասկացնային լեզու:

Նշանաբանության հասկացնային ապարատի ավանդական տեսակետից՝ ասվածը ենթադրում է, որ պետք է հետևել հիմնական հասկացությունների աստիճանակարգին (հիերարխիային): Եթե նշանաբանության ելակետային հասկացությունը համարենք «նշանը», ապա ելակետային նախահասկացությունը կլինի «տեղեկատվական գործընթացը», իսկ «նշանը» կլինի տրված դասի տեղեկատվական գործընթացի վերլուծության արդյունքը: Հետևաբար, թվի պատկերումները ընդամենը տեղեկատվական գործընթացի վերլուծության արդյունք են: Բայց, տեղեկատվական գործընթացը տեղի է ունենում գիտակցության մեջ: Ուստի թվի վաղ ծագման խնդիրը տեղափոխվում է գիտակցության ֆիլեոգենեզ, իսկ գիտակցության ֆիլեոգենեզը սերտորեն կապված է լեզվագենեզի հետ:

Մյուս կողմից, լեզվի կողիֆիկացիան երկար ժամանակ քուրմ-շամանների սրբազան գործառույթն է եղել: Այդ գործառույթը կապված է Homo sapiens-ից Homo sapiens sapiens անցման հետ և վերաբերում է մ.թ.ա. 50000-20000 թվականներին: Այդ ժամանակահատվածում է, որ ամբողջ օյկումենտում տարածվեց մարդու նոր գենոտիպ, որը դուրս մղեց նեանդերթալյանին և, որը մարդկային նոր խոսքի կրողն էր: Հավանական է, որ այդ ժամանակահատվածում տեղի է ունեցել ուղեղի կիսագնդերի ակտիվության հզոր ժայթքում՝ կապված լեզվական կենտրոնի ձևավորման հետ:

Պատահական չէ, որ այդ ժամանակաշրջանի վերջը Եվրոպայում (նաև Չինաստանում) համընկնում է քարանձավային գեղանկարչության հետ: Բայց պատահական չէ, որ այդ ժամանակաշրջանին է վերաբերում գայլի ոսկորի վրա թվապատկերումը:

Ամփոփելով, մենք թվի ծագման վերաբերյալ հավանական ենք համարում, որ՝

1. Homo sapiens-ի մոտ առկա է թիվ հասկացության կոնցեպտը,
2. այդ կոնցեպտն իր արտահայտումն է ունեցել վաղ քարե դարում՝ կապված Homo sapiens-ի մոտ ուղեղի կիսագնդերի հզոր ակտիվացման հետ և, հատկապես, այդ կիսագնդերի ասիմետրիայի հետ,
3. լեզվագենեզի հետ զուգահեռ (և գուցե՝ ավելի վաղ) տեղի է ունեցել թվագենեզ,
4. թվագենեզի կատալիզատորներ են հանդիսացել քուրմ-շամանները,
5. թվագենեզի մեջ իր դերն ունի թվի ծագման ծիսակատարային մոտեցումը,
6. ուստի թվի ծագման երեք վարկածները՝ պրագմատիկ, կոնցեպտային, ծիսակատարային, պետք է համարել ըն-

դունելի՝ գերակայություն տալով կոն-  
ցեպտայինին:

ՄԵԶԲԵՐՎԱԾ ԵՎ ՀՂՎԱԾ  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Starkey, P., Spelke, E.S., Gelman, R. (1990). *Numerical abstraction by humanist ants. Cognition* 36: 97-127.
2. Wynn, K. (1996). *Infant's individuation and enumerations. Psychological Science* 7: 164-199.
3. Canfield, R.L., Smith, E.G. (1996). *Number-based expectations and sequential enume-*

*ration by 5-month-old infants. Development Psychology* 32: 269-279.

4. *Mathematics and War/* Ed by Boob Bavb-  
nek, I. Horup. Basel Birkhäser Verlag, 2003.
5. Chomsky, N. (1997). *Current issues in lin-  
guistic theory. The Hague: Mouton.*

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿՈՒՆԻ

ԹԻՎ ՀԱՍԿԱՅՈՒԹՅԱՆ ԷՊԻՍՏԵՄԱԲԱՆԱԿԱՆ-ԱՐԺԵՔԱՅԻՆ  
ՉԱՓՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԾԱԳՄԱՆ ՎԱՂ ՓՈՒԼԸ (ՖԻԼԵՈԳԵՆԵԶ)

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում քննարկվում է թիվ հասկա-  
ցության ծագման հարցը՝ էպիստեմաբանա-  
կան և արժեբանական տեսանկյունից՝ ֆիլե-  
ոգենեզի համատեքստում: Փորձ է արվում  
հիմնավորել, որ թիվը ծագել է ավելի վաղ,  
քան լեզուն, և թվի պատկերումները կատա-  
լիզատորի դեր են խաղացել գրի վաղ ծագ-  
ման ձևերի (պատկերագրեր և այլն) վրա: Հա-  
վանական է համարվում, որ թվի ծագման վե-  
րաբերյալ հայտնի տեսությունները (պրագ-

մատիկ, կոնցեպտային, ծիսակատարային)  
լավ են կորելացվում թվագենեզի հետ, բայց  
առաջնությունը պետք է տալ կոնցեպտայի-  
նին:

*Հանգուցային հասկացություններ.* թիվ,  
կոնցեպտ, ֆիլեոգենետիկ էվոլուցիա,  
թվարկության դիրքային համակարգ,  
էպիստեմաբանական:

THE EPISTEMOLOGICAL AND AXIOLOGICAL MEASURES OF THE CONCEPT *NUMBER*  
AND THE EARLY STAGE OF ITS GENESIS

SUMMARY

This paper examines the problem of origin of number in epistemological and axiological aspects with the regard of phileogenesis. The core idea behind the approach is that the number preceded the language and that the number notations are anterior to writing systems. It is pro-

bable that different theories of origin of number are correlated with the number genesis.

*Key concepts:* number, concept, phyleogenetic evolution, counting, epistemological.

-

## ՄԵՏԱՓԱՍՏԱՐԿՈՒՄԸ ՄԵՏԱՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Ժամանակակից գիտափիլիսոփայական գրականության մեջ «մետա» (μετά) ծագումով հունարեն բառը<sup>1</sup> միանշանակ չէ և գործածվում է ամենատարբեր իմաստներով, երբեմն՝ փոխլրացնող, երբեմն՝ հակասական, իսկ երբեմն էլ՝ նույնիսկ իր որևէ իմաստը չպահպանող բազմիմաստությամբ, ինչն առաջ է բերում խառնաշփոթություն: Եվ դա այն աստիճան, որ համահունչ չեն նույնիսկ միևնույն հանդեսի (ինչպիսին է, օրինակ, տասնամյակներ շարունակ ԱՄՆ-ում հրատարակվող *Մետափիլիսոփայություն* ամսագիրը<sup>2</sup>) շրջանակներում ներկայացվող հոդվածների հեղինակների ըմբռնումներն ու մտտեցումները «մետայի» իմաստների հարցում: Դրա ապացույցն է նաև այն փաստը, որ

ուս նշանավոր փիլիսոփա Տ.Օյգերմանի *Մետափիլիսոփայություն: Պատմափիլիսոփայական գործընթացի տեսություն* (Ойзерман 2009) խորագրով 440 էջից բաղկացած մենագրությունում որևէ անգամ չի գործածվում «մետափիլիսոփայություն» բառը: Մա այն դեպքն է, երբ գնալով դեպի բազմիմաստություն, հասնում են գրոյի: Արդյունքում ավելի ու ավելի է ծառանում «մետա» նախածանցով ստեղծված տերմինների իմաստի ճշգրտման և համապատասխանաբար դրանց մատնանշած տեսությունների կամ դրանով կազմավորված մետատեսությունների հստակեցման և տարբերակման խնդիրը:

Տարբեր տեսաբաններ տարբեր կերպ են լուծում փիլիսոփայության և մետափիլիսոփայության փոխհարաբերության հարցը, ինչը կարող է կառուցողական վիճաբանության նյութ դառնալ ոչ միայն ներկա, այլև՝ այլ աշխատություններում:

Փիլիսոփայության և մետափիլիսոփայության հիմնախնդիրը (տե՛ս Երյուսի 1984; 1985; Բրուսյան 2008, 2009) միջնորդավորված ձևով առնչվում է նաև փաստարկմանը: Փաստարկման և մետափաստարկման տեսությունների փոխհարաբերության խնդրի լուծման համար նպատակահարմար է պարզաբանել որոշ հարցեր (այս մասին տե՛ս Հովհաննիսյան 2007), որոնք, իհարկե, չեն սպառում հարցի ճիշտ լուծման նախապայմանները, սակայն դառնում են որոշակի օգտակար ուղեցույց դրանց իրականացման համար: Նախ, մետատեսությունների և տե-

<sup>1</sup> «Մետա» բառն առաջին անգամ գործածել է հույն փիլիսոփա, գրադարանավար Անդրոնիկոս Հռոդոսցին (քաղաք Ալեքսանդրիա), Քրիստոսի ծնունդից առաջ, առաջին դարում: Դասակարգելով Արիստոտելի երկերը ըստ դրանց բովանդակության՝ նա առանձնացրել է բնագիտական խնդիրներին վերաբերողները՝ «ֆիզիկա», իսկ բուն փիլիսոփայական խնդրակարգերին ու խորհրդածություններին վերաբերողները՝ «մետաֆիզիկա» (ինչը նշանակել է «ֆիզիկայից հետո») ենթադասերում: Այստեղից էլ՝ *մետայի* «ինչ-որ բանից հետո» նշանակությունը:

<sup>2</sup> *Metaphilosophy* ամսագրի գլխավոր խմբագիրը Հարավային Կոնեկտիկուտի պետական համալսարանի փիլիսոփայության բաժանմունքի նախագահ, փիլիսոփայության պրոֆեսոր Արմեն Տ.Մարտիսյանն է, ով փիլիսոփայության դոկտորի գիտական աստիճանը (PhD) ստացել է Մթոնի Բրուքի Նյու Յորքի պետական համալսարանում: Նրա հետազոտության հիմնական ոլորտներն են ամերիկյան փիլիսոփայությունը, էսթետիկան, Չարլզ Սանդերս Փեյրսի սեմյոտիկան, մետաֆիզիկան և ցեղասպանության վերաբերյալ ուսումնասիրությունները:



սությունների համատեքստում հարկ է էքսպլիկացիայի ենթարկել «մետայի» իմաստը, ինչպես դիախրոն (տարածամանակյա), այնպես էլ՝ սինխրոն (միաժամանակյա) մոտեցումների տեսանկյունից: Երկրորդ, պետք է տարբերել «մետա» նախածանցով տերմինները դրանց արհեստական կազմավորման ու կիրառման և լեզվի զարգացման ընթացքում բնականոն եղանակով ձևավորված բնույթի տեսանկյունից: Դա հնարավորություն կտա դուրս բերել արհեստական կառույցները քննարկվող դաշտի սահմաններից, քանի որ «մետա» նախածանցը կարող է շեղել հարցի ճիշտ ըմբռնումից, և դրա հետ առնչվող քննարկումը տանել ոչ անհրաժեշտ ուղիով: Երրորդ, պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ «մետայով» ստեղծված բառերում նախածանցի իմաստն ինքնին բավականաչափ ազդեցություն է թողնում այդ բառակազմության վրա և ստիպում է ուշադրություն դարձնել նախածանցին և ոչ թե զբաղվել ստեղծված բարդ բառով արտահայտված հասկացությունների առարկայական բովանդակության վերլուծությամբ: Չորրորդ, հարկ է հաշվի առնել «մետա» նախածանցով ստեղծված բառերի այն կարևոր առանձնահատկությունը, որ դրանք ոչ թե սոսկ բառեր են, այլ տերմիններ, ինչն էլ իր հերթին համապատասխան պահանջներ է առաջադրում «մետա» նախածանցով տերմինաբանական նշանակություն ունեցող բառերի նկատմամբ: Հաջորդ պահանջը դիտարկվող տերմինի միանշանակությունն է, որը տվյալ համատեքստում կարևորագույնն է: Ակնհայտ է, որ տերմինի ոչ միանշանակությունը լրացուցիչ բարդություններ է առաջացնում համապատասխան բնագավառում հաղորդակցվելու համար, անկախ այն բանից, վերջիններս իրականացվում են ողջախոհության շրջանակներում, թե գիտութ-

յան բնագավառում (ավելի ճշգրիտ լինելու պարագայում թերևս պետք է ընդգծել, որ միանշանակությունն առավել կարևոր է գիտության բնագավառում):

Անդրադառնալով *մետափաստարկում* տերմինին՝ պետք է նկատել, որ փաստարկման գոյությունը ենթադրում է մետափաստարկման առկայությունը: Հարցն այն է, թե ինչպես հասկանալ մետափաստարկումը և ինչպես ներկայացնել փաստարկման և մետափաստարկման հարաբերակցությունը: Սակայն ճիշտ կլինի հարցը քննարկել պատմականորեն, անդրադառնալով «մետայով» ստեղծված դարձվածքների, ավելի ստույգ՝ փիլիսոփայության և մետափիլիսոփայության փոխհարաբերության հարցի շուրջ եղած վիճաբանություններին: Գ.Բրուստյանի *Փիլիսոփայություն և մետափիլիսոփայություն* (Брустян 1985) հոդվածը առաջին հրատարակված աշխատությունն է Խորհրդային Միությունում դիտարկվող թեմայի շուրջ: Այդ աշխատանքում իրականացվում է մետափիլիսոփայության վերաբերյալ որոշ աշխատասիրությունների (Metaphilosophy 1964; Lazero-vitz 1977; Gill 1982; Cultural Hermeneutics 1977; American Philosophical Quarterly 1983) վերլուծությունն ու գնահատականը: Ամերիկյան փիլիսոփա Մ.Լազերովիցի *Փիլիսոփայության լեզուն* աշխատությունը (Lazero-vitz 1977) նվիրված է մետափիլիսոփայության բնույթի և էության բացահայտմանն ու վերհանմանը: Մ.Լազերովիցի կարծիքով մետափիլիսոփայությունը հետազոտության մի նոր բնագավառ է, որի արմատները միահյուսված են Լ.Վիտգենշտայնի «հեղափոխական» գաղափարներում: Հետևելով Վիտգենշտայնին՝ նա հանգում է այն եզրակացության, որ փիլիսոփայության խնդիրները ոչ թե լուծվում, այլ վերացվում են: Դա էլ Մ.Լազերովիցին «հիմք» է տալիս պնդելու, որ մետափիլիսո-

փայտությունը վերացնում է փիլիսոփայությունը (այս մասին տե՛ս Բրուսյան 2008.152): Այլ է Ջ.Գիլի կարծիքը քննվող հարցի վերաբերյալ (Gill 1982): Իր *Մետափիլիսոփայություն* գրքում նա նշում է, որ «մետափիլիսոփայություն» տերմինով պետք է անվանել փիլիսոփաների գործունեությունը և դրանով բացահայտել փիլիսոփայության էությունը: Մետափիլիսոփայությամբ զբաղվելը նշանակում է փիլիսոփայություն ստեղծել:

Կան նաև այլ կարծիքներ քննարկվող հարցի վերաբերյալ: Ըստ դրանցից մեկի, մետափիլիսոփայությունը ոչ թե ժխտում է փիլիսոփայությունը, այլ ճանապարհ է հարթում մետափիլիսոփայության էությունն ըմբռնելու համար: Մնացած տեսակետների դեպքերում հայտնաբերված տարբերություններն էական չեն:

Մետափիլիսոփայության բնույթի վերլուծությունն իրականացնող տեսաբանները հաճախ նշում են, որ մետափիլիսոփայությունը փիլիսոփայության մասն է, բնագավառը, ճյուղը կամ թվարկված բառերի մեկ այլ հոմանիշը: Մինչդեռ դիտարկվող խնդիրը մետատեսության բնույթի համարժեք ներկայացման անհրաժեշտ նախադրյալներից է և, ըստ էության, կարևորագույն հարցերից մեկը: Պատահական չէ, որ դեռևս Հին աշխարհում փիլիսոփաները երկարատև վիճաբանության առարկա են դարձրել փիլիսոփայության և տրամաբանության փոխհարաբերության պարզաբանման հարցը: Արդյունքում ձևավորվել են երեք դիրքորոշում. ստոիկյան՝ տրամաբանությունը փիլիսոփայության մասն է, արիստոտելականների՝ տրամաբանությունը փիլիսոփայության գործիքն է, պլատոնականների՝ տրամաբանությունը փիլիսոփայության և՛ գործիքն է, և՛ մասը: Մետափիլիսոփայությունը փիլիսոփայության մասը չէ, քանի որ, ի տարբերություն

այլ տեսությունների, որոնց համապատասխան մետատեսությունը կարելի է համարել դրանց բաժինը, մետափիլիսոփայությունը չի կարող հանդես գալ որպես «փիլիսոփայություն» բազմության ենթաբազմություն, այլապես ստիպված կլինենք ստեղծել ոչ միայն մետափիլիսոփայություն, որը, լուծելով փիլիսոփայության մյուս բաժինների խնդիրները, ինքն իր համար նոր խնդիրներ կձևավորի և կպահանջի մետամետափիլիսոփայությունների մի անվերջ շղթա, որն, ի վերջո, չի լուծի առաջադրված խնդիրը: Մետափիլիսոփայությունը հարկ է փնտրել փիլիսոփայության այլ հատկությունների դաշտում, քանի որ փիլիսոփայությունը որպես բազմություն, ունի ոչ միայն ենթաբազմություններ, որոնք իրենց շրջանակներում հետազոտության ինքնուրույն առարկա են, այլ նաև՝ զանազան գործառույթներ, որոնք տարբերվում են ենթաբազմություններից նրանով, որ հետազոտում են ոչ թե ենթաբազմությունները որպես ամբողջություն, այլ բոլոր ենթաբազմությունների համար ընդունում են այս կամ այն կարևորագույն հատկությունը, որը դառնում է դրանց գործառույթը (օրինակ, աշխարհայացքային կամ ավելի ստույգ՝ փիլիսոփայական աշխարհայացքային): Ուստի, ճիշտ կլինի մետափիլիսոփայությունը դիտարկել որպես փիլիսոփայության գործառույթներից մեկը:

Մետատեսությունների մեջ լավագույն եղանակով ուսումնասիրված է մետամաթեմատիկան, որը կարող է դառնալ մոդել մետատեսությունների համար: Այդ պատճառով էլ Փաստարկման երևանյան դպրոցում կազմակերպվող ավանդական տեսական սեմինարների ընթացքում հանգամանորեն քննարկվել են մետամաթեմատիկայի առանձնահատկությունները, ուշադրություն դարձնելով մասնավորապես այն հանգա-

մանքի վրա, որ Գ.Հիլբերտը վերիմաստավորում է մաթեմատիկան՝ որպես ձևայնացված անհակասական տեսություն: Հենց այդպիսի մաթեմատիկան է, որը ոչ միայն դառնում է մետամաթեմատիկայի վերլուծության, այլև կարող է դառնալ չափանիշ այլ մետատեսությունների համար: Միննույն ժամանակ այս մտահղացման պաշտպանողներն ամեն կերպ աշխատում էին զերծ մնալ ոչ տեղին, ոչ ճշգրիտ էքստրապոլյացիայից՝ մետամաթեմատիկական տեսություններում կիրառվող որոշ հիմնական հասկացությունները այլ տեսություններում կիրառելուց (Борухин 1984):

Գ.Բրուսյանը տարբերում է մետատեսությունների երկու կաղապար (մոդել)՝ պլատոնյան և հոռոսցյան, որոնք կարող են ն՝ որոշակի պատկերացում տալ ընտրված կաղապարների մասին և՛ նոր ուղիներ բացել դրանց համահունչ խնդիրների պարզաբանման համար (Բրուսյան 2008, 2009): Առաջադրված կաղապարների շնորհիվ կարելի է դատել արդյոք հնարավոր է կառուցել մետատեսություն, թե՛ ոչ: Եվ եթե այո, ապա ըստ ո՞ր կաղապարի՝ պլատոնյան թե՛ հոռոսցյան: Առաջինը պահանջում է դիտարկվող տեսության ձևայնացում, երկրորդը կարող է գործել նաև բնական լեզվի դաշտում: Որպես պլատոնյան կաղապարով կառույց հետաքրքիր է մաթեմատիկայի և մետամաթեմատիկայի գուգակցությունը: Այդպիսի կառույցի նկատմամբ կարևորագույն պահանջը դիտարկվող տեսության ձևայնացումն է: Մետամաթեմատիկան, որը մեթոդ է ձևայնացված մաթեմատիկայի համար, ձևայնացված չէ: Տեսությունը քննելիս, վերլուծելիս, մետամաթեմատիկան կարող է օգտվել անհրաժեշտ բովանդակային ձևերից ու եղանակներից:

Ի հակադրություն պլատոնյան մեթոդով դիտարկվող տեսության պահանջին (այն է՝ ունենալ ձևայնացված տեսություն)՝ հոռոսցյան կաղապարով ստեղծված կառույցը ձևայնացված չէ: Այս էական տարբերությամբ էլ պայմանավորված է գիտությունների զարգացման յուրաքանչյուր փուլում ավելի շատ հանդիպում են չձևայնացված, քան՝ չձևայնացվող տեսությունները: Ձևայնացման պահանջի բացակայությունը հնարավորություն է ընձեռում մետատեսության և տեսության փոխհարաբերության ոլորտ ընդգրկել մեծ թվով տեսությունների, ինչն իր հերթին օժանդակում է տարբեր տեսություններում նոր հատկություններ բացահայտելուն: Ճիշտ է ձևայնացումը չի կարելի դիտարկել որպես մեկ անգամ տրված, վերջնականապես որոշված երևույթ, քանի որ գիտելիքի, տեսության ձևայնացումն ունի իր զարգացման առանձնահատկությունները, որոնք պետք է հաշվի առնել տեսությունների ստեղծման ընթացքում: Գիտության զարգացումը ցույց է տալիս, որ այն, ինչն այսօր չձևայնացված չէ, կարող է ձևայնացվել վաղը՝ նոր հայտնագործությունների, գիտության անընդհատ զարգացման և ձևայնացման նոր ուղիների բացահայտման շնորհիվ: Մակայն այդ ընթացքը բացարձակ չէ և միշտ էլ կլինեն գիտելիքի այնպիսի երանգներ, շերտեր, որոնք ենթակա չեն ձևայնացման (տե՛ս Բրուսյան. 2008), ուստի դրանց նկատմամբ կիրառելի չէ տեսությունների պլատոնյան կաղապարը: Իսկ այն դեպքում, երբ ինչ-որ չափով իրականացվում է ձևայնացումը մինչ այդ չձևայնացված համակարգերում, ապա ըստ հոռոսցյան կաղապարի, ստացված գիտելիքներին հնարավոր է դառնում ավելացնել պլատոնյան կաղապարով ձեռք բերվող գիտելիքներ (այդ մասին են վկայում մաթեմատիկական լեզվաբանությունը, մաթեմատիկական կեն-

սաբանությունը և նման այլ գիտական համակարգեր:

Ինչպես պլատոնյան, այնպես էլ՝ հռոդոսցյան կաղապարներում մետատեսության զինանոցը (ապարատը) ներառում է մեթոդաբանական այնպիսի հնարներ, եղանակներ, միջոցներ, որոնք սահմանափակված չեն ամփոփելու միայն բովանդակային կամ էլ միայն ձևական, ձևայնացված բնույթի տարրեր: Մա հիշատակված կաղապարների կարևոր հատկություններից է: Մակայն դիտարկվող կաղապարների այս նմանությունը չի բացառում տարբեր տարրերի առկայությունը դրանցում: Վերջիններս հնարավորություն են ընձեռում միայն այս կամ այն կաղապարի գործունեության դաշտում լուծելու այնպիսի խնդիրներ, որոնք ի գործու չէ լուծել նշված կաղապարներից որևէ մեկը:

Այն հարցը, թե ինչ պահանջներ են ներկայացվում պլատոնյան կաղապարով ստեղծված տեսություններին, գրավել է մաթեմատիկոսների և մաթեմատիկական տրամաբանությամբ զբաղվողների ուշադրությունը, ովքեր նկատելով և մեկնաբանելով Հիլբերտի դիրքորոշումն այս հարցում, պնդում են, որ անհակասականության պահանջից բացի տեսությանը կարող են ներկայացվել այլ պահանջներ, մասնավորապես՝ անկախության և լրիվության պահանջները: Աս արդեն մեթոդաբանական-տրամաբանական գիտության մեջ հայտնի եզրահանգում է, ըստ որի, եթե տեսությունն անհակասական է, ապա այն ընդունելի է առանց անկախության և լրիվության պահանջների:

Պլատոնյան կաղապարի այսօրվա ամենահղկված ձևը դիտարկելի է մաթեմատիկա և մետամաթեմատիկա, տրամաբանություն և մետատրամաբանություն) զուգակցություններում: Մաթեմատիկայի և մետամաթեմատիկայի փոխհարաբերության պլատոն-

յան կաղապարի նկատմամբ առաջին հիմնական պահանջը դիտարկվող տեսության ձևայնացումն է: Մետամաթեմատիկան, որը մեթոդ է ձևայնացված մաթեմատիկայի համար, ձևայնացված չէ, քանի որ այն օգտվում է բովանդակային ձևերից ու եղանակներից: Մինչդեռ տեսության և մետատեսության հռոդոսցյան կաղապարի դեպքում մետատեսության քննարկման առարկան՝ տեսությունը, ձևայնացված չէ: Մա շատ կարևոր հանգամանք է: Հռոդոսցյան կաղապարը տարբեր դրսևորումներով է հանդես գալիս:

Ինչպես վերը նշվեց, չձևայնացված տեսությունները շատ ավելի են, քան ձևայնացվող տեսությունները: Ուստի, ձևայնացման պահանջի բացակայությունը հնարավորություն է տալիս մետատեսության և տեսության փոխհարաբերության ոլորտն ընդգրկել ավելի մեծ թվով տեսությունների, դրանով իսկ բացահայտելով նոր հատկություններ տարբեր տեսություններում:

Հարկ է վերստին ընդգծել, որ, ինչպես պլատոնյան, այնպես էլ հռոդոսցյան կաղապարներում մետատեսության ապարատը ներառում է մեթոդաբանական-տրամաբանական այնպիսի հնարներ, եղանակներ, որոնք չունեն միայն բովանդակային, կամ՝ միայն ձևական, ձևայնացված բնույթ: Մակայն այս ընդհանուր նմանության հետ այդ կաղապարներում մետատեսություններն ունեն որոշակի տարբերություններ, որոնք կարող են էական դեր խաղալ համապատասխան տեսության վերլուծության ոլորտում՝ համապատասխան մետատեսության միջոցով:

Գիտության զարգացման ներկա փուլում մետափիլիսոփայությունը ևս կարող է ստեղծվել պլատոնյան և հռոդոսցյան կաղապարներով: Պլատոնյան կաղապարով մետափիլիսոփայություն ստեղծելու համար

անհրաժեշտ է, որ մետատեսության օբյեկտ լեզուն ամբողջովին ձևայնացված լինի: Ակնհայտ է, որ տվյալ դեպքում օբյեկտ լեզուն՝ փիլիսոփայությունը, չի կարող բավարարել նշված պահանջին, չի կարող ամբողջովին ձևայնացված լինել: Ասվածը բավական է, որպեսզի պարզ լինի, որ մետափիլիսոփայությունը չի կարող ներկայացվել որպես ինքնուրույն կառույց՝ պլատոնյան կաղապարի եղանակով:

Մետատեսությունների երկու կաղապարների ընդհանուր բնութագրումից հետո հարկ է նշել, որ եթե պլատոնյան կաղապարն իր կայուն տեղն ունի մետատեսությունների որոշակի բնագավառներում, և վերլուծողներն այսօր միարժեք են գնահատում այն, ապա այլ է վիճակը հռոդոսցյան կաղապարի մեկնաբանման և գնահատման հարցում: Հռոդոսցյան կաղապարի շրջանակներում անհրաժեշտ է տարբերել մի շարք կոնկրետ կաղապարներ: Փիլիսոփայության համար մետափիլիսոփայություն ստեղծելու հնարավորությունը պետք է փնտրել Հռոդոսցյան եղանակով ստեղծվող կաղապարում, որի հիմքում ընկած է «ֆիզիկա և ֆիզիկայից հետո» բանաձևը: Այն սովորաբար տարածվում է «լեզու և լեզվի մասին լեզու» հիմքի վրա և հայտնի է որպես «օբյեկտ լեզու և մետալեզու» փոխհարաբերություն: Չարլզ Մորիսի առաջադրած այս բանաձևը (Moris 1938) վերախմաստավորել կամ պարզաբանել է Ռ.Կառնապը հետևյալ կերպ. «Այն լեզուն, որի մասին խոսվել է որևէ համատեքստում, կոչվում է «օբյեկտ լեզու»։ Լեզուն որով խոսում ենք առաջին լեզվի մասին, կոչվում է «մետալեզու» (Carnap 1948: 2): Այս բացատրությունը դարձել է դասագրքային (տե՛ս նաև՝ Mendelson 1963: 32; Stoll: 161-162): Այն տեղ է գտել բոլոր բառարանների դիտարկվող խնդրին վերաբերող տեքստերում: Մա-

կայն մի հարց ևս կարիք ունի հստակեցման: Ինչպես պետք է հասկանալ նշված դարձվածքներում *լեզու* հասկացությունը՝ բնական (խոսակցական), թե՞ արհեստական:

Հռոդոսցյան կաղապարը կարող է ընդգրկել լեզվի երկու ըմբռնումներն էլ՝ խստորեն տարբերակելով դրանք՝ որպես երկու մետաբազմություններ: Այդ դեպքում, բնականաբար, հռոդոսցյան կաղապարը չի կարող ունենալ մի միասնական արտահայտություն, այլ բաղկացած կլինի մի շարք կաղապարներից: Երբ հռոդոսցյան կաղապարում և՛ մետալեզուն, և՛ օբյեկտ լեզուն պատկանում են բնական լեզուներին, ապա գործ ունենք հռոդոսցյան կաղապարի տարատեսակի հետ:

Դիտարկվող խնդրի տեսակետից պակաս հետաքրքիր չէ այն տարբերակը, երբ մետալեզուն և օբյեկտ լեզուն արտահայտվում են արհեստական լեզուների միջոցով: Այդ դեպքում օբյեկտ լեզուն կարող է ձևայնացված լինել: Հետևաբար «մետալեզու-օբյեկտ լեզու» կառույցը հռոդոսցյան կաղապարի օրինակ չէ:

Այսպիսով, պլատոնյան և հռոդոսցյան կաղապարները գործում են տարբեր հարթություններում: Առաջինի համար պարտադիր է դիտարկվող տեսության ձևայնացումը, իսկ երկրորդին բնորոշ չէ այդ սահմանափակությունը, և այն կարող է գործել բնական լեզվի դաշտում՝ հարստացնելով պլատոնյան կաղապարի օգնությամբ ստեղծվող մետատեսությունները (այս մասին տե՛ս 2008, 2009):

Փաստարկման նկատմամբ մետատեսություն ստեղծելու խնդիրը մի քիչ այլ է, քանի որ փաստարկումն ինքնին մեթոդ է: Այն հարցը, թե մետափաստարկումն իրականում գոյություն ունի և կարող է գործածվել փաստարկման տեսությունում, թե՛ ոչ, կախված է

այն բանից, թե ինչ դաշտում է այն կիրառվում: Եթե փաստարկումը վերաբերում է գիտության բնագավառին, որտեղ մենք գործունենք ձևայնացված դրույթների, ձևայնացված համակարգերի հետ, ապա մետափաստարկումը կիրականանա ըստ պլատոնյան կադապարի, իսկ եթե այն կիրառվում է առօրյա բնական լեզվի գիտական դաշտում, երբ հետազոտվող, քննարկվող դրույթները ձևայնացման հետ անմիջական առնչություն չունեն, «մետափաստարկում» տերմինը կկիրառվի ըստ հռոդոսցյան կադապարի:

Ուշագրավ է, որ 2010 թ. Ամստերդամում տեղի ունեցած փաստարկմանը նվիրված Փաստարկման հետազոտությունների միջազգային ընկերության 7-րդ միջազգային համաժողովին (հունիսի 29-ից հուլիսի 2-ը) ներկայացված մի քանի զեկուցումներ (տե՛ս Finocchiaro 2010; Cohen 2010) նվիրված են մետափաստարկմանը: Դրանք հետաքրքիր նյութ են հետագա վերլուծության համար, քանի որ մետափաստարկման մասին ներկա հետազոտության հեղինակի հոդվածը (Hovhannisyán 2007) մինչ այդ հայտնի միակ հրատարակված գործն էր այդ թեմայի շուրջ:

Մ.Ֆինոկիարոյի պնդմամբ, «մետափաստարկները փաստարկներ են փաստարկների վերաբերյալ և կարող են տարբերվել հիմնարար փաստարկներից»: Այս կշռադատությունը որպես մետափաստարկման սահմանում դիտարկելու դեպքում դժվար չէ նկատել, որ այն «նեղ սահմանում» է, ուստի անընդունելի տրամաբանության տեսակետից: Իսկ եթե այն դիտարկենք որպես մետափաստարկի սոսկ նկարագրություն, ապա ակնհայտ է, որ այն թերի է: Օբյեկտիվ դատելու պարագայում պետք է ասել, որ հեղինակն՝ ինքը, նկատում է իր հայտարարությունների ոչ լրիվությունը, հետևաբար նան՝ ոչ ճշգրտությունը, հայտարարելով՝ «Մետա-

փաստարկները առկա են ճանաչողական պրակտիկայի բոլոր բնագավառներում, միշտ գիտական աշխատանքներում ուսումնասիրվել են բացահայտ, իսկ որոշ աշխատանքներում՝ ոչ բացահայտ կերպով» (Finocchiaro 2010: 81):

Դ.Կոհենը նշում է, որ փաստարկների միջև «գոյություն ունեցող կարևոր և հատկանշական տարբերությունները պարզելու համար անհրաժեշտ է հայեցակարգային տարբերակում, ինչպես արված է կանտյան տրանսցենդենտալ փաստարկներում, Ռեյխենբախի գործնական մետափաստարկման մեջ, իսկ ավելի խելամիտ՝ խաղաձևաբանական «խախտման» ռազմավարություններում» (Cohen 2010: 97):

Այս առաջարկը թերևս փոքր հնարավորություն է ընձեռում մետափաստարկման էությունը բացահայտելու համար:

Մետափաստարկման անմիջականորեն վերաբերող զեկուցումներին զուգահեռ դիտարկվող գիտաժողովում կարդացվել են փաստարկման այլ խնդիրներին վերաբերող զեկուցումներ, որոնք կարող են ինչ-որ իմաստով օգնել բացահայտելու մետափաստարկում հասկացության բովանդակության այս կամ այն երանգը: Դրանցից է Ս.ՄակԷվոյի Վերիֆիկացիան և փաստարկումը (McEvoy 2010: 150) հարցադրումը, որտեղ հեղինակը զարգացնում է այն միտքը, թե «մարդու խոսելաճը», որը ներառում է ռիթմիկ որակներ, հոռոտության առաջանալուց ի վեր ենթադրվում է, որ ազդեցություն է գործում վիճողի ներկայացրած փաստարկների համոզիչ լինելու վրա: Ս.ՄակԷվոյը կոչ է անում քննել այն հարցը, թե ինչպես կարելի է բովանդակային առումով անիմաստ ռիթմիկ միավորները վերածել բովանդակային և փաստարկելի իմաստ ունեցող միավորների:

Լ.Գրոարկեն իր գեկուցման մեջ մեկնաբանում է հուզական փաստարկում հասկացությունը: «Ես պնդում եմ, որ կան շատ համատեքստեր, որոնցում հուզական թույլատրելիությունն ավելի կարևոր է փաստարկման մեջ, քան ճշմարտությունը» (Groarke 2010: 118): Ակնհայտ է, որ նման եզրակացությունն անընդունելի է բոլոր նրանց համար, ովքեր ղեկավարվում են ճշմարտությանը, որոնց համար ճշմարտությունը կյանքի ուղեցույց է: Իսկ այդպիսիները զգալի մեծամասնություն են՝ անկախ ցանկացած գործունեներից: Այլ խնդիր է, թե փիլիսոփաներն ինչպես են արժևորում մետափիլիսոփայությունը:

Լեհական *Dialogue and Universalism* հանդեսի խմբագրությունը 2000 թ. 5-6 համարի տիտղոսաթերթում իր վերաբերմունքն է ար-

տահայտում խնդրո առարկա դարձած հարցին՝ Մետափիլիսոփայությունը որպես գիտության, արվեստի և կյանքի իմաստություն:

Դժվար է ասել՝ սա գովասանք է մետափիլիսոփայության հասցեին, թե մի դրույթ, որը դեռևս սպացուցման կարիք ունի: Բոլոր դեպքերում, մետափիլիսոփայության էությունը և դերը մետատեսությունների համակարգում հետագա բազմակողմանի վերլուծության կարիք ունի: Նույնը կարելի է ասել փաստարկման և մետափաստարկման վերաբերյալ:

#### ՄԵԶԲԵՐՎԱԾ ԵՎ ՀՂՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բրուտյան, Գ. (2008): Ակնարկներ մետատեսության մասին: Երևան. *Փիլիսոփայության միջազգային ակադեմիա* հրատարակչություն:
2. Բրուտյան, Գ. (2009): «Մետատեսության պլատոնյան և հռոդոսցյան կաղապարները և մետափիլիսոփայության հիմնահարցը». - Ինչպիսին էմ տեսնում XXI դարի փիլիսոփայությունը: Պրակ 8 (էջ 21-43): Երևան. *Փիլիսոփայության միջազգային ակադեմիա* հրատարակչություն:
3. Հովհաննիսյան, Հ.Հ. (2007): «Փաստարկում և մետափաստարկում». - Փիլիսոփայություն և մետափիլիսոփայություն (էջ 186-190): Երևան. *Փիլիսոփայության միջազգային ակադեմիա* հրատարակչություն:
4. Брутян, Г. (1984). “Об одной некорректной экстраполяции”. В сб.: Принцип социальной памяти. Социальная детерминация познания. Тарту.
5. Брутян, Г. (1985). “Философия и метафилософия”. В сб.: Вопросы философии. № 9, сс. 85-90.
6. Ойзерман, Т.И. (2009). Метафилософия. Теория историко-философского процесса. Москва, изд-во. *КАН Н-ПЛЮС*. Российская академия наук. Институт философии.
7. *American Philosophical Quarterly*. (1983), vol. 20, № 1.
8. Carnap, R. (1948). Introduction to Semantics. Chicago: *The University of Chicago Press*.
9. *Cultural Hermeneutics*. (1977), vol. 4. № 2.
10. Cohen, D. (2010). Going for broke: The meta-argumentation of desperation strategies. In: 7<sup>th</sup> International ISSA Conference on Argumentation. June 29-2 July, 2010, (p. 97). *University of Amsterdam*.

11. Finocchiaro, M. (2010). "Meta-Argumentation". In: 7<sup>th</sup> International ISSA Conference on Argumentation. June 29-2 July, 2010, (p. 81). *University of Amsterdam*.
12. Gill, J. (1982). *Metaphilosophy. An Introduction*. Washington.
13. Groarke, L. (2010). "Emotional arguments: Their pedigree and their cultivation". In: 7<sup>th</sup> International ISSA Conference on Argumentation. June 29-2 July, 2010 (p. 118). *University of Amsterdam*.
14. Lazerovitz, M. (1977). *The Language of Philosophy*. Dordrecht, Boston.
15. McEvoy, S. (2010). "Verification and argumentation". In: 7<sup>th</sup> International ISSA Conference on Argumentation. June 29-2 July, 2010, (p. 150). *University of Amsterdam*.
16. *Metaphilosophy* (1964). State University of New York at Albany, Co-Editors: T. Bynum, W. Ruse, M. Lazerovitz. Studies in Metaphilosophy. London, New York.
17. Moris, Ch. (1938). Foundations of the Theory of Science.
18. Nagel, E. and Newman, J.R. (1964). *Godel's Proof*. New York University Press.

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՍՄԻԿ

## ՄԵՏԱՓԱՍՏԱՐԿՈՒՄԸ ՄԵՏԱՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ՏԵՄԱՆԿՅՈՒՆԻՑ

### ԱՍՓՈՓՈՒՄ

Ժամանակակից գիտական և փիլիսոփայական գրականության մեջ գործածվող *մետա* «μετά» ծագումով հունարեն բառի բազմիմաստության առաջ բերած խառնաշփոթության արդյունքում ավելի ու ավելի է ծառանում դրանով ստեղծված տերմինների (և ոչ թե բառերի, քանի որ այդ նախածանցով ձևավորված բառերն ինքնին տերմիններ են) իմաստի ճշգրտման և համապատասխանաբար դրանց մատնանշած տեսությունների կամ դրանցով ձևավորված մետատեսությունների հստակեցման և տարբերակման խնդիրը:

Ներկա հետազոտության մեջ խնդիր է դրվել կիրառել ակադեմիկոս Գ.Բրուսյանի առաջադրած մետատեսության պլատոնյան և հռոդոսցյան կաղապարները (մոդելները),

փաստարկման նկատմամբ և պարզել, թե արդյոք հնարավոր է ստեղծել մետափաստարկում այդ կաղապարներից որևէ մեկով, հաշվի առնելով դրանցից յուրաքանչյուրի առանձնահատկությունները: Կատարվել է եզրահանգում. փաստարկման ոչ ձևայնացվող համակարգի համար, որն իմացաբանական դաշտ չէ, այլ մեթոդ է, մետատեսության գաղափարը կիրառելի է, եթե պահպանվում են հռոդոսցյան կաղապարի նկատմամբ առաջադրվող պահանջները: Այս դեպքում անհրաժեշտ է նաև հաշվի առնել փաստարկման հռոդոսցյան կաղապարի տարբեր տարատեսակների հնարավորությունները և կիրառել ամենաընդունելի տարբերակը: Ինչ վերաբերում է փաստարկման պլատոնյան կաղապարին, ապա այն միանշանակ կիրա-



ռելի է այնպիսի կշռադատություններում, որոնք ամբողջովին ձևայնացված են և դիտարկելի՝ որպես մի ընդհանուր միասնական տեսություն:

*Հանգուցային հասկացություններ. մետատեսություն, մետափիլիսոփայություն,*

մետափաստարկում, մետատեսության պլատոնյան կադապար, մետատեսության հռոդոսցյան կադապար, մետափաստարկման պլատոնյան կադապար, մետափաստարկման հռոդոսցյան կադապար:

HOVHANNISYAN HASMIK

## METAARGUMENTATION FROM THE PERSPECTIVE OF METAPHILOSOPY

### SUMMARY

In modern scientific and philosophical publications the term “meta” got different meanings that even sometimes contradict one another and usually do not keep their exact meanings resulting in certain conceptual chaotic picture. This situation demands to introduce necessary corrections and formulate strict interpretations for suggested conceptions of meta theoretical systems.

The goal of this paper is applying academician G.Brutian’s conception of Rhodesian and Plato’s models of the theory of argumentation and the possibility of building the system of metaargumentation by revealing the field of application of these two models. This paper proves that the Rhodesian model can be successfully applied to non-formal systems having methodological ra-

ther than axiological nature if the demands of the model are satisfied. This requires also to take into account the possible variations of Rhodesian models of argumentation and choose the most effective of them. On the other hand the Plato's model of argumentation is applicable to fields of argumentation that are completely formalized and could be presented as whole general theory.

*Key concepts:* metatheory, metaphilosophy, metaargumentation, Plato's model of metatheory, Rhodesian model of metatheory, Plato's model of metaargumentation, Rhodesian model of metaargumentation.

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՇԵՐՏԱՎՈՐՄԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄՆԵՐԸ «ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ» ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅՈՒՄ

Սոցիալական տարածությունը գործառնապես մեկը մյուսից կախված սոցիալական գործընթացների, սոցիալական հարաբերությունների, սոցիալական պրակտիկների, դիրքորոշումների ու սոցիալական դիրքերի բազմամակարդակ տարածությունն է: Ներկայիս հասարակություններում սոցիալական դիրքը որոշվում է սոցիալական տարածության և ֆիզիկական տարածության վրա անհատների ունենցած արտոնություններով:

XX դարի վերջին քառորդը համարվում է «համաշխարհային պատերազմ տարածությունից անկախ լինելու համար» (Бауман 2004: 18): Հասարակությունը ժամանակի ընթացքում ծնել է ոչ այնքան հասարակական դասակարգերի բախումներ, որքան կոնկրետ գաղափարախոսության ներքո հաստատված գերատիրության իր տրամաբանությունը բնորոշող տարածություններ (Турен 1998: 29): Որքան մարդ անկախ է ֆիզիկական տարածության մեջ տեղաշարժվելու գործընթացում, այնքան նա բարձր դիրքեր է գրավում սոցիալական աստիճանակարգում:

Յուրաքանչյուր հասարակության մեջ անկախ կոնտեքստից ոմանք իրենց բարձր են դասում մյուսներից և տիրապետում են ավելի շատ իշխանության, հեղինակության և հնարավորությունների (Энджел 2007: 537): Որոշ անհատներ միշտ «ավելի հաջողակ են» կամ «ավելի լավ վիճակում են», որպեսզի հասնեն ցանկալիին, քան մյուսները:

«Հասարակական դասակարգի» հասկացությունը ստեղծվել է կապիտալիստա-

կան միկրոտնտեսության շրջանակներում, և գիտության համար անհրաժեշտություն է այն դիտարկել որպես պատմականորեն յուրօրինակ աշխարհամակարգ: Այստեղ սոցիալական շերտավորումը չի դիտարկվում որպես ֆորմալ համակարգ, քանի որ այդ պայմանում այն կորցնում է իրականությունը մեկնաբանելու ունակությունը՝ զերծ մնալով շարժունությունից: Սոցիալական շերտավորումը պետք է դիտարկել որպես անընդմեջ փոփոխվող գաղափարախոսական շղարշով ծածկված էվոլյուցիայի ենթարկվող և փոփոխվող կառույց, քանի որ կարևոր է թե կոնկրետ տարածաժամանակային կոնտեքստում հասարակական որ կառույցին է անհրաժեշտ սահմանել սոցիալական շերտավորումը: Անհատի պատկանելությունը որոշակի սոցիալական դասակարգի ամբողջականությամբ կախված է սոցիալական իրականության մեջ ընկալումներից և համոզմունքներից, սեփական շահերին հետևելուց և նպատակի ու միջոցների միջև կոմպրոմիսներ գտնելուց (Валлерстайн 2001: 59):

Սոցիալական շերտավորումը ենթադրում է սպառողների՝ միմյանց ավելի բարձր կամ ցածր կարգավիճակ կրողների գնահատման ընկալելի աստիճանակարգեր:

Գիլբերտի և Կոուլի մոդելում, ինչպես դասականների մոտ էր, շեշտադրումը կատարվում է տնտեսական տարբերությունների վրա: Ռիչարդ Քուլմենի և Լի Ռեյնոլտսերի մոտեցման մեջ հաշվի է առնվում փոխհարաբերության ձևն ըստ աշխատանքի այն մարդկանց միջև, որոնք իրենց հետ հավա-

սար են ըստ կարգավիճակի կամ էլ սոցիալական աստիճանակարգի ավելի բարձր կամ ցածր սանդուղքի վրա են կանգնած (Gilbert, Kahl, 1982: 16): Սոցիալական կարգավիճակի անհամապատասխանության խնդիրը կապված է որոշ անհատների միաժամանակ ինչպես շատ ցածր, այնպես էլ շատ բարձր կարգավիճակի ցուցանիշներ ունենալու հետ: Ինչպես օրինակ՝ բարձրագույն ուսումնական հաստատությունների պրոֆեսորը կարող է ունենալ ցածր եկամուտ, բայց բարձր գիտական և մշակութային կրթություն: Այդ մարդիկ չեն ընկնում ոչ մի սոցիալական կատեգորիայի մեջ (Энджел 2007: 549):

Հասարակությունների բարդացումն առաջ է քաշում սոցիալական շերտավորման նոր չափանիշների առաջացում: Անհատի սոցիալական կարգավիճակ որոշելը վերածվում է բարդ և բազմամակարդակ գործընթացի: Սոցիալական տարածության մեջ անհատի դիրքավորումը սոցիալական շերտավորման աստիճանակարգում տեղի է ունենում սոցիալական ինտեգրացիայի միջոցով: Ժամանակակից հասարակություններում սոցիալական ինտեգրացիան իրականանում է ոչ միայն աշխատանքի միջոցով, այլ նաև կրթության և սպառման միջոցով (Touraine 1971: 7):

Երկար տարիներ սոցիալական ոլորտի հետազոտողների կարծիքով հասարակական շերտավորումն ունեցել է երկու՝ ցածր և բարձր մակարդակներ: Սակայն վերջին դարաշրջաններում մարդկությունը գործ ունի շուկայական հասարակությունների հետ, որտեղ հասարակության անդամների միջև համագործակցությունը տեղի է ունենում երեք մակարդակներում՝ ցածր, միջին և բարձր, որն ակնհայտ է դառնում շահագործման ընթացքում: Միջին

մակարդակը յուրօրինակ կապող օղակ է իշխող և իշխվող դասակարգերի մեջ: Այն ստանում է արտադրանքի ավելցուկ՝ ցածր շերտին աշխատացնելու արդյունքում, բայց ենթարկվում է միևնույն բախտին, երբ աշխատացվում է բարձր դասակարգի կողմից: Բարձր դասակարգի ներկայացուցիչները, փորձում են ամեն ինչ անել, որպեսզի պահպանեն հասարակության եռաստիճան մակարդակը՝ իրենց արտոնություններն ու հնարավորությունները ամրագրելու համար, իսկ ստորին մակարդակը փորձում է վերացնել միջին մակարդակը՝ հասարակական կարգը հեշտությամբ փոփոխելու նպատակով (Валлерстайн 2001: 59-62):

Բարձր կամ իշխող դասակարգի սահմանումները վերջին ժամանակաշրջանում ենթարկվել են փոփոխության, քանի որ փոփոխվում են նաև ընկալումները և այն չափանիշները, որոնցով դիտարկվում են հասարակության անդամները: Իշխող դասակարգին են պատկանում այն անհատները, ովքեր մատակարարում և վերահսկում են մասնավոր ներդրումները. այդ անհատները կարող են լինել միայն իրենց կոլեկտիվ ներդրման հետ նույնականացվողները, որոնք կոնֆլիկտի մեջ են մտնում հասարակության սպառման աճ պահանջող և մասնավոր կյանքի փոփոխման կարիք ունեցող անդամների հետ (Touraine 1971: 47): Հասարակական շերտավորման այս երեք մակարդակները կարելի է տեսնել կապիտալիստական համաշխարհային տնտեսության բոլոր ինստիտուտներում (Валлерстайн 2001: 59-62):

Այդպիսի բարդություններից և խառնաշփոթից դուրս գալու ելքերից մեկը «ներկա ժամանակներում հասարակություններում գոյություն ունի հավասարություն» դատո-

դության հաստատումն է: Սակայն այդ հավասարությունը չի կարելի դիտարկել որպես համընդհանուր սոցիալական և քաղաքական հավասարություն: Դասակարգերի գոյությունը հերքելն անհնար է:

Սոցիալական շերտավորման էությունը հասկանալու համար անհրաժեշտ է դիտարկել վերջինիս կառուցվածքը՝ ֆորմացիաների տեսանկյունից: Փոխվում են ժամանակները, փոխվում են ֆորմացիաները, բայց սոցիալական դասակարգերը մնում են անփոփոխ (Wright 1985: 15): Սոցիալական շերտավորումը միշտ էլ գոյություն է ունեցել, խնդիրը միայն այսօր գոյություն ունեցող միջին դասակարգի մեջ է: Այս շերտում գտնվող անհատները մի կողմից թվում է, թե կողմնորոշված չեն իրենց կարգավիճակի վերաբերյալ, մյուս կողմից կազմում են բոլոր հասարակությունների մեծամասնությունը, քանի որ բոլոր առումներով տարբերվում են թե՛ չքավորներից, թե՛ հարուստներից՝ էլիտայից (Арендт 1996):

Սոցիալական շերտավորման յուրահատկությունը ժամանակակից հասարակությունում ավելի ակնհայտ է, երբ դիտարկվում են մշակութային արժեքների տարբերությունները (Touraine 1971: 14):

Յուրքանջուր սոցիալական դասակարգն անցնում է զարգացման երեք փուլ՝ ստեղծման, կայունության, անկման: Ընդ որում՝ սոցիալական շերտավորման փուլային ընթացքը չունի ցիկլիկ բնույթ՝ յուրաքանչյուր սոցիալական շերտ ստեղծվում է նորովի՝ նախորդի կործանումից հետո: Սոցիալական շերտավորումը որևէ գաղափարի շուրջ մարդկանց կարճաժամկետ ստեղծված միավորում է, այն կազմակերպված երևույթ չէ: Վերջինիս կազմակերպվածությունը արդեն ձևավորվում է էթնոագգերում, որը կարող է օգտագործվել թե՛ կարճաժամկետ, թե՛ երկա-

րաժամկետ պլաններում: Կարճաժամկետ պլանում էթնոագգերի ձևավորումը նպատակ ունի փոփոխելու բարիքների բաշխվածությունը՝ համաձայն որոշակի ինքնաբուխ «ստատուսների»՝ բարեկամություն, լեզվի, կրոն, քաղաքացիություն և այլն (Валлерстайн 2001: 61-63):

Դասական սոցիոլոգիան փորձել է միավորել մշակույթը, սոցիալական կազմակերպվածություններն ու էվոլյուցիան, որպեսզի ձևավորի այն ահռելի մեծության մշակութային, սոցիալական և պատմական անսամբլները, որոնք անվանվում է հասարակություն, բայց ժամանակակից հասարակությունը հնարավոր չէ դիտարկել այդ միասնության ներքո: Ժամանակակից աշխարհը հասկանալու համար անհրաժեշտ է անջատել այդ միավորումները և առավելություն տալ մշակույթին: Ժամանակակից աշխարհում սոցիալական շերտավորման նախապայմանը մշակույթն է: Ժամանակակից մշակույթը ստեղծում է նոր վերաբերմունք աշխարհի նկատմամբ, այն դեպքում, երբ վերաբերմունքը հասարակական կյանքին մնում են անցյալում: Այդպիսի մշակույթն ընդհանուր հասարակական հարաբերությունների համար շրջանակ չէ, այն արժեքների միավորում չէ, և, առավել ևս, «գերիշխող գաղափարախոսություն չէ»: Մշակույթն այսօր իմաստ է, միջոցների և մոդելների ամբողջականություն, որոնցով գերակշռող դասակարգն իրականացնում է իր իշխանությունը՝ ընտրելով վարքային մոդելներ և սոցիալական արժեքներ, որի հետևից կգան հասարակության մեծամասնությունը: Այդպիսով, մշակութային նորմերն ու արժեքները ենթարկվելով վերահսկողության իրենց իսկ ստեղծողների կողմից դառնում են սոցիալական կառուցվածքի կարևորագույն սկզբնապատճառը, որին էլ հետևում են

կոնկրետ գործողությունները: Այսինքն առաջ է գալիս հասարակական գործունեության պատմական մակարդակը (Турен 1998: 17):

Այսօր դասակարգերի բաժանվածությունը պայմանավորված չէ նրանով, թե որքան կապիտալի է անհատը տիրապետում, աշխատում է կամ չի աշխատում, ինչպես է անցկացնում իր ազատ ժամանակը, այսօր կարևորն այն սիմվոլներն են, որոնցից օգտվում է անհատը, քանի որ ժամանակակից աշխարհը սիմվոլների տիրապետության դարաշրջան է: Այսօր աշխատանքը կյանքի ոճ է: Ոչ մի հասարակությունում գոյություն չունի դասակարգային պայքար, քանի որ աշխատանքը վերածվել է կյանքի ոճի: Ամենուր գոյություն ունեցող կապիտալի դեմ պայքարը, գների բարձրացումն ու աշխատանքը կապված են վերջինիս՝ որպես պայքարի ձևի հետ: Այսօր աշխատավորը միայն երևակայում է, թե ինքը պայքարում է դասակարգային անհավասարության դեմ, քանի որ այսօր անհնար է պայքարել, այսօր գոյություն չունի համակարգված գիտակցություն դասակարգերի մասին, այսօր երևակայությունն է որոշում, թե որ դասակարգին է անհատը պատկանում (Бодрийяр 2000: 70):

Սկսած XX դարասկզբից եվրոպական պետության անկումը, արևմտյան ավանդույթների կործանումը, որը վտանգում էր ամբողջ եվրոպական ազգերի գոյությունը, քիչ քանակությամբ կապիտալիստական դասի առկայությունը, որոնց ունեցվածքը կործանել է մնացյալ ամենի ունեցվածքը, սոցիալական շերտավորման հիմնական և կարևորագույն նախապայմանն են (Арендт 2008: 13-38):

Ներկայումս հասարակությունը բաժանված է անձայր սոցիալական շերտերի, որոնց առաջացման հիմնական պատճառը հասարակությունը և լրագրողներն են, նրանք են թելադրում վարվելակերպի կանոնները, նրանք են բաժանում հասարակությունը սոցիալական շերտերի, որոնց ըստ հեռուստատեսության, հնարավոր չէ պատկերացնել մեկն առանց մյուսի, բայց լրագրողը գոյություն չունեցող, վերացական հասկացություն է, քանի որ այն միայն զենք է իշխող քաղաքական և տնտեսական ուժերի միջև՝ սեփական տեսակետներն արտահայտելու համար: Վերջինիս միջոցով է, որ ստեղծվում են տարբեր սոցիալական դասակարգերին բնորոշ սոցիալական շերտերը (Бурдье 1998: 36):

Դասակարգն ազենտների միավոր է, որոնք ունեն նմանատիպ դիրք, որոնք, տեղավորված լինելով նույնական պայմաններում և ենթարկվելով նմանատիպ իրավիճակներին, ունեն բոլոր հնարավորությունները տիրապետել նմանատիպ դիսպոզիցիաներին և շահերին՝ արտադրելով նմանատիպ պրակտիկներ և դիրքեր (Бурдье 2001: 17):

Երբ իրերը, նշաններն ու գործողություններն ազատվում են իրենց գաղափարներից և հայեցակարգերից, գոյից և արժեքներից, ծագումից և նշանակումներից, նրանք կանգնում են անդադար վերարտադրության ճանապարհին: Ամբողջ գոյը շարունակվում է արտադրվել, չնայած արդեն իմաստ չկա գոյության: Այսինքն առաջընթացի գաղափարն ինքն իրենով վերացել է, բայց առաջընթացը շարունակվում է: Հարստության գաղափարը, որը ենթադրում է արտադրություն, կորել է, բայց արտադրությունն ընթանում է ավելի լավ տեմպերով: Եվ երբ վերանում է առաջնային պատկերացումը նրա վերջնական նպատակների մասին, արտադրության ընթացքն արագանում է (Бодрийяр 2000: 12): Այսօր գոյություն չունի ոչ մի դասակարգ, բուր-

ժուազիան վերացել է՝ դրանով իսկ ծնելով անդասակարգ հասարակություն:

Սոցիալական կարգավիճակը, որը զբաղեցնում է անհատը նրան իր կյանքի ողջ ընթացքում ուղղորդող որոշիչ հասկանիչներից է, և նրան ամբողջ հասարակությունից՝ հասարակական հարաբերություններից, ընկալումներից և նվաճումներից առանձնացնող կողպեքի բանալի: Սոցիալական ստատուսը այն դիրքն է, որը զբաղեցնում է անհատը կամ ընտանիքը համապատասխան գերակշռող մշակութային բարիքների ստանդարտների, իրական եկամուտների, նյութական բարիքների և տվյալ կոլեկտիվի գործունեության խմբային ձևերի մասնակցության համար (Бодрийяр 2003: 13):

Սոցիալական շերտավորման կարևորագույն հիմնախնդիրներից մեկը դասակարգային պայքարն է, որն ի սկզբանե ձևավորվել է զարգացած երկրներում, և, հետագայում տարածվել ամբողջ աշխարհում, որտեղից էլ գոյություն ունի «երրորդ աշխարհ» հասկացությունը դեռևս 1847-ական թվականներից, ինչպես նաև «դարձեք քաղաքականության մեջ ամենագոր, իսկ մնացածը կղասավորվի» Քվամե Նկումուի հայտնի արտահայտությունը (Валлерстайн 2004: 31): Համաձայն Վալլերստայնի այսպիսի դիրքորոշում են ունեցել մինչև այսօր սոցիալիս-

**Процесс обучения.** С.Мериам и соав. Отмечают, что из трех отличий контекста обучения, в третьем налицо наименьшее количество различий между взрослым и детским образованием (Merriam, Caffarella & Baumgartner 2007).

К.Хул утверждал, что процесс обучения у взрослых и детей вообще идентичный (Houle 1961/1993). М.Ноулс, сформулировавший ос-

новные положения андрагогики (отрасль педагогической науки, раскрывающий теоретические и практические проблемы обучения, воспитания и образования взрослого человека в течение всей его жизни), напротив, утверждает, что в основе взрослого обучения лежат шесть основных принципов, отличающих его от детского обучения (Knowles, Holton & Swanson 2005):

1. взрослому человеку, который обучается, - обучающемуся (а не обучаемому) принадлежит ведущая роль в процессе обучения;
2. он, являясь сформировавшейся личностью, ставит перед собой конкретные цели обучения, стремится к самостоятельности, самореализации, самоуправлению;
3. взрослый человек обладает профессиональным и жизненным опытом, знаниями, умениями, навыками, которые должны быть использованы в процессе обучения;
4. взрослый ищет скорейшего применения полученным при обучении знаниям и умениям;
5. процесс обучения в значительной степени определяется временными, пространственными, бытовыми, профессиональными, социальными факторами, которые либо ограничивают, либо способствуют этому;
6. процесс обучения организован в виде совместной деятельности обучающегося и обучающего на всех его этапах.

М.Ноулс различает два способа, в которых концептуализируется целенаправленная учеба.

1. «самонаправленное обучение», когда взрослый ученик «способен взять под свой контроль механику и методики собственного образования» (Knowles, Holton & Swanson 2005: 185).

2. "личная автономия", когда взрослый ученик берет на себя полную ответственность за планирование целенаправленных учебных задач для достижения своих целей.

Наиболее полной формой взрослого самонаправленного обучения является та, в которой ученик испытывает внутренние изменения в сознании, в результате внешнего управления учебных задач. Здесь самонаправленное обучение включает в себя критическое осмысление и рассмотрение альтернативов. Таким образом, внешние технические и внутренние рефлексивные параметры самонаправленного обучения сливаются, когда взрослые приходят к пониманию природы знания как ценности, и когда они действуют на основе этой оценки для переосмысления и воссоздания их личных и социальных миров.

М.Ноулс сам представлял педагогику на континууме от «направленная преподавателем» к «направленная студентом».

Исследования показали, что стимул урока, осмысленность деятельности и мотивация к обучению – это те три фактора, которые особенно влияют на обучение взрослых.

***Некоторые рекомендации учителям музыки работающими со взрослыми учениками.***

1. Необходимо учесть тот факт, что для оптимального обучения взрослым необходимо знать причины, для чего тот или иной материал включен в урок .
2. Учителя могли бы рассмотреть вопрос, как именно помочь взрослым взять на себя инициативу собственного обучения и самостоятельно установить цели.
3. Учителя должны инициировать активность взрослых во время урока и выбора репертуара.
4. Надо учитывать тот факт, что если дети могут выучить материал на первый взгляд не так существенный в данный

момент, взрослые хотят приобрести навыки и знания, значимые для них в данный отрезок времени для того чтобы применить их на практике.

5. Необходимо учесть корректировки темпов инструкций для того, чтобы обеспечить достаточное время взрослым для освоения новых навыков.
6. Взрослые вряд ли продолжат учебу, если их мотивации не будут поддержаны.

***Заключение.*** В заключении хотелось бы суммировать ключевые идеи взрослого образования, которые могут быть применены музыкантами педагогами в своей профессиональной деятельности со взрослыми учениками:

- Мотивации взрослых учиться музыке обычно многогранны и сложны, и со временем могут меняться. Учителя музыки, которые работают со взрослыми должны рассмотреть вопрос как именно со временем менялись их собственные мотивации к обучению и как они сходны с ориентациями взрослых учеников.
- Обучение в зрелом возрасте отличается от детского обучения в ряде важных направлений, включающих контекст обучения, студента и процесса обучения. Взрослые ученики добровольно берутся за музыкальную деятельность как самостоятельные, автономные субъекты. Преподаватели музыки должны воспользоваться этими характеристиками, помогать и направлять их самостоятельно принимать обоснованные решения о том, что и как учить.
- В процессе обучения взрослые ученики основываются на своем жизненном опыте. Учителя должны воспользоваться музыкальными воспоминаниями взрослых учеников, по возможности включить в репертуар такие произведения с которыми они уже предварительно знакомы.

- Учителя должны также принять во внимание детский музыкальный опыт взрослых учеников. В случае если эти переживания были отрицательными, или в тех случаях, если у взрослых появились при-

вычки, отрицательно сказывающиеся на новые знания, возможно, потребуется дополнительная поддержка или поощрение учеников для разработки новых способов мышления и занятий.

#### ЦИТИРОВАННАЯ И УПОМЯНУТАЯ ЛИТЕРАТУРА

3. Houle, C.O. (1961/1993). The inquiring mind: A study of the adult who continues to learn (3rd ed.).
4. Norman, OK: Oklahoma Research Center for Continuing Professional and Higher Education.
5. Knowles, M.; Holton, E.F.; Swanson, R.A. (2005). The adult learner: The definitive

- classic in adult education and human resource development (6th ed.). Burlington, MA: Elsevier.
6. Kodály, Z. (1941/1974). Music in the kindergarten. In Z. Kodály, The selected writings of Zoltán Kodály (pp. 127–151). London: Boosey & Hawkes.
7. Merriam, S.B.; Caffarella, R.S.; Baumgartner, L.S. (2007). Learning in adulthood: A comprehensive guide (3rd ed.). San Francisco, CA: Wiley.

КАРОЯН МАРИНЕ

## ВЗРОСЛОЕ МУЗЫКАЛЬНОЕ ОБРАЗОВАНИЕ КАК ИМПЕРАТИВ МЕНЯЮЩИХСЯ РЕАЛЬНОСТЕЙ СОВРЕМЕННОГО ОБЩЕСТВА

### РЕЗЮМЕ

Последние исследования в области взрослого образования доказывают, что взрослые, которые хотят быть активными в музыкальной деятельности или же играть на каком-нибудь инструменте, возлагают на это большие надежды. Теория взрослого образования кажется постоянно меняющейся мозаикой, в которой старые части превращаются в новое видение. В статье делается попытка изучить причины и мотивы образования взрослых, исследовать различия между детским и взрослым об-

разованием, а также выдвинуть идеи о том, как учитель музыки может работать со взрослыми в целях содействия и оптимальной поддержки.

*Ключевые понятия:* образование для взрослых, подходы к обучению взрослых, мотивации учебы, мотивационные модели, контекст обучения, процесс обучения, самонаправленное обучение.

ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԱՐԴԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՎՈՂ ԻՍԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

ԱՄՓՈՓՈՒՄ

Մեծահասակների կրթության ոլորտի վերջին ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մեծահասակները, որոնք ցանկություն են հայտնում ընդգրկվել երաժշտական որևէ ակտիվության շրջանակներում, կամ էլ նվագել որևէ երաժշտական գործիք, շատ մեծ հույսեր են ունենում: Մեծահասակների կրթության տեսությունը այժմ թվում է անվերջ փոփոխվող մի մոզաիկա, որի հին մասերը նոր տեսլական են ստեղծում: Հոդվածում փորձ է արված հետազոտել կրթություն ստանալ ցանկացող մեծահասակների մոտիվներն ու պատճառները, ուսումնասիրել

տարբերությունները երեխաների և մեծահասակների կրթության միջև, ինչպես նաև փորձել օգնել երաժշտության ուսուցչին մեծահասակի հետ աշխատելիս՝ վերջինիս ցանկությունները խթանելու և հնարավորինս մեծ աջակցություն ցույց տալու նպատակով:

*Հանգուցային հասկացություններ:* մեծահասակների կրթություն, ուսման մոտիվացիա, կրթության համատեքստ, ուսումնական գործընթաց, ինքնակառավարվող ուսում:

KAROYAN MARINE

ADULT MUSIC EDUCATION AS AN IMPERATIVE OF CHANGING REALITIES OF MODERN SOCIETY

SUMMARY

The latest research in the field of adult education prove that adults wishing to engage in musical activities and in particular to play a musical instrument are pinned high hopes. Adult learning theory seems ever-changing mosaic, where the old parts are transformed into new vision. In the article there is an attempt to study the causes and motivations of adult education, investigate the differences of children's and adult education

as well as provide ideas on how music teachers could work with adults to promote them optimum support.

*Key concepts:* adult education, causes and motivations of adult education, context of education, the process of education, self-directed learning.

## ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՓՈԽԱԿԵՐՊՎՈՂ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ- ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱԴԱՊՏԱՑԻԱՅԻ ՈՐՈՇ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

Տրանսֆորմացիա (լատիներեն՝ transformation – փոխակերպում) տերմինը ծագել է սկզբնապես օգտագործվել է կրկեսային կամ էստրադային ժանրում՝ հասկացվելով որպես յուրահատուկ հնար, որը հիմնված էր դերասանի կարողության վրա՝ գրիմի, կեղծամի, կոստյումի օգնությամբ արագորեն փոխելու արտաքինը (Советский энциклопедический словарь 1989: 1362): Ժամանակակից ընկալմամբ այդ եզրույթի կիրառումը պայմանավորված է համակարգերի այն արմատական փոփոխությունների որակական բնութագրիչների գնահատման անհրաժեշտությամբ, որոնք կրում են անշրջելի բնույթ և ապագա մոդելի ձևավորման ճանապարհին առաջացնում են անցման որոշակի իրավիճակ:

Սոցիալական փոխակերպումը՝ անհրաժեշտ փոփոխությունների տրված և մշակվող այն չափն է, որի շրջանակներում կատարվում է առավել էականի և հեռանկարայինի ընտրությունը, ինչպես նաև՝ ծրագրերի, նախագծերի, նպատակների, տեխնոլոգիաների, հակասությունների հաղթահարման և այլ ուղիներով իրականացվում է հասարակության ադապտացիան միջավայրի փոփոխություններին՝ (Зыбенко 2009: 303-308):

Դ.Բեյլը սոցիալական փոխակերպումների զարգացման երեք առանցքներ է առանձնացնում. տեխնիկա-տնտեսական, սեփականության հարաբերություններ, քաղաքական և մշակութային զարգացում: Նա ենթադրում է, որ այդ առանցքներն անկախ են,

սակայն կարող են ազդել միմյանց վրա (Bell 1976):

Սոցիալական փոխակերպումների վերլուծությունն ու ընդհանուր սկզբունքների բացահայտումը թույլ է տալիս առավել ադեկվատ ուսումնասիրել հասարակության սոցիալ-պատմական զարգացումը, հստակեցնել պլանայինի և տարերայինի, հնարավորի և իրականի, օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների հարաբերակցությունը, օպտիմալացնել բուն փոփոխությունների գործընթացը: Ուստի և փոխակերպումը ոչ միայն հասարակության կամ նրա որևէ ոլորտի բովանդակության և ֆունկցիաների փոփոխությունն է, այլև անհրաժեշտ պայման՝ հենց փոփոխությունների օպտիմալ իրականացման համար: Այսինքն՝ հասարակության զարգացումը մեծապես պայմանավորված է սոցիալական փոխակերպումների գործընթացների բնույթից, ուղղվածությունից, կիրառվող տեխնոլոգիաներից, նախագծերից և այլն: Մյուս կողմից, քանի որ սոցիալական իրականությունը մարդկային իմաստավորման արդյունք է՝ ունի սուբյեկտիվ հիմքեր, ուստի սոցիալական համակարգի փոխակերպումը սերտորեն առնչվում է միկրոսոցիալական և հոգևոր այնպիսի ոլորտների, ինչպիսիք են ընտանիքը, կրոնական պատկերացումները, ընդհանուր արժեքային համակարգը, կյանքի նկատմամբ հայացքները և ենթադրում է սուբյեկտների գիտակցության մեջ *իմաստի փոփոխություն*:

Փոխակերպումների տիպաբանության ուսումնասիրությունը թույլ է տալիս առանձ-

նացնել դրանց հեղափոխական և էվոյուցիոն ձևերը: Առավել խոր և արագ սոցիալական փոփոխություններ են ծնում հեղափոխությունները, որոնց դեպքում հասարակական ակտիվությունը հասնում է իր բարձրակետին և հասարակության փոխակերպումը իրականացվում է հսկայական արագությամբ: Սոցիալական շատ գործընթացներ տեղի են ունենում տասնյակ անգամ ավելի արագ, քան սովորական ժամանակներում: Սոցիալական հեղափոխական փոխակերպումների վերաբերյալ իր արդիականությունը չի կորցրել հասարակական-տնտեսական ֆորմացիաների հերթափոխության վերաբերյալ Կ.Մարքսի դասական կոնցեպցիան. «Իրենց զարգացման որոշ աստիճանի վրա հասարակության նյութական արտադրողական ուժերը հակասության մեջ են ընկնում գոյություն ունեցող արտադրական հարաբերությունների, կամ-ինչ որ դրա իրավաբանական արտահայտությունն է միայն սեփականության հարաբերությունների հետ, որոնց ներսում նրանք զարգանում էին մինչև այժմ: Արտադրողական ուժերի զարգացման ձևերից այդ հարաբերությունները վեր են ածվում նրանց կապանքների: Այն ժամանակ սկսվում է սոցիալական ռևոլյուցիայի դարաշրջանը: Տնտեսական հիմքի փոփոխվելու հետ միասին շատ կամ քիչ արագ հեղաշրջում է տեղի ունենում ամբողջ վիթխարի վերնաշենքում» (Մարքս, Էնգելս 1956: 427-428): Ըստ Կ.Մարքսի՝ սոցիալական փոխակերպումներն իրականացվում են օբյեկտիվորեն, ընդգրկում են հասարակական կյանքի բոլոր կողմերը՝ արտահայտում են հասարակության զարգացման որակական թռիչքները: Սրանից հետևում է նաև, որ ցանկացած բարեփոխում /ռեֆորմ/ իր բնույթով լինելով սուբյեկտիվ՝ արտահայտում է ոչ թե

որոշ հասարակության, այլ նրա առանձին շերտերի շահերը:

Խորհրդային տարածքի երկրների հետ-սոցիալիստական (շուկայական) տնտեսության անցումն իրականացվեց «վերակառուցման» (перестройка) միջոցով, որը ըստ որոշ հեղինակների՝ չէր կրում հեղափոխության բնույթ: Հիմնական գործոններից մեկը, որով ապահովվեց հետսոցիալիստական երկրների հասարակության փոխակերպումը կապիտալիզմի՝ հասարակական գիտակցության վրա մասսայական ներգործությունն էր տարբեր մեթոդների օգնությամբ, որոնց շնորհիվ փոփոխություն «մտցվեց» մասսաների գաղափարախոսության մեջ: Ըստ էության, լիարժեք օգտագործվեց ինֆորմացիոն հասարակության ռեսուրսը (Бурдье 2007: 87-96):

Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ վերակառուցման արդյունքում իրականացված սոցիալական փոխակերպումը իր մեջ բովանդակում էր մեխանիզմ՝ հասարակության գիտակցությանը հասցնել իր գոյաձևի անհարմարությունները, տվյալ հասարակության մեջ իր ոչ լիարժեք գոյությունը՝ ի թիվս այլ տեխնոլոգիաների օգտագործելով նաև նորացված տերմինոլոգիա (շուկայական տնտեսություն, ...), նախկին հասկացություններին նոր իմաստ վերագրելով կամ փոխելով դրանց՝ մինչ այդ եղած մեկնաբանությունները: Այնուհետև անցում կատարելով հասարակական սուբյեկտից (խորհրդային անձից) դեպի նոր ուրվագծվող սոցիում՝ իրականացվեց դրանից բխող և դրանով պայմանավորված սոցիալական դերերի, դիրքի, սոցիալական արդարության սկզբունքների փոփոխության: Ըստ էության, աշխարհայացքի և արժեհամակարգի փոփոխությունը հանդիսացավ շատ կարևոր և գործուն միջոց նախկին խորհրդային հանրապետություն-

ների՝ կապիտալիզմին անցման սոցիալական փոխակերպման մեխանիզմում (Ахиезер 1996):

Իհարկե, վերակառուցման հիմքում կային նաև բազիսային նախադրյալներ (տնտեսության լճացում, իրական մրցակցության բացակայություն, էկոլոգիական հիմնախնդիրներ և այլն), սակայն ըստ էության դա վերնաշենքային գործոններով պայմանավորված սոցիալ-տնտեսական փոխակերպում էր, որն ուղեկցվում էր անձի և հասարակության սոցիալ-հոգեբանական հիմնախնդիրների սրմամբ, ինչպես նաև նոր հիմնախնդիրների առաջացմամբ: Ընդ որում, թեև դրանք առնչվում են թե՛ նյութական և թե՛ հոգևոր ոլորտներին, սակայն փոխակերպման տիպը իր յուրահատուկ կնիքն է դնում հիմնախնդիրների դրսևորման վրա՝ ենթադրելով դրանց հաղթահարմանն ուղղված ադապտացիոն որոշակի տեխնոլոգիաների կիրառում:

Վերնաշենքային գործոններով պայմանավորված սոցիալ-տնտեսական փոխակերպումների դեպքում առավելապես ազդեցության օբյեկտ է դառնում անձի սոցիալ-հոգեբանական ոլորտը, քանի որ՝

1. Նախ՝ փոխակերպվում է անձի և հասարակական գիտակցությունը՝ հիմքեր ստեղծելով տնտեսական բազիսի փոխակերպման համար,
2. Այնուհետև՝ փոխակերպվող տնտեսական բազիսը հետադարձ հսկայական ներգործություն է ունենում անձի և հասարակության սոցիալ-հոգեբանական ոլորտների վրա՝ վերջին հաշվով դրանք համապատասխանեցնելով նոր արտադրահարաբերություններին:

Այս տիպի փոխակերպումների անցումային ժամանակահատվածի տևողությունը պայմանավորված է ինչպես անձի հոգեկան

ադապտացիայով և հասարակական գիտակցության փոխակերպմամբ, այնպես էլ կիրառվող տեխնոլոգիաների ադեկվատությամբ և արդյունավետությամբ:

Մեր դիտարկմամբ՝ հետխորհրդային փոխակերպվող հասարակությանը բնորոշ հիմնախնդիրների դրսևորումներն են.

**Ա. Տնտեսական անկումը և գործազրկության բարձր ցուցանիշը** – Այս հիմնախնդրի լուծման հիմնական ուղիներն են՝ տնտեսության վերականգնումը և նոր աշխատատեղերի ստեղծումը, որոնց համար լուրջ ներդրումներ և տևական ժամանակահատված է անհրաժեշտ: Ուստի, հասարակության սոցիալ-հոգեբանական ադապտացիայի և սրված սոցիալական խնդիրների օպերատիվ լուծման նպատակով օգտագործվում են նաև հետևյալ օժանդակ տեխնոլոգիաները՝

1. Զբաղվածության կենտրոնների հիմնում, քաղաքացիական ծառայողների մրցութային նշանակում, աշխատաշուկայի ձևավորում, որով փորձ է արվում եղած աշխատատեղերը օբյեկտիվորեն համալրել որակյալ մասնագետներով՝ ստեղծելով սոցիալական արդարության և արդար մրցակցության մթնոլորտ: Մակայն հարկ է նշել, որ այս ոլորտներում դեռևս մեծ է սուբյեկտիվ գործոնների դերը, որի հետևանքով ցածր է դրանց արդյունավետությունը:
2. Շահումով խաղերի լայն տարածում, որով փորձ է արվում գործազուրկների որոշակի մասի մոտ ստեղծել իրավիճակի հեշտ շտկման հույսեր: Մակայն այս ոլորտի թույլ վերահսկողության հետևանքով իրականում դա վեր է ածվում միայն պատրանքի:
3. Հեռուստասերիալների լայն տարածում, որով փորձ է արվում ապագայի նկատմամբ լավատեսությունը կորց-

րած մարդկանց հանել ֆրուստրացիոն վիճակից, նրանց առօրյան «հագեցնել» որոշակի բովանդակությամբ՝ կտրելով անցանկալի իրականությունից: Մակայն լուրջ, բովանդակալից և գեղարվեստական արժեք ներկայացնող սցենարների պակասի և անհրաժեշտ ֆինանսական ներդրումների սղության պատճառով դեռևս ցածր է այս տեխնոլոգիական միջոցի արդյունավետությունը:

**Բ. Սոցիալական ծանր վիճակը, պաշտպանված չլինելու զգացումը** – Այս հիմնախնդրի լուծումը մեծապես պայմանավորված է նախորդ խնդրի բարեհաջող լուծմամբ, հարկային և մաքսային օրենսդրության կատարելագործմամբ, պետական բյուջեի սոցիալական ուղղվածության մեծացմամբ, հումանիտար օգնության կազմակերպմամբ, բանկային համակարգի կայացմամբ (ցածր տոկոսադրույքներով վարկերի տրամադրման հնարավորությամբ), նպաստների և կենսաթոշակային համակարգի բարեփոխմամբ: Միաժամանակ, որպես օժանդակ տեխնոլոգիաներ օգտագործվում են բարեգործական ակցիաներ, հեռուստանախագծերի և առանձին հաղորդաշարերի միջոցով սոցիալական որոշակի խմբերի կամ անհատ մարդկանց խնդիրների լուծում, հովանավորների փնտրտուք, իրավաբանական և սոցիալական խնդիրներով անվճար խորհրդատվության կազմակերպում: Մակայն այս հիմնախնդրի լուծման արդյունավետությունը ցածր է սպասվածից, քանի որ չկարգավորված ԼՂ հիմնախնդրի, տնտեսական շրջափակման, ինչպես նաև ձևավորված մենաշնորհային տնտեսության հետևանքով կարճ ժամկետներում դրանց լուծումը իրատեսական չէ:

**Գ. Հասարակության քաղաքականացվածության բարձր մակարդակը** – Այս հիմնախնդրի լուծման հիմնական ուղիներն են՝ ժողովրդավարական սկզբունքների զարգացումը, քաղաքական կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների, հայրենակցական միությունների ստեղծման համար օրենսդրական նպաստավոր դաշտի ստեղծումը, անկախ հեռուստատեսության և մամուլի ձևավորումը, հանդուրժողականության և բազմակարծության մթնոլորտի ստեղծումը: Այս հիմնախնդրի լուծման կարևոր նախապայմաններ են տնտեսության զարգացումը, օրենսդիր, գործադիր և դատական համակարգերի իրական տարանջատումը, ինչպես նաև անկուսակցական որակյալ կադրերի առավել ներգրավումը կառավարման համակարգ: Մա իրական ժողովրդավարություն տանող ճշմարիտ ուղի է, սակայն չլուծված նախորդ հիմնախնդիրների, ինչպես նաև իշխանության եկող կուսակցությունների կողմից կադրային հարցերի լուծման պրակտիկան դեպի այդ կուսակցություններ են գրավում պատեհապաշտների մեծ մասսա, որով քաղաքական գործունեությունը էապես կորցնում է գաղափարական ուղղվածությունը և հասարակական զարգացման կարևորագույն գործոնի իր դերը:

**Դ. Ընդհանուր արժեքային համակարգի, հոգևոր, մշակութային և բարոյական չափանիշների փոփոխությունը** - Այս հիմնախնդրի լուծման հիմնական ուղիներն են՝ անձի իրավունքների և սեփականության հարաբերությունների օրենսդրական ամրագրումը, խզճի ազատության, գենդերային հավասարության, կրոնական կազմակերպությունների մասին օրենսդրության ընդունումը: Որպես օժանդակ տեխնոլոգիաներ օգտագործվում են տարբեր բնույթի շոուների, հումորային և զվարճալի ակումբների ստեղծումը, քրեա-



կան և էրոտիկ բովանդակության սերիալների ու ֆիլմերի տարածումը՝ փորձելով երիտասարդության եռանդն ու էներգիան ուղղորդել դեպի բարդությունների հաղթահարման, ինքնադրսևորման, ինքնիրականացման ուղի, ինչպես նաև՝ դեռևս ավագ սերնդի մեջ կենսունակ համայնավարական պատկերացումների ազդեցության թուլացմանը: Դրանով միաժամանակ երիտասարդությանը «հուշում են» սեփական արտաքին կամ անձնային տվյալների շնորհիվ նյութական բարեկեցության հասնելու հնարավորության մասին: Սակայն նման օժանդակ տեխնոլոգիաների չարաշահումը հղի է ազգային, մշակութային արժեքներից հեռացման, քրիստոնեական արժեհամակարգի խարխլման, և դրանով իսկ՝ պետական անվտանգության թուլացման վտանգով:

Եթե փորձենք հակիրճ ամփոփել վերը շարադրվածը, ապա կարելի է ասել, որ փոխակերպվող հասարակության սոցիալ-հո-

գեբանական ադապտացիային ուղղված և՛ ռազմավարական և՛ մարտավարական տեխնոլոգիաները Հայաստանի Հանրապետությունում հիմնականում ճիշտ են ընտրված, սակայն օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով պայմանավորված՝ բարձր չէ դրանց արդյունավետությունը: Այդ հիմնախնդրի լուծման, և ըստ այդմ՝ անցումային շրջանի արագ հաղթահարման համար մեծապես կարևորվում են առաջիկա խորհրդարանական և նախագահական ընտրությունները, որոնք մեծ հնարավորություններ են ստեղծում հասարակության սոցիալ-հոգեբանական փոխակերպման այս փուլում հաջողությամբ շարունակելու իրականացնել առնվազն երեք հիմնարար խնդիրների լուծումը՝

1. Ժողովրդավարության ամրապնդում,
2. Հարկային համակարգի բյուրեղացում,
3. Օբյեկտիվ կադրային քաղաքականություն:

#### ՄԵԶԲԵՐՎԱԾ ԵՎ ՀՂՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մարքս, Չ., Էնգելս, Ֆ. (1956): Ընտիր երկեր երկու հատորում, հատ. 1, Երևան:
2. Ахиезер, А.С. (1996). Критика исторического опыта (социокультурная динамика России). Т. 1. Новосибирск.
3. Бурдые, П. (2007). Социология социального пространства. Москва.
4. Зубенко, С.А. (2009). Трансформация социально-экономических систем: тенденции, и факторы. Вестник Тамбовского университета.

5. Иноземцев, В.А. (2000). Современное постэкономическое общество: природа, противоречия, перспективы. Москва.
6. Советский энциклопедический словарь (1989). Москва.
7. Штомпка, П. (1996). Социология социальных изменений. Москва.
8. Штомпка, П. (2005). Социология. Анализ современного общества. Москва.
9. Bell, D. (1976). The cultural contradictions of capitalism. New York.

## ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՓՈԽԱԿԵՐՊՎՈՂ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ- ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱԴԱՊՏԱՑԻԱՅԻ ՈՐՈՇ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

### ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում փորձ է արվում Հայաստանի Հանրապետության օրինակով համառոտակի ներկայացնելու հետխորհրդային փոխակերպվող հասարակության սոցիալ-հոգեբանական ադապտացիային ուղղված որոշ տեխնոլոգիաներ և գնահատել դրանց արդյունավետությունը:

Հեղինակի մոտեցմամբ՝ խորհրդային տարածքի երկրների շուկայական տնտեսության փոխակերպումը պայմանավորված էր առավելապես վերնաշենքային գործոններով, որի դեպքում ազդեցության հիմնական օբյեկտ է դառնում անձի սոցիալ-հոգեբանական ոլորտը: Նախ փոխակերպվում է մարդկային գիտակցությունը՝ հիմքեր ստեղծելով

տնտեսական բազիսի փոխակերպման համար, այնուհետև՝ փոխակերպվող տնտեսական բազիսը հետադարձ հսկայական ներգործություն է ունենում անձի և հասարակության սոցիալ-հոգեբանական ոլորտների վրա՝ վերջին հաշվով դրանք համապատասխանեցնելով նոր արտադրահարաբերություններին:

*Հանգուցային հասկացություններ.* տրանսֆորմացիա, սոցիալ-հոգեբանական ադապտացիա, հեղափոխական և էվոլյուցիոն փոխակերպումներ, հասարակական-տնտեսական ֆորմացիա, բազիս, վերնաշենքային գործոններ:

HOVHANNISYAN ARAQEL

## SOME TECHNOLOGIES OF SOCIAL-PSYCHOLOGICAL ADAPTATION OF POST SOVIET TRANSFORMING SOCIETY

### SUMMARY

In the article an attempt is made to present in brief some technologies of social and psychological adaptation of postsoviet transforming society end evaluation of its productivity by the example of Armenian Republic.

The author puts forward the idea that the transformation of the mode of Soviet economy into market economy was largely preconditioned by superstructural factors. It presumes that socio-psychological sphere of personality becomes the

main object of the impact which in its turn has a huge backward impact on the socio-psychological sphere of individual and society, eventually bringing it into line with the new economic relations.

*Key concepts:* transformation, socio-psychological adaptation, revolutionary and evolutionary transformations, social-economic formation, basis, superstructural factors.

## ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՄՈՏԻՎՆԵՐԸ ՓՈՓՈԽՎՈՂ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Միացյալ ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամ - Հայաստանի 2010 թ. մեր հետազոտության համաձայն Հայաստանի դպրոցներում աշխատում են 42601 ուսուցիչներ, որոնցից 84,6 %-ը կին և 15,4 %-ը տղամարդ: Ուսուցիչների 23 %-ը երիտասարդ է՝ 25-ից 34 տարեկան, 41%-ը միջին տարիքի՝ 35-ից 49 տարեկան, 34 %-ը ավագ տարիքային խմբի՝ 50-64, և 2%-ը կենսաթոշակային՝ 65 և ավել, տարիքային խմբի ներկայացուցիչներ են (Ռ.Բեյլավինա, Է.Ուայլի, Ռ.Պետրոսյան, Ա.Պոդոսյան, Ա.Տեր-Ղևոնդյան, Տ.Թովմասյան 2012: 16): Միջին, ավագ և կենսաթոշակային տարիքային խմբերի ներկայացուցիչները (77%) ուսուցիչներ են, որոնք սովորել և ձևավորվել են ամբողջատիրական հասարակական պայմաններում, ԽՍՀՄ օրոք: Եթե հաշվի առնենք, որ երիտասարդ ուսուցիչների խմբում 30-34 տարեկանները, որոնք արդեն 10 տարուց ավել աշխատում են դպրոցում, ավագ սերնդի ներկայացուցիչների միջավայրում, ամբողջ թվի 47%-ն են, կամ մոտ կեսը, և ավագ սերնդի հետ նույն մանկավարժական հայացքներն ունեն, ապա պետք է ենթադրենք, որ ՀՀ ուսուցիչների 90%-ը ավտորիտար մասնագիտական-մանկավարժական մտածողության կրողներ են: Այս ենթադրության ճշմարտացիությունը հիմնավորվել է հարցումների արդյունքում:

Մենք հետազոտել ենք մեր ուսուցիչների մանկավարժական համակարգում միջանձնային փոխհարաբերություններում անձնային կենտրոնացման տիպը, ըստ որի կարող է որոշվել ուսուցչի հակվածությունը հին մանկավարժական մտածողությանը և վարքին (Օրլոս 1988: 16): Ընդունելով, որ այդ համակարգը ձևավորվում է 6 հիմնական բաղադրիչներից՝ 1. աշակերտ, 2. ուսուցիչ, 3. ուսումնադաստիարակչական միջոցներ, 4. ծնողներ, 5. գործընկերներ, 6. Ղեկավարություն, հարցման մասնակից ուսուցիչներին առաջարկվել է ներկայացնել այդ բաղադրիչների անձնային աստիճանակարգումը (Ռ. Պետրոսյան 2007: 61): Ցանկացած աստիճանակարգում, որում աշակերտը առաջին տեղում չէր, առանձնացվել է ավտորիտար մանկավարժական հայացքներով ուսուցիչների խմբում (Օրլոս 1988, 16): Պատասխանները տրոհելով ըստ աշխատանքային ստաժի փուլերի, որն առաջարկել է Մ.Հյուբերմանը, (Huberman M. 1995: 193), և ըստ որի աշխատանքային ստաժի 1-6, 7-18, 19-30, 30 և ավելի ժամանակահատվածներում ուսուցիչներն ունենում են համանման մասնագիտական և հոգեբանական խնդիրներ, ստացել ենք հետևյալ արդյունքը (աղյուսակ 1) (Ռ. Պետրոսյան 2007: 62):

Մանկավարժական մտածողության հայեցակարգը	1-6 տարվա աշխ. Ստաժ	7-18 տարվա աշխ. ստաժ	19-30 տարվա աշխ. Ստաժ	30 և ավել տարվա աշխ. ստաժ
ավտորիտար	87,5%	77%	100%	100%
աշակերտակենտրոն	12,5%	23%	0%	0%

Հարկ ենք համարում շեշտել, որ պատասխանող ուսուցիչների աստիճանակարգումներում առաջին տեղում առարկան էր, երկրորդ տեղում ուսուցչի հեղինակությունը: Այսինքն, վերը նշված մեր ենթադրությունը ճիշտ էր: Այդ ուսուցիչների մանկավարժական ուղղվածության կառուցվածքը (Митина Л. 1998: 41) կունենա բաղադրիչների հետևյալ աստիճանակարգումը.

1. ուղղվածություն մասնագիտության առարկայական կողմին,
2. ուղղվածություն դեպի իր անձը, իր հեղինակության պահպանումը, ինքնաիրացումը և զարգացումը մանկավարժության ոլորտում,
3. ուղղվածություն դեպի աշակերտը, նրա զարգացումը, նրա առավելագույն ինքնաիրացմանն աջակցությունը:

Ստացվում է, որ մեր ուսուցիչների մանկավարժական ուղղվածությունը՝ մասնագետի հոգեբանական կառուցվածքի կարևորագույն բաղադրիչը, բառացիորեն գլխիվայր է շրջված հումանիստական մանկավարժության տեսակետից: Բայց շարունակենք. Հետազոտելով ՀՀ ուսուցիչների ինքնագնահա-

տականները առարկայական իմացության, մանկավարժամեթոդական, աշակերտի և մանկավարժական գործընթացի հոգեբանության իմացության, և իր հոգեվիճակի ըմբռնման և կառավարման հարցերում, մենք ստացանք մոտ 80% գերազանց ինքնագնահատականներ բոլոր ոլորտներում: Հարկ ենք համարում շեշտել, որ աշխատանքային ստաժին զուգընթաց այդ թիվը՝ գերազանց ինքնագնահատականները 68-70%-ից, (1-ից 6 տարվա ստաժ), ձգտում է 88%-ի (19 տ և ավելի աշխատանքային ստաժ), իսկ մնացած 11-12%-ի ինքնագնահատականները գնում են դեպի իջեցում և ինքնաթերագնահատման, ու անօգնականության բարդույթի ձևավորման մասին են վկայում: Համեմատության համար հետազոտելով այդ նույն դպրոցների ավագ դասարանների աշակերտների, իրենց դասուցիչների (համեմատաբար ավելի սիրված և հարգված ուսուցիչների) իմացական որակներին, հուզական կապ հաստատելու կարողությանը և վարքին տված գնահատականները (Ռ.Պետրոսյան 2007: 44), մենք ստացանք հետևյալ արդյունքը (աղյուսակ 2)

գնահատված որակը	Իմացական որակներ	Հուզական կապ հաստատելու կարողություն	Վարքային որակներ
գնահատա- կանի արժեքը			
Առավելագույն գնահատական տված աշ.-ի քանակը	28%	25,6%	33,2 %
Միջին գնահատական տված աշ.-ի քանակը	66%	53%	61%
Նվազագույն գնահատական տված աշ.-ի քանակը	6%	21%	4,2%

Աղյուսակից ակնհայտ է դառնում, որ ուսուցիչների մեծ մասն իրենց մասնագիտական կարևոր որակները աշակերտների տեսակետից գերազնահատում են: Նշենք, որ հոգեբանական տեսակետից ինքնագնահատականը օբյեկտիվ է համարվում, եթե գնահատողը վերցնում է հնարավոր միավորների քանակի 25-ից 75%-ը, պակասի դեպքում թերագնահատում է, ավելի դեպքում գերազնահատում: Որքան էլ որ նրանք անարդարացի են այդ ինքնագնահատականներում, պարզ էր, որ իրենց մասնագիտական գործունեությունը վերակառուցելու մոտիվներ նման ուսուցիչները չեն ունենա, մինչև դրա համար լուրջ նյութական կամ բարոյական պատճառներ չառաջանան: Ոչ պակաս հետաքրքիր է այն, որ ուսուցիչների վարքային որակները, որոնք, ինչ խոսք, նրանց նաև համոզմունքների արտահայտությունն են, աշակերտների 33,2 %-ի կողմից շատ բարձր են գնահատվել, իսկ 61%-ի կողմից միջին, այսինքն մոտ 95 %-ն այդպիսի վարքը համարում է բնական կամ գերազանց: Մեզ հետաքրքրեց, թե ինչպիսին են այդ աշակերտ-

ների ծնողների մանկավարժական համոզմունքները, որոնցով նրանք ղեկավարվում են իրենց երեխաների հետ ունեցած հարաբերություններում: Հետազոտելով ծնողների դաստիարակչական հայացքները ADOR հարցարանով (ծնողների վարքը և դեռահասների վերաբերմունքը դեպի նրանք) հարցման մասնակից 400 աշակերտների շրջանում, մենք պարզեցինք, որ հայ ծնողների 80%-ի մոտ ցայտուն արտահայտված է իրենց կամքը և ձգտումները երեխաներին պարտադրելու հակումը: Այսպիսով ստացվում է, որ հայ ծնողների մեծ մասը, չնայած որ մեծ ջերմությամբ է վերաբերվում իր երեխաներին (այս որակին տրվել է հնարավոր միավորների 85-90%-ը), ավտորիտար մանկավարժական հայացքներ ունի, ուստի և ակնհայտ է, որ ուսուցիչների նույնատիպ հայացքները հասարակական գիտակցության մեջ գերիշխող մանկավարժական արժեքների արտացոլումն են (Ռ.Պետրոսյան 2007: 60):

Մեր ուսուցիչների մանկավարժական համոզմունքների ձևավորման հարցում

խիստ կարևոր է դասարանում նրանց տեղեկատվության հիմնական աղբյուր, կառավարիչ և գնահատող լինելը, ինչն աշակերտների ինտելեկտուալ և հոգեկան օբյեկտիվորեն ավելի ցածր գարգացվածության պայմաններում, աշխատանքային ստաժին գուզընթաց, նրանց մեջ կարծրացնում է ավտորիտար հայացքները, բայց եթե աշակերտները և նրանց ծնողները ևս ավտորիտար մանկավարժական հայացքների հետևորդներ են, նշանակում է, որ այդ ստերեոտիպերը մանկավարժության մեջ ունեն լուրջ սացիալական նախադրյալներ: Այդ խնդիրը հետազոտողները (Степанов, Похмелкина, Колонина, Фролова 1991: 5) առանձնացրել են հետևյալ նախադրյալները. ներկայացնենք դրանք խիստ համառոտ մեկնաբանություններով.

- Սոցիալ-կենսաբանական՝ երեխան մանկուց վարժվում է մեծահասակից պատրաստի տեղեկություններ և վարքի ձևեր ստանալուն,
- Սոցիալ – քաղաքական՝ պետական կառուցվածքը ձգտում է կրթական համակարգը կառուցել իր նմանությամբ, իշխանության իրականացումը և պահպանումը հեշտացնելու համար (իսկ մենք պարսկական բռնակալության, ռուսական ցարիզմի և սովետական ամբողջատիրության ժառանգորդ ենք),
- Սոցիալ-պատմական՝ որպես մոնոթեխտական գիտակցության կրողներ, մենք հակված ենք հավատալու մեկ Աստծու, մեկ ուսմունքի, մեկ ուսուցչի, մեկ առաջնորդի:

Եթե այդպես է, գուցե ուսուցչի մասնագիտական գործունեության վերակառուցման հնարավորություն չկա և ամեն ինչ բնական է: Փոփոխությունների անհրաժեշտության օգտին առաջին փաստարկն այն է, որ 1991թ-ից փոխվել է ՀՀ պետական կառուց-

վածքը, այսինքն մանկավարժական հայացքների ձևավորման սոցիալ-քաղաքական նախադրյալն արդեն ուրիշ է: Փոխվել է դպրոցների ղեկավարության և ուսուցիչների նշանակման կարգը. դրանք արդեն ընտրությամբ են կատարվում: Այսօրվա Հայաստանում դպրոցի շրջանավարտները ինքնուրույն պիտի աշխատանք գտնեն, ուրեմն և դպրոցական ուսման ընթացքում պետք է մեծանա նրանց ինքնավարությունը կամ սուբյեկտայնությունը ուսուցման գործընթացում:

Իսկ ինչպե՞ս են ուսուցիչները վերաբերվում կատարելագործման դասընթացների ժամանակ ստացած հանձնարարականներին: Ավանդական վերապատրաստման դասընթացներն ըստ ուսուցիչների առանձնապես արդյունավետ չեն համարվում և նրանց մոտ ձևավորել են ոչ նպաստավոր կարծիք և՛ այդ դասընթացների, և՛ ընդհանրապես իրենց մասնագիտական գործունեությունը վերակառուցելու առաջարկների նկատմամբ: Այդ իրողության հոգեբանական վերլուծությունները ցույց են տվել, որ ուսուցիչների գործունեությունը, ենթագիտակցորեն, ուղղված է ավելի շուտ դրանք վարկաբեկելուն, քան հաջողությամբ ներդնելուն, այլապես նրանք ստիպված պիտի լինեն խոստովանել սեփական մասնագիտական ոչ կոմպետենտությունը: Իսկ այդ քայլը, ցանկացած մասնագետի համար, որպես կանոն, հոգեբանորեն կարող է արդարացվել միայն բավական մեծ բարոյական և նյութական փոխհատուցումների գնով (Степанов, Похмелкина, Колонина, Фролова 1991: 5):

Ուսուցիչների որակավորման բարձրացման մոդելները հետազոտողները (Հեյվլըք) դրանք բաժանում են 3 հիմնական խմբի (Митина, 1998: 128): Առաջինը, որը ԽՍՀՄ-ում ուսուցիչների վերապատրաստման գրվալավոր մոդելն էր, կարող է կոչվել հետազո-


տման, մշակման և տարածման մոդել: Երբ պետական հետազոտական հիմնարկները ուսումնասիրելով ինչ-որ մանկավարժական խնդիրներ մշակում են դրանց լուծման ինչ-որ ուղիներ և տարածում իրենց ազդեցության դաշտում գտնվող կրթական հաստատություններում: Այս մոդելի գլխավոր թերությունն այն է, որ առաջարկների մեծ մասը չեն բավարարում միջին ուսուցիչների կարիքները, իսկ փոփոխվող հասարակության պայմաններում, ներկայիս Հայաստանում, այդ կարծիքը առավել ևս ճիշտ կլինի:

2. ՀՀ տարացքում 90-կանների վերջից սկսեց տարածում գտնել ուսուցիչների վերապատրաստման մի այլ մոդել, որը կոչվել է սոցիալական փոխգործունեության մոդել: Այդպիսին էին IREX-ի կողմից իրականացվող Տարրական դպրոցի ուսուցիչների վերապատրաստման ծրագիրը (ՏԴՈՒՎԾ կամ ELTTP) և միջին դպրոցի ուսուցիչների վերապատրաստման ծրագիր (ՄԴՈՒՎԾ կամ MLTTP) ծրագրերը: Այս մոդելներում ևս առաջարկվում էր ներդնել կոնկրետ պատրաստի արդյունքը՝ մեթոդիկաներ և այլն, բայց պայմանով, որ ուսուցիչը գիտակցում է իր աշխատանքի թերությունները և շտկման անհրաժեշտությունը, իսկ նորարարության ներդրումը իրականացվում է խորհրդակցական օգնությամբ և տևական աջակցությամբ: Առաջին և երկրորդ մոդելների արդյունավետությունը չափվում է դրանցում առաջարկված նորարարությունների և մեթոդիկաների ընդունման մասին ուսուցիչների հայտարարությամբ և չի կապվում աշակերտների առաջադիմության կամ ուսուցիչների կողմից դրանց մշտական կիրառման արձանագրությունների հետ: Մեր՝ որպես այդ ծրագրերի (ՏԴՈՒՎԾ) անմիջական մասնակցի և հեղինակի, դիտարկումները դրանց արդյունավե-

տության մասին այն էր, որ դրանք չկարողացան վերակառուցել ուսուցիչների մասնագիտական գործունեությունը:

3. Երրորդ մոդելը, որ ՀՀ-ում դեռ չի իրականացվում, դա խնդրի լուծման մոդելն է: Այս մոդելում վերապատրաստողի միջնորդության նպատակն է պայմաններ ստեղծել, որ ուսուցիչը ճիշտ ըմբռնի մասնագիտական իրավիճակը, և հետո օգնել նրան լուծել խնդիրը՝ շարժելով, ուղորդելով նրան դեպի լուծումը, բայց չտալով պատրաստի լուծումները: Այս մոդելում վերաբաժանումն իրականացվում է այնքան, մինչև ուսուցիչը յուրացնի առաջարկվող նորարարությունը և՛ իմացական, և՛ էմոցիոնալ դիրքերից: Ներդրման արդյունավետությունը այստեղ չափվում է և՛ աշակերտի առաջադիմությամբ, և՛ ուսուցչի իր աշխատանքից բավարարվածությամբ: Թեև ՀՀ-ում այս մոդելը դեռ չի կիրառվում, բայց կարծում ենք, որ եթե կիրառվեր, դարձյալ նախորդների պես արդյունավետ չէր լինի:

Ինչու՞: Եթե դիտարկենք կրթական համակարգի ստորև բերված գծապատկերը, ապա կտեսնենք, որ վերապատրաստման բոլոր մոդելները նպատակ են ունեցել փոփոխել կա՛մ ուսուցչին, կա՛մ նրա աշխատանքային մեթոդները, կա՛մ լավագույն դեպքում երկուսին միաժամանակ, հաշվի չառնելով համակարգի մյուս բաղադրիչների փոփոխությունը կամ անփոփոխությունը, և այդ պատճառով հաջողություն չեն ունեցել: Համակարգի անփոփոխ բաղադրիչները չեզոքացրել են փոփոխման նշաններ ցուցաբերած բաղադրիչներին, ինչպես «սպիտակ ագռավների»:



*համակարգի խնդիրը լուծման տեխնոլոգիա  
կրթական համակարգ*

Վերջին մի քանի տարիների ընթացքում ՀՀ կրթական համակարգում լուրջ փոփոխություններ են կատարվել, որոնք ազդել են համակարգի բոլոր բաղադրիչների վրա:

Մշակերտների և նրանց ծնողների, որպես արդեն ձևավորված շահառուների ցանկություններին ընդառաջելով, նախարարությունը հանրակրթական դպրոցը բաժանել է հիմնական և ավագ դպրոցների: Ավագ դպրոցներում թեքումով (հոսքային) դասարանների ստեղծումը փոխել է կրթության միասնական նպատակը, ինչն արդեն հանգեցրել է կրթության բովանդակության վերակառուցմանը: Ստեղծվել են նոր դասագրքեր: Այսպիսով, համակարգի խնդրի (տե՛ս գծապատկերը) բաղադրիչների փոփոխությունն արդեն ենթադրում է և նույնիսկ պարտադրում է խնդրի լուծման տեխնոլոգիաների բաղադրիչների փոփոխություն, առավել ևս, որ «կազմակերպչական ձևեր» բաղադրիչն արդեն փոխված է նախարարության հրամանով, օրինակ՝ ավագ դպրոցներում հոսքային առարկաների ժամանակ դասարանները կիսվում են 21-ից ավել աշակերտներ ունենալու դեպքում: Հետևաբար, արդեն իսկ 12-15 աշակերտների հետ ուսուցիչների աշխատանքային մեթոդները չեն կարող լինել նախկին, ֆրոնտալ մեթոդները: Ուսուցիչն էլ ստիպված լինելով ամեն օր շփվել աշակերտների հետ, չի կարող աշխատել ինչպես նախկինում, «ուսուցչական դիմակ» – «աշա-

կերտական դիմակ» տաբերակով: Նրանց շփումը դառնալու է անձնավորված և այդ պայմաններում ուսուցիչը դառնալու է ամեն օր սովորող, ամեն օր իրեն «աշակերտական հայելու» մեջ տեսնելու և համապատասխանաբար վերակառուցվելու պարտադրված մարդ: Հետո, դպրոցներն այսօր ֆինանսավորվում են ըստ աշակերտների թվի, ինչը նշանակում է, որ լավ ուսուցիչներով կոմպլեկտավորված դպրոցներում աշակերտների քանակը ավելի մեծ կլինի և այդ դպրոցների ուսուցիչների աշխատանքը երաշխավորված: Սա կարևոր հանգամանք է, այսօր ուսուցիչներն աշխատանքի են ընդունվում բաց մրցույթային կարգով, իսկ ՀՀ-ում այսօր բազմաթիվ գործազուրկ ուսուցիչներ կան (Ռախսա Բեյլավինա, Էնն Ուայլի, Ռուբեն Պետրոսյան, Ալվարո Պոդոսյան, Արմինե Տեր-Ղևոնդյան, Տիգրան Թովմասյան 2012: 28): Այս պայմաններում նախկինում Հակոբ Պարոնյանի կողմից «անիծված» կոչված ուսուցչի պաշտոնը ՀՀ-ում դարձրել է բավական ցանկալի: Սա այսօր ուսուցիչների համար իրենց մասնագիտական գործունեության վերակառուցմանը լրջագույն դրդապատճառն է: Բացի այդ, ավագ դպրոցում հոսքային դասարանների առարկաներն անցնում են խորացված ծրագրով /նոր բովանդակությամբ/ բուհ ընդունվելու նախապատրաստվելու նպատակով: Սա և՛ նպատակի, և՛ բովանդակության, և՛ կրթության



կազմակերպման ձևերի փոփոխություն է նշանակում: Այս պարագայում ամբողջ համակարգը ուսուցչին պարտադրելու է նորովի աշխատել և եթե պետք է անձնապես վերակառուցվել: Դրա համար որպես նյութական փոխհատուցում կարող է ծառայել նախարարության կողմից ավագ դպրոցների ուսուցիչների աշխատավարձի բարձրացումը (մինչև 20%) և 2011-ից սկսված ուսուցիչների ատեստավորման գործընթացը, որ խոստանում է ջանասեր ուսուցիչներին և՛ նյութական խրախուսանք, ավագ ուսուցչին մինչև 20% աշխատավարձի հավելում, և՛ բարոյական խրախուսանք՝ ավագ ուսուցչի տարակարգ, այսինքն պաշտոնական դիրքի առաջընթաց: Սրանք լուրջ հոգեբանական գործոններ են ուսուցիչներին իրենց մասնագիտական գործունեության վերակառուցման գործում դրդապատճառավորման համար: Կարծում ենք, որ եթե նախարարությունը որոշում կայացնի կապել ուսուցիչների և՛ պարգ, և՛ բարդ ատեստավորումը նրանց աշակերտների ուսումնական առաջադիմության հետ, որը պետք է ստուգվի արտաքին գնահատողների կողմից, ապա կարելի է համոզված լինել, որ ուսուցիչների իրենց գործունեության վերակառուցման գործում առաջին և ամենամեծ դժվարությունը՝ մոտիվացիայի բացակայությունը, եթե ոչ հաղթահարված, ապա սասանված կլինի:

Երկրորդ լրջագույն հիմնախնդիրը ուսուցչի մասնագիտական գործունեության վերակառուցման ճանապարհին, դա համապատասխան փոփոխությունները երաշխավորող վերապատրաստման ծրագրերի բացակայությունն է: Ավանդական ծրագրերը ուղղված են եղել ոչ թե գործունեության վերակառուցմանը, այլ որոշ կոսմետիկ շտկումների իրականացմանը և դա համապատասխանել է վերապատրաստման դաս-

ընթացներից ուսուցիչների սպասումներին: Կարծում ենք, որ ուսուցչի մասնագիտական գործունեության վերակառուցման համար նախատեսված վերապատրաստման ծրագրերը պետք է կառուցված լինի վարքի փոփոխման մոդելի հիման վրա (Митина 1998: 130), քանի որ մոդելը միավորում է վարքի փոփոխման հիմնական փուլերը և գործընթացները, 1-ին՝ նախապատրաստական փուլ (մոտիվացիոն գործընթացներ), երկրորդը՝ գիտակցման փուլ (իմացական գործընթացներ), երրորդը՝ վերագնահատման փուլ (աֆեկտիվ գործընթացներ) և չորրորդը՝ գործողությունների փուլ (վարքային գործընթացներ): Այդպիսի ծրագիր ստեղծելու համար պահը նպաստավոր է, որովհետև նախարարության որոշումների շնորհիվ առաջին փուլն արդեն որոշ չափով նախապատրաստված է, իսկ երկրորդ, երրորդ և չորրորդ փուլերը իրականացնելու համար պետք է լուծվեն ստորև բերված մի քանի հիմնախնդիրները:

Այսպես՝ գիտակցման փուլը (իմացական գործընթացներ) իրականացնելու համար հարկ է, որ մշակվեն տարբեր առարկաների ուսուցիչների վարքի կամ մասնագիտական գործունեության նոր ձևեր, այն է առարկաների ուսուցման նոր մեթոդներ, մեթոդիկաներ, հաղորդակցման հմտություններ և նոր եղանակներ: Այս խնդրի լուծման համար անհրաժեշտ կլինի ՀՀ ԿԳՆ -ԿԱԻ-ում կամ Խ. Աբվյանի անվան ՀՊՄՀ-ում ստեղծել «Ուսուցման ժամանակակից մեթոդների մշակման և ներդրման» գիտահետազոտական լաբորատորիա, որի աշխատակիցները ուսուցիչներին կներկայացնեն այդ ոլորտում համաշխարհային առաջավոր փորձը և դրա տեղայնացման տարբերակները:

Երրորդ՝ վերագնահատման և վերաբերմունքի փոփոխման փուլի համար, (աֆեկ-

տիվ գործընթացներ) պետք է մշակվեն և ներդրվեն ուսուցիչների անձնային հոգեբանական վերակառուցմանն ուղղված հատուկ դասընթացներ, հոգեբանական թրենինգներ, ուսուցիչների մասնագիտական ուղվածությունը, գործունեությունը հայեցակարգային նոր հիմքերի վրա դնելու համար: Այս խնդրի լուծումը կարող է ստանձնել Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի հոգեբանության գիտահետազոտական լաբորատորիան:

Չորրորդ՝ գործողությունների փուլը արդյունավետ իրականացնելու և ուսուցիչների իրենց հին աշխատածներին վերադառնալու ռեցիդիվների հոգեբանական հիմնախնդիրը լուծելու համար հարկ կլինի դպրոցներում ստեղծել մանկավարժների մասնագիտական զարգացման հարցերով պատասխանատու փոխտնօրենի հաստիք, վարքային գործընթացները վերահսկելու և կարգա-

վորելու համար: Այդ նպատակով կարելի է Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի բազայի վրա բացել նշված մասնագիտացմամբ փոխտնօրենների և մենթոր-ուսուցիչների բաժին (1 կամ 2 տարվա ուսումնական ծրագրով), որտեղ ընդունվեն առնվազն 3 տարվա աշխատանքային ստաժ ունեցող և դպրոցում աշխատանքը շարունակող ուսուցիչները: Ուսուցիչների մասնագիտական գործունեության վերակառուցումը շատ դժվար և ցավոտ խնդիր է, բայց դրա լուծումը անհրաժեշտ է, և մենք հույս ունենք, որ մեր վերը բերված առաջարկները կնպաստեն դրան: Կարծում ենք, որ ՀՀ մանկավարժների և հոգեբանների ներուժը բավարար է դրա համար:

ՄԵԶԲԵՐՎԱԾ ԵՎ ՀՂՎԱԾ  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բեյլավինա, Ռ.; Ուայլի, Է.; Պետրոսյան, Ռ.; Պոդոսյան, Ա.; Տեր-Ղևոնդյան, Ա.; Թովմասյան, Տ. (2012): «Կրթական քաղաքականության միջազգային հետազոտություններ. Ուսուցչական կազմի որակավորումը և ուսուցիչների աշխատանքային պայմանները Հայաստանում»: Երևան:
2. Պետրոսյան, Ռ. (2007): «Ուսուցչի մասնագիտական գործունեության գնահատման ժամանակակից մոդելները»: Երևան «Մանկավարժ»
3. Митина, Л.М. (1988). Психология профессионального развития учителя. Москва.
4. Орлов, А.Б. (1988). «Проблемы перестройки психолого-педагогической подготовки учителя». Вопросы психологии. Москва № 1.
5. Степанов С.Ю.; Похмелкина Г.Ф.; Коломина Т.Ю.; Фролова Т.Ф. (1991). “Принципы рефлексивной психологии педагогического творчества” Вопр. психологии Москва, № 5.
6. Huberman, M. (1995). Professional careers and professional development. In T. R. Guskey & M. Huberman (Eds). Professional development in education. (pp 193-224) New-York; Teachers Colleges Press.

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԴՐԴԱՊԱՏՃԱՌՆԵՐԸ ՓՈՓՈԽՎՈՂ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում փորձարարական հետազոտությունների հիման վրա ներկայացվում են ուսուցիչների մանկավարժական համոզմունքները, դրանց բացասական ազդեցությունը նրանց անձնային բնութագրերի վրա և իրենց գործունեությունը վերակառուցելու չկամությունը: Կրթական համակարգի դիտարկման հիման վրա ցույց է տրվում, որ ուսուցիչների մասնագիտական վերապատրաստման ավանդական դասընթացները ուղղված են եղել կրթական համակարգի մեկ բաղադրիչի փոփոխմանը, ինչը եղել է դասընթացների անարդյունավետության գլխավոր պատճառը: Հիմնավորվում է, որ ՀՀ ԿԳՆ վերջին տարիների որոշումները որակական փոփոխություններ են մտցրել կրթական համակարգի բաղադրիչներում, ինչը և նպաս-

տավոր պայմաններ է ստեղծել ուսուցիչների վերակառուցման մոտիվացիայի համար: Հիմնավորվում է վերապատրաստման նոր դասընթացները վարքի փոփոխման մոդելի հիման վրա մշակելու և դրա համար անհրաժեշտ գիտական և կրթական կառույցների կազմակերպման նպատակահարմարությունը:

*Հանգուցային հասկացություններ.* մանկավարժական հայացքների ավտորիտարիզմ, ինքնագերազնահատում, կրթական համակարգի բաղադրիչների փոփոխություններ, գործունեության վերակառուցման մոտիվացիա, վերապատրաստման դասընթաց վարքի փոփոխման մոդելի հիման վրա:

PETROSYAN RUBEN

THE MOTIVES OF REBUILDING TEACHERS PROFESSIONAL ACTIVITY IN CHANGING  
ARMENIA

SUMMARY

The article discusses teachers' pedagogical beliefs, their negative impact on their individual characteristics and the unwillingness to rebuild their activities. Based on the observations of the educational system it becomes apparent that the

traditional courses for the teachers' professional training have been directed towards the change of only one component of the system, which has been the main reason of the ineffectiveness of those courses. It is justified, that the decisions of

the MOE, RA applied during the last years have made qualitative changes on the components of the educational system, which in its turn has created fruitful conditions for the motivation of teachers' changes. The appropriateness to develop a new training course based on the model of the behavior changes is justified.

The article suggests organizing a necessary scientific and educational structure for solving this problem.

*Key concepts:* Authoritarianism of pedagogical views, embellished self-esteem, changes of components in the educational system, motivation of activity remodeling, a training course based on the model of behavioral changes.

## ԱՂՋԻԿ ԴԵՌԱՀԱՄՆԵՐԻ ՇԵՂՎՈՂ ՎԱՐՔԻ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ՈՉ ԼԻԱՐԺԵՔ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ

Հասարակական-տնտեսական կացութեան փոփոխությունը և, դրանով պայմանավորված տնտեսական նոր հարաբերություններին անցնելը մեր իրականության մեջ առաջացրին բազմաթիվ կենսական, տնտեսական, սոցիալական, կրթական և այլաբնույթ դժվարություններ, հիմնախնդիրներ: Դրանց մի մասը բխում էր նոր կացութեան, մարդու նոր կենսակերպի բնականոն ընթացքից, քանի որ տնտեսական նոր պայմաններին և սոցիալական պահանջներին մարդու հարմարումը անպայմանորեն ուղեկցվում է տարաբնույթ բախումներով, հակադրումներով, հոգեբանական և կենսաֆիզիկական հարմարման դժվարություններով, ներանձնային փոփոխություններով:

Ժամանակակից կյանքի ինտենսիվ և լարված պայմաններում մարդը հաճախ ենթարկվում է միջավայրի բացասական ազդեցություններին: Այդ ազդեցությունները կարող են վերաբերել ֆիզիկական գործունեությանը, մտավոր աշխատունակությանը, կարող են հանգեցնել վարքային շեղումների: Միջավայրի անբարենպաստ ազդեցություններին առավել շատ ենթակա են անչափահասները: Սակայն հատկապես դեռահասության տարիքն այդ առումով առավել խոցելի է:

Անբարենպաստ, ոչ լիարժեք ընտանիքում երեխայի անձի ձևավորման վրա նրա ոչ բարերար ներգործությունը հրատապ սոցիալ-հոգեբանական հիմնարար հետազոտության կարևոր հիմնախնդիրներ են, որոնց նպատակը ոչ միայն երեխայի առողջ

հոգեկան զարգացման ապահովումն է, այլև նրա սոցիալական վարքի հնարավոր խաթարումների հոգեբանական պրոֆիլակտիկական (տե՛ս Արզումանյան 2007. 137-144):

Շեղվող (դեխանտ) վարքը՝ որպես սոցիալական նորմերի շեղում, վերջին տարիներին արմատական փոփոխությունների հետ մեկտեղ կրում է զանգվածային բնույթ: Այս խնդիրը դրվել է սոցիոլոգների, սոցիալական հոգեբանների, բժշկների, իրավական համակարգում աշխատողների ուշադրության կենտրոնում:

Կան բազմաթիվ ուսումնասիրություններ դեռահասների շեղվող վարքի դրսևորման պատճառների և ձևերի վերաբերյալ, սակայն աղջիկ դեռահասների, նրանց վարքային դրսևորումների, շեղումների և դրանց պատճառների մասին չկան բավարար գիտական և փորձարարական հետազոտություններ: Դրանից ելնելով էլ մեր թեմայի ուսումնասիրությունը հրատապ է և արդիական:

«Վարքի շեղում» հասկացությունը երկար ժամանակ հուզել է տարբեր բնագավառների մասնագետների: Համաձայն հոգեբուժական գրականության՝ վարքի շեղումը դիտարկվում է որպես կրկնվող, կայուն գործունեություն կամ արարքներ, որոնք իրենց մեջ ներառում են գլխավոր դեստրուկտիվ և ասոցիալ ագրեսիվության ուղղվածությունը:

Ելնելով վերը թվարկվածից՝ կարելի է տալ շեղվող վարքի հետևյալ բնորոշումը՝ անձնավորության կայուն վարքն է առավել կարևոր սոցիալական նորմերից շեղվող, հա-

սարակությանը կամ հենց անձնավորությանը իրական վնաս պատճառող, ինչպես նաև նրա սոցիալական դեգրադացիայով ուղեկցվող (Змановская 2004: 288):

Այսպիսով, կատարելով հոգեբանական գրականության վերլուծություն, տեսնում ենք, որ գոյություն ունեն վարքագծային շեղումների մի քանի տեսակներ՝ հակասոցիալական (դելիկվենտ) վարք, ասոցիալ (անբարոյական) վարք, աուտոդեստրուկտիվ (ինքնակործանիչ) վարք և վարքագծային խաթարումների դասակարգման երեք հիմնական մոտեցումներ՝ ասոցիալ-իրավական, կլինիկական, հոգեբանական:

Անձի ձևավորման գործընթացում հատուկ տեղ է գրավում դեռահասության տարիքը, որը պայմանավորված է 11-15 տարեկան երեխայի զարգացման ժամանակ ընթացող մի շարք փոփոխություններով: Այս տարիքային փուլի հիմնական նորագոյացությունը ինքնագիտակցության զարգացումն է: Այն հանգեցնում է ինքնագնահատականի և հավակնությունների որոշակի մակարդակի առաջացմանը: Հոգեկան զարգացման այդ մակարդակը դեռահասի մոտ առաջացնում է ինքնուրույնության, ինքնահաստատման պահանջումն: Կատարվող որակական փոփոխությունները հանգեցնում են դեռահասի գործունեության ոլորտի ընդլայնմանը, բնավորության փոփոխությունների:

Ոչ լիարժեք են կոչվում այն ընտանիքները, որտեղ ծերության, հիվանդության, սոցիալական անպաշտպանվածության պատճառով ծնողներն ի վիճակի չեն զբաղվելու երեխայի դաստիարակությամբ կամ ծնողները չկան (կամ մեկը չկա) և երեխաները մանկավարժորեն բարձիթողի են կամ ծնողների կրթական մակարդակը շատ ցածր է և պատկերացում չունեն երեխայի հոգեբանության և դաստիարակության մեթոդների մասին:

Պարզ է, որ այդպիսի ընտանիքում հոգեբանական մթնոլորտը և ստեղծված հարաբերություններն այնքան էլ նպաստավոր չեն կարող լինել երեխայի անձի և վարքի ձևավորման համար (Արզումանյան, Գրին 2001. 73-83, 73-83):

Այսպիսով, կարելի է ասել, որ ներընտանեկան հարաբերությունները կարևոր դաստիարակող գործոն են հանդիսանում և միևնույն ժամանակ՝ խոցելի «աքիլլեսյան գարշապար», եթե ընտանիքում հուզական կապերը դեստրուկտիվ են, կրում են բացասական բնույթ, և աղջիկ դեռահասների մոտ ձևավորվում են ապագա ընտանեկան կյանքի մասին աղավաղված պատկերացումներ: Նման ընտանիքը դառնում է այն միկրոմիջավայրը, որը փոխում, խեղաթյուրում է դեռահասի անձի ներդաշնակ զարգացումը:

Երեխայի հոգեկան զարգացման գործում իր անգնահատելի և նշանակալի դերը ստանձնում է մայրը, որի բացակայությունը, հուզական անհավասարակշռվածությունը կամ հուզական կապի բացակայությունը հանգեցնում է «մայրական զրկվածության», որի պայմաններում դեռահասն ունենում է վարքային շեղումների դրսևորումներ: Լիարժեք ընտանիքում երեխաներն ունենում են ընտանեկան առողջ հարաբերությունների մոդել, մինչդեռ ոչ լիարժեք ընտանիքներում այս տարբերակը չի գործում: Ընտանիքում ծնողական ֆունկցիաների խախտման արդյունքում առաջանում է հոգեբանական ճնշվածություն և ներընտանեկան հարաբերություններում կոնֆլիկտայնություն, նրանք հաճախ ընտրում են վարքի ագրեսիվ դրսևորում, կամ էլ երբեմն հանդես են գալիս «գոհի» կարգավիճակում: (Лангмейер, Матейчек 1984: 18):

Մեր ուսումնասիրությունների ընթացքում հարցարանների, թեստերի, դիտման և

գրույցի մեթոդների կիրառման արդյունքում ստացել ենք հետևյալ փորձարարական տվյալները: Ձուգահեռներ ենք անցկացրել արդյունքների միջև, որն էլ հնարավորություն է տվել հանգել վերջնական եզրակացությունների:

Առաջին փուլի ընթացքում կիրառել ենք համակարգված դիտում, որի ընթացքում պարզեցինք, թե ինչպիսի վարքային դրսևորումներ են ունենում անբարենպաստ ընտանիքում աղջիկ դեռահասները և ինչպիսի սարքերություններ կան լիարժեք ընտանիքի դեռահասների վարքային դրսևորումների միջև:


Ինչպես նշվել է, հետազոտությանը ընդգրկված են վարքային խաթարումներ ունեցող աղջիկ դեռահասները (11-14 տարեկան): Դիտման ընթացքում նկատվում էր, որ նրանք հետաքրքրություն չէին ցուցաբերում առարկաներից և ոչ մեկի հանդեպ, աչքի էին ընկնում ցածր առաջադիմությամբ: Հասակակիցների հետ շփման ընթացքում դրսևորում էին ագրեսիա, շուտ էին բռնկվում, միևնույն ժամանակ աշխույժ էին և շարժուն, որից մենք կարող ենք եզրակացնել, որ առկա էին բնավորության հիպերտիվ և գրգռվող տիպերը:

Երկրորդ փուլում կիրառել ենք գրույցի մեթոդը՝ ինչպես դեռահասների, այնպես էլ ուսուցիչների և ծնողների հետ՝ նրանց միջև փոխհարաբերությունները պարզելու նպատակով:

Ուսուցիչների վկայությամբ՝ նրանք անհանգիստ են, անհավասարակշիռ, հաճախակի վեճեր են ունենում հասակակիցների հետ՝ հիմնականում հանդես գալով որպես հրահրող կողմ: Չեն դրսևորում հետաքրքրություն որևէ ուսումնական առարկայի նկատմամբ: Այս ամենը հակասում էր ծնողների տված պատասխաններին: Ծնողները համարում էին, որ դեռահասները հանգիստ են, հավասարակշռված, լսում ու ենթարկվում են իրենց: Ծնողների մեծ մասը վկայում էր, որ դեռահասին ընձեռում են ազատություն, ինքնուրույնություն դրսևորելու հնարավորություն, խստորեն չեն վերահսկում նրանց արարքներն ու քայլերը: Ծնողների այս մեկնաբանությունները մեր փորձարարական հետազոտության ընթացքում հերքվեցին:

Փորձարկվող դեռահասների նկատմամբ ծնողական վերաբերմունքի բնույթի բացահայտման համար մենք հետազոտության ընթացքում կիրառել ենք Վարգա-Ստոլինի ծնողական վերաբերմունքի ախտորոշման մեթոդիկան, որը հնարավորություն է ընձեռում պարզելու դեռահասի նկատմամբ ծնողների վերաբերմունքի հինգ ձևերի դրսևորումը: Հետազոտական արդյունքները ներկայացվում են ստորև: (Տե՛ս հիստոգրամ 1-ը):

Ղեռահասի նկատմամբ վերաբերմունքի ախտորոշման մեթոդիկա՝ Վարգա-Ստոլինի (Ծնողական վերաբերմունքի թեստ)



Արդյունքներից պարզ է դառնում, որ շեղվող վարքով աղջիկ դեռահասների նկատմամբ ծնողների գերակշռող մասը՝ 57%-ը դրսևորում է «ավտորիտար հիպերսոցիալիզացիա» տիպի վերաբերմունք: Սա նշանակում է, որ ծնողը ավտորիտար վերաբերմունք է արտահայտում դեռահասի նկատմամբ, պահանջում է ենթարկվել իրեն, պարտադրում է իր կամքը, ամեն կերպ վերահսկում է նրա վարքը, հաշվի չի առնում նրա կարծիքը:

Նկատելի է նաև ծնողների վերաբերմունքը դեռահասի անհաջողությունների նկատմամբ՝ անբարենպաստ ընտանիքում 30%, բարենպաստ ընտանիքում՝ 7%: Այսինքն այս պարագայում ծնողը դեռահասին համարում է երեխա, մանկամիտ, երեխան նրան թվում է անլուրջ: Ծնողները չեն վստահում դեռահասին, փորձում են խիստ վերահսկել գործողությունները, վարքը:

Դիտման ընթացքում դեռահասների մոտ նկատվում էր տագնապայնություն, ինչը խոչընդոտում էր հասակակիցների հետ փոխհարաբերությունների: Ելնելով մեր

ունեցած նախնական տվյալներից՝ ուսումնասիրության ժամանակ կիրառել ենք Սպիլբերգ-Խանինի տագնապայնության մակարդակի ինքնագնահատման սանդղակավորման թեստը, որը հնարավորություն է տալիս բացահայտելու անձի տագնապայնության մակարդակը՝ տվյալ պահին (այսինքն՝ ռեակտիվ տագնապայնությունը, որը հուզական վիճակ է) և անձնային տագնապայնության մակարդակը՝ որպես մարդու կայուն հատկություն: (Տե՛ս հիստոգրամ 3-ը):

Ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ բարենպաստ ընտանիքի դեռահասների մոտ նկատելի է անձնային տագնապայնության ցածր մակարդակ՝ 22%, ռեակտիվ տագնապայնություն՝ 28%, իսկ անբարենպաստ ընտանիքի աղջիկ դեռահասների մոտ առկա է տագնապայնության բարձր մակարդակ. անձնային տագնապայնություն՝ 57%, ռեակտիվ տագնապայնություն՝ 62%: Նշենք, որ այս երեխաների մոտ նկատելի էր լարվածություն, անհանգստություն և նյարդայնություն:




Ելնելով տոկոսային հարաբերություններից՝ նկատելի է, որ ոչ լիարժեք ընտանիքներում աղջիկ դեռահասների մոտ գերիշխում է անձնային տազնապայնության բարձր մակարդակը: Այս տվյալները համեմատելով Վարգա-Ստոլինի ծնողական վերաբերմունքի բացահայտման թեստ-հարցարանի

մի միջոցով ստացված տվյալների հետ՝ պարզվում է, որ անձնային տազնապայնության մակարդակը բարձր է այն դեռահասների մոտ, որոնց նկատմամբ ծնողները դրսևորել են «ավտորիտար հիպերսոցիալիզացիա» և «փոքրիկ անհաջողակ» տիպի վերաբերմունք:

ՀԻՍՏՈԳՐԱՄ 3

Ռեակտիվ և անձնային տազնապայնության մակարդակի գնահատման սանդղակ (Սպիլբերգ - Խանին)



Արդյունքների վերլուծությունից պարզ է դառնում, որ բարենպաստ ընտանիքի աղջիկ դեռահասների մոտ բավականին բարձր էր ինքնագնահատականը՝ մոտ 49%, միջին՝ 25%, ցածր՝ 24%, այլ էր պատկերը անբարենպաստ ընտանիքի աղջիկ դեռահասների մոտ՝ ինքնագնահատականի բարձր մակարդակ՝ 25%, միջին՝ 30%, ցածր մակարդակ՝ 45%: Արդյունքերը փորձել ենք ամփոփել և ավելի տեսանելի դարձնել հիստոգրամի օգնությամբ: (Տե՛ս հիստոգրամ 4-ը):

Ըստ մեր ստացած տվյալների շեղվող վարքով աղջիկ դեռահասների մոտ գերակշռում է ինքնագնահատականի ցածր մակարդակը, նրանց մոտ ցածր է ներքին հնարավորություններին վստահելու մակարդակը, չեն վստահում սեփական ուժերին, այս ամենը հաճախ ուղեկցվում է թերաբեքության բարդույթով: Նշենք, որ ինքնագնահատականի ձևավորման գործում չափազանց մեծ է ծնողների դերը, քանի որ

հենց նրանց վերաբերմունքով է պայմանավորված դեռահասների վերաբերմունքը սեփական անձի հանդեպ: Իսկ քանի որ այս ընտանիքներում դեռահասներն իրենց հարմարավետ չէին զգում, ծնողերն անընդհատ վերահսկողություն էին սահմանում՝ իրականացնելով դաստիարակության ավտորիտար ոճ, թերագնահատում էին նրանց ուժերը, չկար հարգանք ծնող-երեխա փոխհարաբերություններում, բացակայում էր հուզական կապը այդ դեռահասների և իրենց ծնողների միջև, բնականաբար մեծանում էր վարքային շեղումների հավանականությունը:


Մեթոդիկայից ստացված տվյալների ամփոփման արդյունքում լիարժեք ընտանիքի աղջիկ դեռահասների դեպքում ստացել ենք՝ հիպերտիմ տիպ՝ 17%, դիստեմիկ տիպ՝ 5%, ցիկլոտոմիկ տիպ՝ 8%, էմոցիոնալ տիպ՝ 12%, դեմոնստրատիվ տիպ՝ 10%, խցանվող տիպ՝ 9%, պեդանտ՝ 9%, գրգռվող տիպ՝ 10%, էկզալտացված տիպ՝ 20%:

Պատկերն այլ էր ոչ լիարժեք ընտանիքի աղջիկ դեռահասների մոտ՝ հիպերտիմ տիպ՝ 30%, դիստեմիկ տիպ՝ 3%, ցիկլոտոմիկ տիպ՝ 4%, էմոցիոնալ տիպ՝ 10%, դեմոնստրատիվ

տիպ՝ 3%, խցանվող տիպ՝ 4%, պեղանտ՝ 4%, գրգռվող տիպ՝ 35%, էկզալտացված տիպ՝ 7%: (Տե՛ս հիստոգրամ 5-ը):

ՀԻՍՏՈԳՐԱՄ 5

Անձի բնավորության շեշտվածության մեթոդիկա՝ ըստ Շմիշեկի



Մեր ստացված տվյալները վկայում են, որ շեղվող վարքով աղջիկ դեռահասների մոտ գերակշռում է բնավորության շեշտվածության գրգռվող և հիպերտիմ տիպերը: Բնավորության գրգռվող տիպին բնորոշ է հակումների և մղումների ոչ բավարար, թույլ վերահսկողությունը, բարձր իմպուլսիվությունը, բնագոյանությունը, կոպտությունը, հակումը կոնֆլիկտների նկատմամբ, փոփոխականությունը, շարժողական ակտիվությունը: Այս տիպը ավելի քիչ է բնորոշ լիարժեք ընտանիքի աղջիկ դեռահասներին:

Հաջորդ տիպը, որը բարձր տոկոսային հարաբերություն կազմեց, հիպերտիմ տիպն է, որն առանձնանում է մշտապես բարձր սրամաղրությամբ, դրսևորում են լիդերության ձգտում, շփվող են, հետաքրքրությունները կայուն չեն, դժվար են տանում մենակությունը, չեն սիրում միօրինակությունը, կարգուկանոնը, միապաղաղ աշխատանքը, դեպքերին բուռն կերպով են արձագանքում, գրգռվող են: Նրանք ձգտում են ազատվել խնամքից և ընդգրկվել հասակակիցների խմբերի մեջ, հեշտությամբ են ծանոթանում

պատահական մարդկանց հետ: Ոչ բարենպաստ սոցիալական ազդեցության առկայության, դաստիարակության թերությունների դեպքում կարող են ընդգրկվել ռեֆերենտային խմբերում՝ իրականացնելով հակասոցիալական արարքներ: Նրանք առավել են հակված հակաօրինական վարքի խմբային ձևերին և հաճախ իրենք են դառնում օրինականացությունների ոգեշնչողներ՝ ցանկանալով նաև ինքնահաստատվել հասակակիցների շրջանում:

Շեղվող վարքով աղջիկ դեռահասների մոտ չի նկատվել բնավորության շեշտվածության դիստեմիկ տիպի վառ արտահայտվածություն: Այս տիպի շեշտվածությամբ անձանց մոտ նկատելի է դանդաղկոտությունը, թուլակամությունը, պարփակվածությունը, քախոսությունը: Քիչ տոկոս են կազմել նաև բնավորության շեշտվածության խցանվող և պեղանտ տիպեր ունեցող աղջիկ դեռահասները: Պեղանտ տիպին բնորոշ են ռիզիկոյան ճնշող գերակայություն, նրանք սիրում են կարգուկանոն, կարող են «ախտահարված» վիճակում դրսևորել մեծ ագրե-

սիա, իսկ խցանվող տիպին բնորոշ է հիշաչարությունը, կաչուն մտքերը, համառությունը, էմոցիոնալ առումով ռիզիկո են, երբեմն ունենում են աֆեկտիվ պայթյուններ՝ դրսևորելով ագրեսիա:

Բնավորության շեշտվածության էմոցիոնալ տիպը ոչ լիարժեք և լիարժեք ընտանիքի շեղվող վարքով աղջիկ դեռահասների մոտ կազմել է 10-12%, այս տիպին բնորոշ է չափազանց արտահայտված հուզականությունը, ապրումակցումը, խոցելի են և բարեսիրտ, պաթոլոգիայում հաճախ ձևավորվում է դեպրեսիա: Լիարժեք ընտանիքի աղջիկ դեռահասների մոտ բավականին բարձր էր բնավորության շեշտվածության էկզալտացված տիպը, որը մոտ է դեմոնստրատիվ տիպին, նրանց բնորոշ է ուշադրության կենտրոնում լինելու բնական պահանջը, պաթոլոգիայում կարող է առաջանալ հիստերիկ տիպի փսիխոպաթիա: Իսկ բնավորության շեշտվածության ցիկլոտոմիկ տիպը ոչ լիարժեք ընտանիքի աղջիկ դեռահասների մոտ՝ 8%, այս տիպին յուրահատուկ են տրամադրության կտրուկ տատանումները, նրանք արագ են հոգնում, իսկ դեպրեսիայի ժամանակ իրենց դրսևորում են որպես տագնապայիններ:

ՄԵՋԲԵՐՎԱԾ ԵՎ ՀԻՇՍՏԱԿՎԱԾ  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Արզումանյան, Ա., (2007). Անձի սոցիալական ախտահարման հոգեբանական նախադրյալները, Երևան:
2. Արզումանյան, Ս.; Գրին, Է. (2001). Իրավաբանական հոգեբանություն, Երևան:

Այսպիսով, Շմիշեկի մեթոդիկայի անցկացման արդյունքում պարզեցինք, որ դեռահասների մոտ վարքային շեղումների դրսևորմանն առավել նպաստում են բնավորության շեշտվածության հիպերտիմ և գրգռվող տիպերը: Դեռահասության տարիքում բնավորության առանձնահատկությունները հաճախ սրվում են և պսիխոզեն ազդեցությունների ժամանակ կարող են առաջանալ վարքային շեղումներ, ադապտացիայի ժամանակավոր խանգարումներ:

Ամփոփելով մեր փորձարարական հետազոտության միջոցով ստացված տվյալները՝ կարելի է ասել, որ մեր առաջադրած հիպոթեզը հաստատվեց: Այսինքն՝ ծնողների վերաբերմունքը դեռահասի նկատմամբ, հիպերավտորիտարիզմը, հուզական կապի սահմանափակվածությունը, դեռահասի անձի անտեսումը հանդիսանում է դեռահասի ցածր ինքնագնահատականի և տագնապայնության բարձր մակարդակի պատճառ: Մեկուսանալով ընտանիքից՝ դեռահասն ինքնահաստատվում է՝ դրսևորելով վարքագծային դրսևորման խաթարման ձևեր, որին նպաստում են նաև բնավորության շեշտվածության առավել վառ ընդգծված տիպերը, մասնավորապես՝ գրգռվող և հիպերտիմ տիպերը:

3. Змановская, Е.В., (2004). Девиантология: (Психология отклоняющегося поведения). Учеб. Пособие для студ. Высш. Учев. Заведения.-2-е изд., испр.-М.: Издательский центр Академия.
4. Лангмейер, Й.; Матейчек, З. (1984). Психология депривации в детском возрасте, Прага.

ԱՂՋԻԿ ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ՇԵՂՎՈՂ ՎԱՐՔԻ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ  
ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ՈՉ ԼԻԱՐԺԵՔ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ

ԱՄՓՈՓՈՒՄ

Այսպիսով, ծնողների վերաբերմունքը դեռահասի նկատմամբ, հիպերավտորիտարիզմը, հուզական կապի սահմանափակվածությունը, դեռահասի անձի անտեսումը հանդիսանում է դեռահասի ցածր ինքնագնահատականի և տագնապայնության բարձր մակարդակի պատճառ: Մեկուսանալով ընտանիքից՝ դեռահասն ինքնահաստատվում է՝ ցուցաբերելով վարքագծային դրսևորման խաթարման ձևեր, որին նպաստում

են նաև բնավորության շեշտվածության առավել վառ ընդգծված տիպերը, մասնավորապես՝ գրգռվող և հիպերտիմ տիպերը:

*Հանգուցային հասկացություններ.* դեռահաս, շեղվող (դևիանտ) վարք, ռեակտիվ տագնապայնություն, անձնային տագնապայնություն, անբարենպաստ ընտանիք, բնավորության շեշտվածություն:

PNJOYAN ARUSYAK

REASONS FOR MANIFESTING TEENAGE GIRLS DEVIANT BEHAVIOR IN AN  
INCOMPLETE FAMILY

SUMMERY

Parents' attitude towards teenagers, hyper-authoritarianism, restricted emotional bond, disregard of teenager's personality are the main causes for the low self-esteem and the high level of anxiety in teenagers. Being isolated from the family the teenager becomes self-asserted manifesting types of behavioral disruption to which

contribute the most pronounced types of character, particularly the irritative and hypertim types.

*Key concepts:* Teenager, deviate behavior, reactive anxiety, unfavorable family, character emphasis.

ՄԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ ՄԱՍՈՒԼՈՒՄ  
(խմբագրության խմբագրմամբ)

ԲՐՈՒՏՅԱՆ ԳԵՈՐԳ. «ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ ԻՄԱՆԱԼ ՔԻՉ-ՔԻՉ,  
ՔՉԻ ՄԱՍԻՆ՝ ԱՄԵՆ ԻՆՉ»

«Միրէ՛ք այն բնագավառը, որտեղ պատ-  
րաստվում էք գիտական աշխատանք ծավա-  
լել», - այս խորհրդով սկսեց իր դասախո-  
սությունը Խաչատուր Աբովյանի անվան  
հայկական պետական մանկավարժական  
համալսարանին առընթեր Մետափիլիսո-  
փայության, փոխակերպման տրամաբանու-  
թյան և փաստարկման տեսության միջազ-  
գային հետազոտական ինստիտուտի տնօ-  
րեն, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գեորգ Բրուտյա-  
նը:

Սկզբնական կրթության ֆակուլտետի  
ուսանողական գիտական ընկերության կազ-  
մակերպած «Ինչպե՞ս գրել գիտական աշխա-  
տանք» գիտագործնական սեմինարի ընթաց-  
քում Ակադեմիկոսն անդրադարձավ գիտա-  
հետաոտական աշխատանքի առանցքային  
խնդիրներին՝ կարևորելով առաջին հերթին  
թեմայի ճիշտ ընտրությունը. «Պատրաստի  
թեմայով գիտական աշխատանք գրելն,  
ասես, այն ամուսնություններից է, երբ աղ-  
ջիկն ամուսնանում է առանց փեսացուին  
նախապես տեսնելու»:

«Ես միշտ անում եմ այն, ինչ հավանում  
եմ, բայց միշտ չէ, որ հավանում եմ այն, ինչ  
անում եմ», - մեջբերելով իր նշանաբանը՝ փի-  
լիսոփան զգուշացնում է, որ գիտական աշ-  
խատանքը ավարտելուց հետո այն չպետք է  
անմիջապես հրատարակել. աշխատանքը  
պետք է օտարանա և որոշ ժամանակ անց  
քննադատվի հենց հեղինակի մոտեցումնե-  
րով:

Գեորգ Բրուտյանը համաձայն է, որ գի-  
տության մեջ յուրաքանչյուր նորություն  
դժվարություն է առաջացնում, բայց և շտա-  
պում է պնդել՝ «գիտական աշխատանք գրելը

բարդ պրոցես է, որը պետք է անցնել սիրով և  
մեծ նվիրումով»:

Կենսաբանության, քիմիայի և աշխար-  
հագրության ֆակուլտետի մագիստրատու-  
րայի ուսանողուհի Անուշ Առաքելյանն ար-  
դեն երեք գիտական հոդվածի հեղինակ է:  
Դասախոսության ընթացքում ստացած տե-  
ղեկատվությունը նա նոր գիտելիք համարեց.  
«Մեզ համար մեծ պատիվ է Ակադեմիկոսի  
դասախոսությանը մասնակցելը: Արդեն իսկ  
մտապահել ենք անվանի փիլիսոփայի յու-  
րաքանչյուր միտք ու խորհուրդ. դրանք կա-  
րող են հաջողված գիտական աշխատանքի  
երաշխիք լինել»:

Հանդիպման ավարտին Գեորգ Բրուտ-  
յանը փորձեց սեփական օրինակով վարակել  
երիտասարդներին և նրանց մղել գիտական  
գործունեության. «Եթե գիտական աշխա-  
տանք գրելու համար գրիչ էք վերցրել,  
ուրեմն պարտավոր եք գրել»:

Գիտագործնական սեմինարները կլի-  
նեն շարունակական: Առաջիկայում զեկույց-  
ներով հանդես կգան դոցենտ Ս.Փիլոսյանը,  
Լ.Պողոսյանը և ուրիշներ:

Շարքը կամփոփվի կլոր սեղանով, ուր  
ուսանողները կքննարկեն իրենց ձեռքբե-  
րումները՝ ներկայացնելով առաջարկու-  
թյուններ հետագայում նոր սեմինարներ անց-  
կացնելու կապակցությամբ:

Աղբյուրը՝ [www.armspu.am](http://www.armspu.am)

Քրիստինե Մելքոնյան

Խաչատուր Աբովյանի անվան  
հայկական պետական մանկավարժական  
համալսարանի պաշտոնական կայքի

լրագրող

18 մարտի, 2013

# ԱՐԺԱՆԱՅԵԼ Է «ՌՌԻՍԱՍՏԱՆԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀՈԳԵԲԱՆ» ԿՈՉՄԱՆԸ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ

2012 թվականին լրացավ Հոգեբանական գիտությունների միջազգային ակադեմիայի 20-ամյակը, որի կապակցությամբ հայտարարվել էր հոգեբանության ասպարեզում տպագրված լավագույն գիտահետազոտական աշխատանքների մրցույթ: Ակադեմիայի աշխատանքները համակարգում է Յարուսլավի պետական համալսարանը, որը Ռուսաստանի Դաշնության հնագույն բուհերից է: Ակադեմիայի կազմում ընդգրկված են ինչպես Ռուսաստանի, այնպես էլ համաշխարհային ճանաչում ունեցող գիտնականներ՝ այլ երկրներից:

Նախապես հայտարարված մրցույթին և «21-րդ դարի հոգեբանությունը» թեմայով կոնգրեսին մասնակցել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի տարիքային և մանկավարժական հոգեբանության ամբիոնի վարիչ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վլադիմիր Կարապետյանը:

Մրցույթի ամփոփումից հետո պարզ դարձավ, որ հոգեբանն արժանացել է «Ռուսաստանի լավագույն հոգեբան» կոչմանը, միաժամանակ ստացել է Հոգեբանական գիտությունների միջազգային ակադեմիայի Պատվավոր նշան, իսկ նրա «Անձի ինքնա-

գնահատականի փորձարարական ուսումնասիրումը «ես» հայեցակարգի և պսիխոսեմանտիկայի տեսանկյունից» գիտական հոդվածը զետեղվել է կոնգրեսի հրատարակած հատորակում:

Ակադեմիան հատկապես գնահատում է վերջին հինգ տարիների կատարած աշխատանքները, կազմակերպում է փորձաքննություն և բալային համակարգով գնահատում ներկայացվածը: Վլադիմիր Կարապետյանը ներկայացրել էր վերջին տարիների 52 աշխատանք՝ համապատասխան ամփոփումներով:



Խաչատուր Աբովյանի անվան  
հայկական պետական մանկավարժական  
համալսարանի պաշտոնաթերթ,  
15 դեկտեմբերի, 2012, № 20

# ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ

## ՀԱՅ-ԲՈՒԼՂԱՐԱԿԱՆ ԿԱՊԵՐ

Հարցազրույց փիլիսոփայության դոկտոր, պրոֆեսոր,  
Բուլղարիայի ազգային խորհրդի, Եվրոպայի կրոնական համայնքի  
անդամ ՌՈՒՊԵՆ ԿՐԻԿՈՐԵԱՆԻ հետ

- Պարոն Կրիկորեան՝, ի՞նչ առաքելությամբ եք այս անգամ այցելել Հայաստան: Ձեզ ընդունեց Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ռեկտորը: Ի՞նչ հարցեր քննարկեցիք և համագործակցության շուրջ ի՞նչ պայմանավորվածություն ձեռք բերեցիք:

- Այցելել եմ մասնակցելու Վեհափառի հոբելյանին և գահակալության 12-րդ տարեդարձին, ինչպես նաև աջակցելու Հայաստանի և Բուլղարիայի ակադեմիաների միջև գիտական կապերի վերստեղծմանը: Նաև այցելեցինք պարոն Միրզախանյանին՝ պայմանավորվելով Բուլղարիայի Սոֆիա, Պլովդիվ և Շումեն քաղաքների մանկավարժական համալսարանների և Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի միջև համագործակցային կապեր ստեղծելու մասին, հատկապես փիլիսոփայական գիտությունների զծով:

- Խոսքը դասախոսների և ուսանողների փոխադարձ այցելությունների՞ն է վերաբերում:

- Ոչ միայն: Դոկտորական ատենախոսությունների պաշտպանություններ, համատեղ գիտաժողովներ... մի խոսքով՝ գիտակրթական տարբեր կապերի ստեղծում ու զարգացում:

- Մա Ձեր ռեբորդ այցն է Հայաստան և հատկապես ինչի՞ց եք տպավորված:

- Հայաստան այցելում եմ արդեն տասներորդ անգամ: Մեզ զարմացրեց Ձեր համալսարանի սովորողների քանակը՝ 14 հազարը: Մեծ թիվ է, դա շատ կարևոր է: Նաև տեղեկացանք, որ Մանկավարժական համալսարանը տոնելու է իր հիմնադրման 90-ամյակը: Ռեկտորը մեզ հրավիրեց, և մենք անպայման կմասնակցենք այդ հոբելյանին:

- Ի՞նչ կասեք հայ-բուլղարական կապերի մասին:

- Բուլղարացիները հայերին շատ են սիրում: Մենք հաճույքով ձեռնամուխ կլինենք երկու երկրների միջև նոր կապերի ստեղծմանն ու ամրապնդմանը: Վերջին տարիներին Հայաստանի և Բուլղարիայի կապերը, դժբախտաբար, փոքր-ինչ թուլացել են:

- Կներկայացնե՞ք Բուլղարիայի հայկական համայնքը:

- Բուլղարիայի հայկական համայնքը շուրջ քսան հազար է: Հայեր կան Բուլղարիայի տարբեր քաղաքներում՝ Սոֆիայում, Վառնայում և այլուր, բայց ամենից շատ Պլովդիվում՝ 4000: Բուլղարիայում բնակվող հայերի մեջ մեծ թիվ են կազմում մտավորականները: Կան գիտության դոկտորներ, պրոֆեսորներ, ուսուցիչներ, ինժեներներ... Հայերը հարգված մարդիկ են: Մեծ գործունեություն են ծավալում փոքրիկ միությունները, եկեղեցական և բարեգործական կազմակերպությունները, համազգայինները: Ունենք վեց եկեղեցի և հինգ մատուռ:



- *Ի՞նչ էք ակնկալում համագործակցությունից:*

- Երբ երկու երկրների համալսարաններն իրար հետ աշխատեն, օրինակ, փիլիսոփայության գծով, երկու երկրների փիլիսոփայական մտքերն իրար կմոտենան... Տնտեսական, ֆինանսական և մյուս ասպարեզներից գատ, երբ ուսումնագիտական համագործակցություն է իրականացվում, դա, անշուշտ, մեծ դեր է խաղում երկրների և ժողովուրդների կապերի զարգացման գործում:

- *Ղուք փիլիսոփայության դոկտոր, պրոֆեսոր եք: Ի՞նչ է փիլիսոփայությունը Ձեզ համար:*

- Այո՛, աշխատում եմ Բուլղարիայի ակադեմիայում: Փիլիսոփան նա է, ով սիրում է մտքով աշխատել՝ մտածել: Փիլիսոփայությունը բոլոր գիտությունների հիմքում է: Ամենքս էլ փիլիսոփա ենք: Այդ գիտությունն անըդիստ զարգացման մեջ է:

- *Ինչպիսի՞ն տեսաք Հայաստանը:*

- Ճիշտ է, ավելի շատ էջմիածնում եմ անցկացնում, բայց ես եկել եմ Հայրենիք և փորձում եմ շատ բան տեսնել: Տեսա մեծ շինարարություն և նոր շենքեր:

- *Կուզեի՞ք Հայաստանում ապրել:*

- Իհարկե: Բուլղարիայում լավ է, բայց դա մեր հայրենիքը չէ:

- *Բուլղարիայում շատ են թուրքերը: Ինչպե՞ս են հայ-թուրքական հարաբերություններն այդ երկրում:*

- Թուրքերը մեզ հարգանքով են վերաբերվում:

- *Ակադեմիկոս Բրուսյանի հետ վաղեմի բարեկամներ եք, այնպես չէ՞:*

- Երեսուն տարի առաջ եմ ծանոթացել Բրուսյանի հետ, Բուլղարիայում: Քսանհինգ տարի առաջ միասին մասնակցում էինք Դավիթ Անհաղթին նվիրված մի մեծ գիտաժողովի: Բրուսյանը մեծ ճանաչում ունեցող փիլիսոփա է, նրա հետ շատ գրքեր ենք գրել:

- *Շնորհակալություն, հուսով ենք համագործակցությունը արդյունավետ կլինի և կնպաստի կրթական գործընթացների զարգացմանը:*

Հարցազրույցը՝ Սիլվա Ասրյանի  
«Մանկավարժական համալսարան»

պաշտոնաթերթ

22 նոյեմբերի, 2011 թ., № 15 (912)

«Օրեր»-ի հարցերին պատասխանում է Խաչատուր Աբովյանի անվան  
հայկական պետական մանկավարժական համալսարանին առընթեր  
Մետափիլիսոփայության, փոխակերպական տրամաբանության և  
փաստարկման տեսության միջազգային գիտահետազոտական  
ինստիտուտի տնօրեն ակադեմիկոս Գեորգ Բրուտյանը

Գեորգ Բրուտյանը 1947 թվականին գերազանցությամբ ավարտելով Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը, և զուգահեռաբար հումանիտար կրթություն ստանալով Երևանի պետական համալսարանում, երիտասարդ տարիքում Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանում պաշտպանելով թեկնածուական և դոկտորական ատենախոսություններ, 1963 թ. ստացել է պրոֆեսորի կոչում: Իր 60-ամյա գիտակրթական գործունեության ընթացքում եղել է Վ.Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի փիլիսոփայության ամբիոնի հիմնադիր վարիչը, հիմնադրել և տասնվեց տարի շարունակ ղեկավարել է Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության և տրամաբանության ամբիոնը, ուր սկսել է դասավանդել 1951 թվականից:

1974-1994 թթ. ղեկավարել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության և բանասիրության բաժանմունքի աշխատանքները:

1994-2002 թթ. եղել է ՀՀ ԳԱԱ հումանիտար գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ապա՝ նույն ակադեմիայի փոխպրեզիդենտ: Քսան լեզուներով հրատարակվել են նրա յոթանասուն մենագրական հետազոտությունները, գրքերն ու դասագրքերը, երկու հարյուր հոդվածները: Նա ղեկավարում է Փիլիսոփայության միջազգային և Հայկական փիլիսոփայական

ակադեմիաները, Փաստարկման միջազգային ինստիտուտը, անդամակցում է երկու տասնյակ հեղինակավոր միջազգային կազմակերպությունների ու ակադեմիաների, արժանացել է բազմաթիվ պետական ու հասարակական, գիտական պարգևների:

- Այսօր Հայաստանի բուհական համակարգը քսանամյա փորձարկումներից հետո նոր փուլ է թևակոխել: Եթե համեմատելու լինեք խորհրդային տարիների հետ, ի՞նչ դրական ու բացասական փոփոխություններ կան, որ ազդում են ուսանողների ուսման վրա:

- Հիմա ողջ աշխարհում ձգտում կա միասնական դարձնել ուսումնական ծրագրերը: Դրա առավելությունն այն է, որ երկրից երկիր գնալու կամ համալսարանից համալսարան փոխադրվելու դեպքում, դժվարություններ չլինեն, օգտագործվի գնահատման նույն համակարգը: Այլ բան է, թե ինչպես է դա կատարվում: Հատկապես Հայաստանում շտապում են, որ հասնեն միջազգային մակարդակի, բայց շտապելը լավ խորհրդատու չէ: Չափի զգացումը շատ կարևոր է: Դեմոկրատիան անորոշ հասկացություն է, որը վտանգավոր է չափազանցման և ժխտման տեսակետից: Ինչպես հայտնի ասացվածքն է ասում՝ «Եթե չափազանցրեցիք այն, վերածվում է անարխիայի, եթե նեղացրեցիք՝ վերածվում է մոնարխիայի»: Ուստի, պետք է

զգույշ լինել: Բառերի աշխարհը շատ կարևոր է: Ամերիկյան փիլիսոփա Կառնապն առաջադրել է մի շատ հետաքրքիր թեզ այն մասին, որ մենք ոչ միայն առօրյա կյանքում, այլև գիտության մեջ ստույգ հասկացություններ չենք օգտագործում: Օգտագործում ենք էքսպլիկանդ հասկացություններ, որոնք ստույգ չեն, բայց վստահ ենք, որ դրանք մեզ շրջապատող իրականության համարժեք արտացոլումներն են: Գիտությունն այնպիսի արագությամբ է զարգանում, որ մարդիկ դժվարանում են միմյանց հասկանալ:

- *Ղուք ավելի ընդհանուր պատասխանեցիք, երևի նկատի ունենալով նաև Ձեր միջազգային փորձը, որը կցանկանայի հակիրճ ներկայացնել:*

-1958 թվականից ութ անգամ ես մասնակցել եմ փիլիսոփայության համաշխարհային համաժողովների, որոնք տեղի են ունենում հինգ տարին մեկ անգամ: Ավելի հիշատակելի է, երբ Անգլիայում (Բրայտոն) ղեկավարեցի փաստարկման տեսության կլոր սեղանը՝ Համաշխարհային փիլիսոփայական կազմակերպությունների ֆեդերացիայի XVIII համաժողովի շրջանակներում: Հիսուներեք խոշոր փիլիսոփաների ընդգրկեցի այնտեղ: Այժմ Փիլիսոփայության միջազգային ակադեմիայի պաշտոնական հանդեսի (*News and Views*-ի) խմբագիրն եմ իբրև այդ ակադեմիայի նախագահ:

- *Ինչպե՞ս էք պատկերացնում գիտության և մանկավարժության համատեղումը:*

- Ես ամբողջ կյանքում աշխատել եմ Երևանի պետական համալսարանում և ՀՀ ԳԱԱ ակադեմիայի նախագահությունում:

Մանկավարժական համալսարանում ստեղծվել է Մետափիլիսոփայության, փոխակերպական տրամաբանության և փաստարկման տեսության միջազգային գիտահետազոտական ինստիտուտ: Փորձում եմ

ուսանողներին հետ միասին զարգացնել Ինստիտուտի ուղղությունները: Ես աշխարհի շատ երկրներում եմ դասախոսել, և կարող եմ համեմատել: Դասախոսների ընտրությունն առաջ հինգ տարին մեկ էր կատարվում, իսկ հիմա՝ երեք տարին մեկ, որն այնքան էլ ճիշտ չէ:

Մենք չենք կարող մի քանի տարվա մեջ հասնել Օքսֆորդի կամ Քեմբրիջի համալսարանների մակարդակին, բայց պարտավոր ենք ձգտել: Իհարկե, յուրաքանչյուր հիմնարկ ունի իր առավելություններն ու թերությունները: Վատն այն չէ, որ մենք ընդօրինակենք ուրիշի լավը: Վատն այն է, երբ մենք մոռանում ենք մեր լավը և ընդօրինակում ուրիշի վատը: Եվ դա մեզ մեր նպատակին չի հասցնում:

- *Իսկ ուսանողության մեջ տարբերություն կա՞:*

- Ես մի բան եմ նկատել, որ յուրաքանչյուր սերունդ դրական է հիշում իր տարիների ուսանողությանը և դժգոհում է այսօրվա ուսանողներից: Տարածված հիվանդություն է: Ես հիմա էլ աշխատում եմ ուսանողներին հետ, նրանց ընդգրկում եմ Փիլիսոփայության միջազգային ակադեմիային կից գործող երիտասարդ գիտնականների ընկերակցությունում: Ավելի լավ է ամեն կուրսից մի տաղանդավոր երիտասարդի ընտրել, քան ամբողջ կուրսի առաջ ելույթ ունենալ: Տիգրան Պետրոսյանի օրինակը բերեմ: Թեև նա ավարտել էր Վ.Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների պետական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետը, բայց ես նրան տարա դեպի փիլիսոփայությունը: Ես խորապես համոզված էի, որ նա արժանի է և կդառնա ակադեմիկոս:

Դժբախտաբար նա մահացավ երիտասարդ տարիքում: Բայց ես նրան, ինչպես և մի այլ փայլուն գիտնականի՝ Ասմուսին, ետ-

մահու տվեցի Հայոց փիլիսոփայական ակադեմիայի ակադեմիկոսի կոչում: Ասմուր համարձակ մարդ էր, և խորհրդային տարիներին խանգարում էին, որ նա դառնա ակադեմիկոս: Մի առթիվ գրել եմ, նորից կասեմ, որ ինտելեկտը վերացնում է տարիքների միջև եղած տարբերությունը: Ես միշտ խոնարհվել եմ իմ ուսուցիչների ինտելեկտի առջև: Հիշում եմ, երբ տարիներ առաջ ակադեմիայում մի քանի ակադեմիկոսներով նստած զրուցում էինք, անսպասելի ներս մտավ Մերգեյ Մերգեյանը (ով ներկաներից մոտ քսան տարով և ինձնից երկու տարով փոքր էր): Բոլորս միանգամից ոտքի կանգնեցինք: Դա հարգանք էր մի երիտասարդի նկատմամբ, ով քսամենկ տարեկանում դարձել էր ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր և փայլատակել էր իր ինտելեկտով: Իմ ուսանողներից Աննա Ամիրխանյանը շատ լավ մասնագիտացավ փիլիսոփայության ուղղությամբ: Ինձ մոտ աշխատելիս նա չորս գրքույկ գրեց, քսաներկու տարեկանում գիտության թեկնածու դարձավ: Բայց ամերիկացիները նրան հրավիրեցին ԱՄՆ: Շատ եմ ափսոսում, որ նա գնաց: Այնպես որ նման շնորհալի ուսանողներ կան: Այսօր ավելի լավ ուսանողներ ունենք, քան նախկինում: Կար ժամանակ, երբ զարմանում էին, որ ես հարթ անգլերենով եմ խոսում, այսօր դա զարմանալի չէ: Դուստրս նույնպես դասավանդում է համալսարանում, պրոֆեսոր է և ասում է, որ ուսանողներն երբեմն այնպիսի անգլերեն բառեր են օգտագործում, որ դասախոսները չգիտեն: Այժմ մեզ մոտ աշխատելիս պետք է տիրապետել համակարգչին և անգլերենին: Տարբեր համալսարաններում շատ լավ ուսանողներ ունենք, և նրանք մեր ապագան են:

*- Շատերը չեն նկատում կյանքի և փիլիսոփայության կապը: Ձեր Ինստիտուտը մեր ժամանակներում փաստարկման տեսությունն ինչպե՞ս է կիրառում:*

- Երբեք չպետք է դատել, թե պրակտիկ ինչ հետևանքներ է ունենալու փիլիսոփայական գիտությունը: Ոչ մի մաթեմատիկոս այդ մասին չի մտածում, երբ հայտնագործություն է անում: Նույնը՝ ֆիզիկոսները, որոնք նույնիսկ զոջում էին, երբ ատոմային ռումբ ստեղծեցին: Ես փիլիսոփայական գիտության ոչ բոլոր բնագավառներով եմ զբաղվել: Այժմ մեր Ինստիտուտը զբաղվում է այն խնդիրներով, որոնցով ես զբաղվել եմ և այդ թեմայով կոնգրես եմ կազմակերպել Ամերիկայում: Հիմա երիտասարդներին եմ հանձնարարում զբաղվել այդ հարցերով: Սա էլ հենց Փաստարկման երևանյան դպրոցն է:

*- Մասնագետների կարծիքով Դուք Փաստարկման երևանյան դպրոցի հիմնադիրն եք: Ի վերջո, որո՞նք են փիլիսոփայության բնագավառում Ձեր կատարած հայտնագործությունները:*

- Յոթանասուն մենագրություն և երկու հարյուր միջազգային ամսագրերում տպագրված հոդվածներ ունեմ: Իսկ իմ արածի մասին կարող եմ ասել, հիմք ընդունելով այլոց գրածները: Նախ տրամաբանության բնագավառում առաջադրել եմ բազմատրամաբանության գաղափարը, որի հիմնական իմաստը շարադրված է Օքսֆորդում հրատարակվող *MIND* ամսագրի *On Polylogic* հոդվածում: Ի դեպ, ինչպես ասացին, Խորհրդային Միությունից առաջին դասախոսն էի, որ փիլիսոփայությունից դասախոսություն էի կարդում Օքսֆորդի համալսարանում: «Polylogic» բառը մինչ այդ չկար անգլիական բառարաններում: Այնուհետև փոխակերպական (տրանսֆորմացիոն) տրամաբանությունը ստեղծելուց առաջ ես մտածում էի, թե

ինչպես է, որ տրամաբանության դասագրքերում, ձեռնարկներում միևնույն հարցի վերաբերյալ իրար հակասող մեկնաբանություններ կան: Ավելին, միևնույն դասագրքում ևս այդպիսի հակասություններ կան, և դրանց բացատրությունն էլ ամենևին հիմնավորված չէ: Փոխակերպական տրամաբանությունը տալիս է հարցի լուծումը՝ տարբերակելով մտքի բացահայտ և ոչ բացահայտ ձևերը:

Հաջորդը՝ թարգմանության տրամաբանությունը, նույնպես ծնունդ է առել որպես միանգամայն նոր գիտական ուղղություն և գրախոսականներում միայն դրվատանքի է արժանացել: Լեզվաբանական լրացչության բնագավառում առաջադրել եմ «Լեզվաբանական լրացչության սկզբունքը»: Փիլիսոփայական և լեզվաբանական գրականության մեջ այն անվանում են «Բրուտյանի լեզվաբանական լրացչության սկզբունք»: Հայագիտության բնագավառում քննական վերլուծության եմ ենթարկել Դավիթ Անհաղթի ուսմունքը տրամաբանության մասին: Եվ վերջապես, փաստարկման տեսության բնա-

գավառում ստեղծվել է Փաստարկման երեվանյան դպրոցը, որի մասին եղած գնահատականներից կարելի է հիշատակել միայն մեկը. «Բրուտյանը ստեղծել է փաստարկման ընդհանրացնող տեսություն, մշակել է փաստարկող դիսկուրսի կադապարը, բացահայտել է փիլիսոփայական փաստարկման առանձնահատկությունը»: ԽՍՀՄ-ում փաստարկման հետազոտությունների զարգացումը նախևառաջ կապված է Բրուտյանի անվան հետ: ԱՊՀ մի շարք երկրներում, ինչպես նաև որոշ արտասահմանյան երկրներում Բրուտյանի աշակերտները և հետևորդները ձեռնամուխ եղան փաստարկման հայեցակարգի հետազոտմանը՝ հիմքում ունենալով իր գաղափարները: Կազմավորվեց Փաստարկման երևանյան դպրոցը, որի արդյունավետ գործունեությունը ճանաչվել է փաստարկման հետազոտության համաշխարհային կենտրոնների կողմից»:

«Օրեր» ամսագիր  
9-10/60/2011 թ.

## ՀՈՎՀԱՆՆԻՄՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

### ԱՐՄՆՅՈՒԶ լրատվական հեռուստաալիքի «Իմ գրադարանը» հաղորդաշարի շրջանակներում իրականացված հարցազրույցից

*«Սպառել ամբողջ գրականությունը, թեկուզն է՝ զուտ մասնագիտական, էլ չասենք՝  
գեղարվեստական, հնարավոր չէ, բայց անընդհատ կարդալն անհրաժեշտ է:  
Այն մարդը, ով չի կարդում, չի տարբերվում նրանից, ով կարդալ չգիտի:  
Կարծում եմ՝ նրանց միջև տարբերությունն իրոք մեծ չէ»:*

#### **- Ձեր առաջին գիրքը, գրադարանի պատմությունը:**

- Գրքի հետ շփվելու ավանդույթը, գրադարան ունենալու սովորույթը մեր ընտանիքից է գալիս: Առաջին գիրքը, որը մանկական հիշողություններումս տպավորվել է, թերևս, «Սասունցի Դավիթ» էպոսն է: Դեռ տառաճանաչ չէի, ծնողներս էին կարդում ինձ համար: Երկարօրյա ժամեր կային դպրոցում: Երբեմն էլ ոգևորված վերապատմում էի նախորդ օրը ընթերցվածը՝ այդպես լցնելով երկարօրյա պարապմունքների մի հատված: «Սասունցի Դավիթ» էպոսն էր առաջին գիրքը:

Մեծ գրադարան ունենք ծնողներիս տանը: Հայրս բանասեր է, մայրս՝ ֆիզիկայի մասնագետ: Ե՛վ բնագիտական, և՛ հումանիտար, և՛ հասարակագիտական բնագավառների ստեղծագործությունները բավականին շատ էին մեր գրադարանում: Ընդ որում, այդ տարիների՝ 70-ից, 80-ականների չափանիշներով մեր ծանոթների շրջանում, երևի թե, ամենամեծ գրադարանը մեր տանն էր: Այսօր էլ իմ գրքերի մի զգալի մասը ծնողներիս տանն է: Բնակարանային իմ փոքր աշխատասենյակում հավաքած են այն գրքերը, որոնք մշտապես օգտագործվում են կամ էլ այս պահին ձեռքի վրա են: Ճիշտ է, այսօր արդեն կան էլեկտրոնային տարբերակով գրականություն ունենալու հնարավոր

ություններ, ինֆորմացիայի կրիչներ, որոնք հետզհետե գալիս են փոխարինելու տպագիր գրքերին: Մի առիթով ընկերներիցս մեկը պնդում էր, թե կարիք չկա բնակարանում զգալի տեղ զբաղեցնող գրադարան ունենալ, երբ կարելի է նույն ինֆորմացիան փոքրիկ կրիչների վրա պահել կամ էլ համացանցից ներբեռնել: Բայց ես կարծում եմ, որ գիրքը, բացի այն, որ զուտ ինֆորմացիա կրող է, ունի նաև միստիկ գործություն: Ընտանեկան ավանդույթը ինքս էլ շարունակում եմ. երբ փողոցում, գրադարանում, գրախանութում հետաքրքիր գրքեր եմ տեսնում, փորձում եմ ձեռք բերել տան գրադարանի համար:

Մեր աշխատանքային գրադարանից միայն ես չէ, որ օգտվում եմ, թեև հիմնական օգտվողը ես եմ: Նաև տիկնոջս գրքերն են այստեղ: Վերջին շրջանում մեր փոքրիկը ևս իր որոշ գրքեր պահում է գրադարանի դարակներում: Ինչքան էլ փորձում ենք աշխատասենյակի դուռը փակ պահել, որպեսզի նա ներս չմտնի, ազելված պտուղը քաղցր է սկզբունքով և որևէ հետաքրքիր հնարքով կարողանում է թափանցել: Որդիս՝ Արամը, դեռ կարդալ չգիտի, բայց սովորել է գրքերը խնամքով թերթել: Ես դրա համար ուրախ եմ, թերևս դա խաղալիքներից ամենաօգտակարը կարող է լինել:

**- Ուսանողական տարիներին ձեռք բերած գրքերը:**

Ժամանակին, երբ պոստմոդերնիստական շրջանի փիլիսոփաների աշխատությունները Խորհրդային Միությունում այնքան էլ ակտիվ չէին հրատարակվում, դեռ ուսանողությանս տարիներին ոչ մեծ ժողովածուով հրատարակվեցին Ֆրիդրիխ Նիցշեի, Էրիխ Ֆրոմի, Զիգմունդ Ֆրեյդի, Ալբեր Բամյուի, Ժան-Պոլ Սարտրի ստեղծագործությունները՝ ընդհանրական վերնագրով, որը Նիցշեից էին վերցրել՝ «Աստվածների մթնշաղ»։ Այդպիսի շատ գրքեր ուսանողական տարիներին եմ ձեռք բերել։ Հիմա, իհարկե, գիրք գնելու ու գրադարանը համալրելու հնարավորություններն անհամեմատ ավելացել են ուսանողությանս տարիների համեմատ։

Մի շատ ուշագրավ գիրք էլ (ավելի ճիշտ՝ դրա լուսապատճենը) ձեռք եմ բերել 1990-ականների սկզբին, երբ գրում էի դիպլոմային աշխատանքս։ Գիտեի, որ Արթուր Շոպենհաուերն ունի «Eristise Dialektik» «Էրիստիկական դիալեկտիկա» վերնագրով աշխատություն, բայց Հայաստանի առաջատար գրադարանների կատալոգներում այն գտնել չէր հաջողվում։ Այդ տարիներին ինտերնետի հնարավորություն էլ չկար։ Ի վերջո, խնդրեցի Հանրային գրադարանի (այժմ Ազգային է կոչվում) տնօրինությանը թույլ տալ այդ աշխատությունը փնտրել հենց գրապահոցներում՝ Շոպենհաուերի՝ այնտեղ եղած հատորներն ուսումնասիրելով։ 19-րդ դարի երկրորդ կեսերին Լայպցիգում եղուարդ Գրիգեբախի խմբագրությամբ հրատարակված՝ Շոպենհաուերի ձեռագիր ժառանգության (Hadschriftlicher Nachlass) հատորներից մեկում վերջապես գտա ինձ հետաքրքրող գործը։ Փաստորեն, դեռևս ուսանողական տարիներին կարողացա իմ գրադարանի համար ձեռք բերել Ա.Շոպենհաուերի աղմկահարույց աշխատության առաջին

հրատարակությունը՝ հին գերմաներեն շրիֆտով։

Շոպենհաուերը պոստմոդերնիզմի այն մտածողներից էր, որոնք կորցրել էին մարդու նկատմամբ հավատը։ Նա, ընդունելով Արիստոտելի և Սոկրատեսի հանճարն ու հեղինակությունը, միաժամանակ քննադատում է նրանց՝ մարդու հարցում չափազանց լավատեսորեն տրամադրված լինելու համար։ Մարդն, ըստ Շոպենհաուերի, բնականից բարոյապես փչացած երևույթ է։ Եվ եթե Սոկրատեսն ասում է, թե հաղորդակցման, բանավեճի նպատակը պետք է լինի ճշմարտության որոնումը, նոր գիտելիքի բացահայտումը, Արիստոտելը շարունակում է այդ ավանդույթը՝ մշակելով ու համակարգելով հաղորդակցման կառուցողականությունն ապահովող տեխնոլոգիաներ, ապա Շոպենհաուերը գտնում է, որ հաղորդակցման նպատակը պետք է լինի հաղթանակը ցանկացած գնով։ Մաքիավելու այս սկզբունքը գերմանացի փիլիսոփան պաշտպանում է իր աշխատության մեջ։ Շոպենհաուերը մոտ 40 հնարքներ է առաջարկում, թե ինչպես կարելի է դիմացինին խաբել, մոլորեցրել։ Ըստ գերմանացի իռացիոնալիստի, միայն այն դեպքում, երբ հաղթել ենք, և որևէ մեկը չի կասկածում մեր հաղթանակի վրա, կարելի է ըստ էության վերլուծել՝ արժե՞ արդյոք դիմացինի հետ համաձայնել՝ որոշ զիջումներ անե՞լ, թե՞ ոչ։

Բոլորը չէ, իհարկե, որ գերմանացի մտածողի հետ համաձայնում էին։ Ժամանակին ինքս էլ առիթ եմ ունեցել այդ տեսակետը ոչ միայն վերլուծելու, այլև քննադատելու իմ աշխատություններում։ Բայց, ինչպես Կանտի մասին էին ասում, որ Կանտի հետ կարող եք համաձայնել, դեմ էլ կարող եք լինել, բայց առանց նրա չեք կարող, ահա այդպես էլ առանց դասականների հնա-

րավոր չէ պատկերացնել նաև այսօրվա փիլիսոփայական միտքը:

Իմ գրադարանում մի առանձին հատված զբաղեցնում են ամենատարբեր բառարաններն ու հանրագիտարանները՝ սկսած օտար լեզուների և բացատրական բառարաններից մինչև գեղագիտական, բարոյագիտական, քաղաքագիտական, հոգեբանական, փիլիսոփայական, անգամ՝ բժշկագիտական հանրագիտարաններ:

**- Ճամանակակից մտածողների ստեղծագործությունները Ձեր գրադարանում:**

Մասնագիտական, փիլիսոփայական գրքերի շարքից, որոնք կարող են հետաքրքրել նաև բանասերներին, տրամաբաններին, հոգեբաններին, հանրամատչելի լինել գիտությամբ հետաքրքրվող հեռուստադիտողներին, ներկայացնում իմ ուսուցչի՝ ակադեմիկոս Գեորգ Բրուտյանի *Փիլիսոփայություն և լեզու* աշխատությունը, որը հրատարակվել է 1972 թվականին: Այստեղ շարադրված է մի հետաքրքիր տեսություն, որը հենց հեղինակի անունով էլ կոչվում է: Քիչ կան այսօր հայ մարդիկ մեր սերնդակիցների շարքում, ում անունով համաշխարհային գիտության մեջ կոնցեպցիաներ, ուղղություններ կան: Ահա դրանցից մեկն էլ ակադեմիկոս Գեորգ Բրուտյանն է և նրա լեզվաբանական լրացչության սկզբունքը: Գաղափարի ակունքները գալիս են Վիլիելմ ֆոն Հումբոլդտից, ըստ ում վարկածի՝ մարդու մտածողությունը, ազգի հոգևոր-մշակութային առանձնահատկությունները պայմանավորված են լեզվով: Գերմանացի մտածողի այս տեսակետը 20-րդ դարի ամերիկյան լեզվաբաններ Էդուարդ Սեյիբրն ու Բենջամին լի Ուորֆը զարգացրեցին մինչև լեզվաբանական դետերմինիզմի տեսություն: Վերջինիս համաձայն՝ լեզվով պայմանավորված են մտածողությունը, աշխարհայեցողությունը,

վարվեցողությունը: Այսինքն՝ ինչ լեզվով մարդը խոսում է, այդպես էլ մտածում է, ինչպես մտածում է, այդպիսի աշխարհայացք էլ ձևավորում է, ինչպիսի աշխարհայացք ձևավորում է, այդպիսի դիրքորոշում ու վարք էլ դրսևորում է: Այս տրամաբանությամբ շարունակելու դեպքում պետք է նկատել, որ վարքի վրա հասարակական հարաբերություններ են ձևավորվում, իսկ հասարակական հարաբերությունների վրա՝ ինստիտուտներ: Ուրեմն՝ լեզուն է կեցության տունը: Ինչպես խոսում ենք, այդպիսի քաղաքական մշակույթ ունենք, այդպիսի տնտեսություն: Այդ հիպոթեզի զգացված տեսակետը քննադատելով՝ Գ.Բրուտյանն առաջարկեց *լեզվաբանական լրացչության սկզբունքը*: Եթե փորձեմ կարճ վերաձևակերպել, ապա դրա էությունը հետևյալն է. մտքերը գրուցակիցներին փոխանցող լեզվական թաղանթի վերլուծությունը լրացուցիչ ինֆորմացիա է տալիս սուբյեկտի կողմից մտքի առարկայի ընկալման, գնահատման առանձնահատկությունների և այդ առարկայի նկատմամբ նրա ենթագիտակցական վերաբերմունքի մասին: Շատ ուշագրավ իրողություն է, որն անգամ հոգեբաններին, հոգեվերլուծաբաններին կարող է հետաքրքրել: Օրինակ ներկայացնում: Ֆրանսիացին *թոռ* հասկացությունը արտահայտում է *petite-fille* (*փոքր դուստր*) կամ *petit-fils* (*փոքր որդի*), եթե ընդհանրական, ապա՝ *petit-enfant*՝ *փոքր երեխա* տերմինով, անգլիացիները համապատասխանաբար՝ *grand-daughter* (*մեծ դուստր*), *grandson* (*մեծ որդի*) և *grandchild* (*մեծ երեխա*): Հարց է առաջանում՝ ինչու: Մի թե անգլիացին չի հասկանում, որ թոռը որդուց մեծ լինել չի կարող, ինչու՞ է ասում՝ մեծ որդի: Պարզվում է, խոսքն այստեղ կարող է լինել ոչ թե տարիքի, այլ երևույթի ենթագիտակցական ընկալման, թոռին արժեքավորելու մասին: Հաճախ մենք



ել կատակում կամ, ավելի շուտ, լուրջ ենք ասում, քան կատակում, որ հայերն ավելի թոռասեր են, քան որդեսեր: Եվ այդ կապակցությամբ արդեն կատակում ենք ապարանցիների մասին, թե՛ «եթե իմանայի թոռն այս քան լավ բան է, ժամանակ չէի վատնի երեխաներ ունենալու վրա, միանգամից թոռներ կունենայի»: Այս ենթագիտակցական գործոնների մասին է խոսքը: Այնպես որ, երբ քաղաքական գործիչները, հռետորները ճառեր են ասում, պետք է զգույշ լինեն նաև բառերի ընտրության հարցում, որովհետև բառի ընտրությունը խոսում է նաև մտքի առարկայի, դատողության սուբյեկտի նկատմամբ մարդու ենթագիտակցական վերաբերմունքի մասին:

**- Փիլիսոփայության գաղափարաբանական-մշակութային էությունը:**

Այս հարցը մեր իրականության մեջ նորովի կարևորվեց 90-ականների վերջերին. կա՞ ազգային գաղափարախոսության, թե՞ չկա, կե՞ղծ կատեգորիա է, թե՞ իրական: Ի դեպ, Գարեգին Նժդեհի աշխատությունները ևս կան իմ գրադարանում, կան նաև նրա ժառանգության վերաբերյալ վերլուծական գործեր:

Անշուշտ, կեղծ կատեգորիա չի կարող լինել: Կեղծ, սխալ կամ ճշմարիտ կարող են լինել դատողությունները: Իսկ կատեգորիան կարող է լինել դատարկ կամ ծավալ ունեցող: Դատարկ են կոչվում այն կատեգորիաները, որոնք ունեն բովանդակություն, սակայն իրականության մեջ չկա առարկա, որն իր վրա կրի այդ բովանդակության մեջ ամրագրված հատկությունները: Այնպես որ, «կեղծ կատեգորիա» արտահայտության գործածումը զուտ տրամաբանական-մեթոդաբանական տեսակետից ընդունելի չէ: Այնուհանդերձ, ինչու՞ խնդիր ունենք ազգային գաղափարախոսության առումով. ազգային հոգե-

բանություն ունե՞նք, ազգային գիտակցություն ունե՞նք, ազգային գաղափարախոսության հարցում, կարծես, որոշ խնդիրներ ունենք: Ըստ իս, դա գալիս է ազգային փիլիսոփայության հզոր շերտերի բացակայությունից: Իսկ առանց փիլիսոփայության գաղափարախոսական որևէ լուրջ համակարգ լինել չի կարող: Անշուշտ, ունեցել ենք նշանավոր փիլիսոփաներ, բայց նրանք հիմնականում առանձին անհատականություններ են: Հայերս, իրոք, անհատապաշտ ենք, թիմային խաղերում էլ հաճախ դժվարանում ենք: Բայց անհատական հզոր բարձունքներ, իհարկե, ունեցել ենք՝ Դ.Անհաղթ, Գ.Նարեկացի, Գ.Տաթևացի, Վ.Ռաբունի...

Ի դեպ, նկատեցիք, որ իմ գրադարանում կան Սուկրատեսի, Պլատոնի, Արիստոտելի փոքր կիսանդրիները: Կարող է հարց առաջանալ. կա՞ն արդյոք հայ փիլիսոփաների կիսանդրիներ ևս: Իմ գրադարանում Դավիթ Անհաղթի աշխատությունների կողքին կա նաև նրա պղնձաձուլվ բարձրաքանդակը. Հայոց փիլիսոփայական ակադեմիայի պարզն է՝ «Եռամեծ փիլիսոփա Դավիթ Անհաղթ» մեղալը:

Նշանավոր հայ փիլիսոփաներից շատերը հունաբան (ինչպես, օրինակ, Անհաղթ՝ նորպլատոնական), արևմտամետ, արևելամետ դպրոցների ներկայացուցիչներ են: Եվ հաճախ, երբ ինքնության կամ գաղափարախոսության հարց է դրվում, խնդիրն արագ վերածվում է օրինատացիայի հարցադրման՝ ո՞ւմ հետ լինենք. եվրոպացո՞ւ, ռուսի՞, ամերիկացո՞ւ, թե՞ չինացու... Մինչդեռ, այսպիսի դեպքում պետք է եսակենտրոն մտածողություն: Միջազգային գիտաժողովներից մեկի շրջանակներում քննարկում էինք հետևյալ հարցը. հայերը արևելք են, թե՞ արևմուտք, ասիացի՞ են, թե՞ եվրոպացի: Հետաքրքիր մեկնաբանություններ էին ներ-

կայացնում և՛ հայ մասնագետները, և՛ արտասահմանցի գործընկերները: Իսկ երբ հերթը հասավ մեր գյումրեցի ընկերոջը (ասում են, թե գյումրեցիներին Աստված հումոր է տվել և չի խնայել՝ շոայլել է), նա հետաքրքիր կատակ արեց. «Ըշտը էդ հարցը, որ ընձի կուտան, ես ընձի ընկճված կզգամ, կզգամ էն արծվի դերում, որը մոլորվել է, չիդէ՛ ինքը հա՛վ է, թե՞ հնդուհավ»...

Այս իմաստով, իհարկե, ազգային փիլիսոփայական դպրոցի զարգացման լուրջ խնդիր ունենք: Այդ տեսակետից ծանրակշիռ արժեքներ ունենք ոչ միայն միջնադարյան Հայաստանում, ոչ միայն Նոր և Նորագույն շրջանի մտածողների շարքերում, ինչպես, օրինակ, Տիրան Չրաքյան, Կոստան Չարյան, որոնց աշխատությունները ևս ունեն, այլև՝ ի դեմս Փաստարկման երևանյան ժամանակակից դպրոցի, լայն ճանաչում ունեցող մերօրյա մտածողների: Եվ կարծում եմ, որ արտաքին ու ներքին քաղաքականության, հանրային կառավարման խնդիրների ճիշտ մեկնաբանման ու արդյունավետ լուծման գրավականներից մեկը պետք է փիլիսոփայական-մեթոդաբանական հենքը լինի:

**- Գրադարանի գեղարվեստական գործերը:**

Գեղարվեստական գրականության նկատմամբ ևս դժվար է անտարբեր մնալ: Ունեն և՛ հայ, և՛ արտասահմանյան գրողների ստեղծագործություններ: Օրինակ՝ ֆրանսիացի գրող Էմիլ Զոլյայի աշխատությունները, մեր սերնդակից մեկ ուրիշ ֆրանսիացու՝ Անրի Շենվիերի կամ նույն ինքը՝ Հայաստանում Ֆրանսիայի նախկին դեսպան Անրի Կյունիի ստեղծագործությունը, որը վերնագրված է «Երջանկություն ամեն տեսակի»: Այս գործը մի հետաքրքիր փորձ է՝ թվարկելու ու վերաիմաստավորելու երջանկության ըմբռնումները: Հեղինակը

քսանչորս տեսակետ է ներկայացնում (Ֆ.Շոպենի 24 պրելյուդների համանմանությամբ), թե ինչպիսի երջանկություններ մարդը կարող է ունենալ: Դրանցից մեկն էլ, ի դեպ, ասում է՝ ընթերցանությունն է, ապա նաև՝ քայլելու երջանկությունը, անգամ վաստակած ծերությունն է որպես երջանկություն ներկայացնում... Ահա նրա գրքի դարձերեսին զետեղված տողերը, որոնք կարելի է և՛ նախաբան, և՛ վերջաբան համարել. «Հունվարյան մի ուշ գիշեր ժամանեցի նախարմաստների այս երկիր, որ նախնիների պատկերացմամբ հանգրվանել էր երկրային դրախտը: Իմ կացարանի հարթակից պարզ եղանակին սահմանից անդին նշմարում եմ Արարատ լեռը, որի վրա իջավ Նոյյան Տապանը: Ինչևէ, կարծում եմ, որ սահմանները ներքուստ են, մենք պիտի կառուցենք տապանը՝ դրանք անցնելու համար: Այո, այս երկիրը դեռ կարող է երջանկության երկիր լինել: Մենք բոլորս երջանկության նավաբեկյալներն ենք»: Գուցե մի քիչ թախծոտ մեկնաբանությունների էլ է բերում, բայց, ամեն դեպքում, դրականն ավելի շատ է:

Վերջին շրջանում, երբ հեռուստատեսության, մամուլի մասին շատ էր խոսվում, Թումանյանի հրապարակախոսական նյութերը թերթելիս մի հետաքրքիր հասված գտա, որը շատ արդիական է հնչում: Ահա, տեսեք ինչ է գրում Թումանյանը 1910 թվականին. «Նա, ով երկար տարիներ բաժանորդ է եղել մեր թերթերին ու ընթերցող, լավ կլինեմ մի նստեր ու հաշիվ տար իրեն, թե ինչ է ստացել այդ թերթերից: Տարիներով կարդացել է՝ ժողովուրդ, ժողովուրդ... Ո՞վ է այդ ժողովուրդը, ի՞նչ է ուզում, ինչո՞ւ են միշտ նրա անունը տալիս. արդյոք հասկացե՞լ է այդ ընթերցողը: ...Աղմուկներ, աղմուկներ այսինչ հոգեբարձուի կամ այնինչ ուսուցչի չորս կողմը, մեծ մասամբ՝ լիքը հետին մտքե-

րով, կուսակցական կրքերով ու անձնական վիրավորանքներով: ...Ինչ գրել են՝ եղել է կամ բարեկամի գովասանք կամ թշնամու բամբասանք: Եվ մեր այն բազմությունը, որ կրթվել է այդ մամուլի վրա, զարմանալի թեթև, մակերևութորեն դատել ու հեշտ դատապարտել է սովորել, հայհոյել, ցեխը կոխել կամ բարձրացնել, երկինք հանել, դեմն ով ուզում է լինի... Չեն սիրում բնավ առարկել կամ հիմնավորել իրենց առարկությունները, չգիտեն հարգանք տա՞ծել դեպի հակառակորդը և նեղություն չեն քաշում գործի էությունը հասկանալու համար: Թերթերն էլ հոգս չեն քաշում գոնե մի տանելի լեզու ունենալու, և հայոց լեզվի աղճատման ու աղավաղման ամենամեծ պատճառներից մեկն էլ ինքը՝ հայ թերթն է»:

Թումանյանի ստեղծագործությունների կողքին, ահա, մեկ այլ մեծ լոռեցու՝ Մոս Սարգսյանի «Կանչն» է: Ժամանակակից ստեղծագործողներից Վահրամ Մարտիրոսյանի, Ռազմիկ Դավոյանի, Յուրի Պոլյակովի, Նկոլայ Շահնազարյանի գործերն են, Ասպրամ Ծառուկայանի կազմած հուշերը Մոնթեի մասին, արևմտահայերից Իսկուհի Մինասի բանաստեղծությունները և այն: Պետք է խոստովանեն՝ գրադարանիս մեկ երրորդը կազմում են հեղինակների կողմից նվիրված գրքերը:

**- Ընծայագրերով գրքերը:**

Բավականին շատ են դրանք՝ թե՛ մասնագիտական և թե՛ գեղարվեստական: Յուրաքանչյուրն էլ արժեքավոր բովանդակություն ու պատմություն ունի: Մեծ մասը իմ ընկերների ու գործընկերների ստեղծագործություններն են և թանկ են ինձ համար:

Վերջերս, օրինակ, աշուղական արվեստի գիտակ ու ջատագով Թովմաս Պողոսյանից ստացա աշուղ Ջիվանու անհայտ երգերի ժողովածուն: Ակադեմիական մակարդակով

շատ լուրջ գործ է կատարված: Ի դեպ, ինձ շատ ուրախացրեց Թ.Պողոսյանի մտադրությունը՝ համանման մի ժողովածուով հրապարակել նաև աշուղ Մազյու (Աղաջան Փարոյան) համահավաք ստեղծագործական ժառանգությունը: Ասեմ, որ Աշուղ Մազային մայրիկիս պապն է, և մեր տանը որպես մասունքներ են պահվում Նոր Բայազետցի հայտնի աշուղի ստեղծագործությունները, նրան վերաբերող գրքերն ու բերանացի փոխանցված դեռևս ձեռագիր պատմությունները: Հայտնի է, որ մեծն Ջիվանուն Կարգախից Թիֆլիս տանողը, ասպարեզ հանողն ու դեպի աշուղական արվեստի Պառնաս ճանապարհ հարթողը Մազային է եղել:

**- Մեփական ստեղծագործություններն ու գրքերը:**

Գիտական հոդվածներս սկսել են հրապարակվել 1994 թվականից: Իմ առաջին գրքույկը հրատարակվել է 1996 թ. ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության կողմից՝ Փաստարկման միջազգային ինստիտուտի «Երիտասարդ գիտնականի ամբիոն» մատենաշարով: Այդ պրակում երկու աշխատություններ են՝ «Վեճի տեսության հարցերը Հին աշխարհում» (հին հունական, չինական և հնդկական փիլիսոփայական մտքի շրջանակներում ձևավորված ժառանգության համեմատական վերլուծությունն է) և «Վիճաբանության մեթոդաբանական իմացաբանական տեսանկյունները»:

Հաջորդ գրքույկը կոչվում է «Բանավեճի մեթոդը ուսումնադաստիարակչական գործընթացում»: Գայանե Հովհաննիսյանի հետ միասին այն հրատարակման ներկայացրինք, երբ դեռ աշխատում էի Լուսավորության նախարարության Մանկավարժական գիտությունների գիտահետազոտական ինստիտուտում: Գրքույկը հրատարակման է

ներկայացրել Հայոց փիլիսոփական ակադեմիան:

Մյուս մենագրությունը՝ «Հասարակական համակարգի զարգացման հիմնախնդիրները» խորագրով հրատարակվեց 2003 թվականին: Աշխատանքի հիմքում դրեցի ամերիկացի սոցիոլոգ Ռոբերտ Մերտոնի կառուցվածքային-ֆունկցիոնալ վերլուծության սկզբունքը: Մերտոնը մի նոր ուղղություն բացեց, նոր հարթություն ձևավորեց սոցիոլոգիա գիտության մեջ՝ հետազոտության օբյեկտ դարձնելով ոչ թե մարդուն անհատապես, ոչ թե հասարակությունն ընդհանրապես, այլ հասարակության կառուցվածքը՝ ինստիտուտներ, խմբեր, գործընթացներ և ֆունկցիաներ: Այդ տեսակետից հետաքրքիր դիտարկումներ կան իմ աշխատության մեջ մեր հասարակությունում կատարվող փոխակերպումների, դրանց առանձնահատկությունների, դրական և բացասական, բացահայտ և ոչ բացահայտ (թաքնված, դժվար նկատելի) դիսֆունկցիաների վերաբերյալ: Վերջին շրջանում հետխորհրդային երկրներում կատարվող տնտեսական, քաղաքական բարեփոխումների անսպասելի, չկանխատեսված բացասական հետևանքների կապակցությամբ մի աֆորիստիկ միտք էր շրջանառվում՝ ՌԴ էքսվարչապետ Վիկտոր Չերնոմիրդինի ձևակերպմամբ. «Хотели как лучшая, а получилось как всегда»: Խոսքը նաև այդպիսի իրողությունների մասին է:

**- Որպես վերջաբան:**

Հաճախ մոռանում են, որ կրթությունը բիզնես չէ: Բիզնեսը մի ոլորտ է, որտեղ մարդն ամեն ինչ անում է նյութական շահ ունենալու համար: Կրթությունը մի ոլորտ է, որտեղ տեղի է ունենում ավագ սերնդի փորձի ու գիտելիքների համակարգված փոխանցումը երիտասարդ սերնդին: Փողն այստեղ

նպատակ չպետք է լինի, այն պետք է միջոց լինի: Բայց քանի որ մեր կառավարման համակարգում հաճախ փողը դառնում է առաջին գործոնը, կրթությունը սկսում է որակական իմաստով նահանջել:

Եթե վելուծենք գիտելիքների գնահատման այսօրվա մեր համակարգերը և համեմատենք նախկինում գործող սանդղակների հետ, կտեսնենք, որ նախկին 5-միավորանոց համակարգով «1» ստացողի գիտելիքները «բավարար» են գնահատվում մեր կրթական հաստատություններում: Սրանք խնդիրներ են, որոնց մասին մասնագետները պետք է բարձրաձայնեն նաև հրապարակումներով, քննարկումներով: Այդպիսի գործելակերպը մտավորականի կարևոր կոչումը պետք է լինի: Նա չպետք է բավարարվի զուտ գիտահետազոտական աշխատանքով, պետք է դրսևորի հասարակական ակտիվություն, փորձագիտական ձայնի իրավունքով միջամտի հանրային կաևորություն ունեցող խնդիրների քննարկման ու լուծման գործընթացներին:

Բայց կարծում եմ, որ մի կարևոր իրողություն կա: *Սպառել ամբողջ գրականությունը, թեկուզն՝ զուտ մասնագիտական, էլ չասենք՝ գեղարվեստական, հնարավոր չէ բայց անընդհատ կարդալն անհրաժեշտ է: Այն մարդը, ով չի կարդում, չի տարբերվում նրանից, ով կարդալ չգիտի: Կարծում եմ, նրանց միջև տարբերությունն իրոք մեծ չէ:*

Հաճախ ուսանողներին էլ խորհուրդ եմ տալիս կարդալ ոչ թե անգիր անելու համար, այլ կյանքում կիրառելու տրամաբանությամբ: Այլապես, մարդն, ով ունի ինֆորմացիա, բայց դա չի կիրառում իբրև գիտելիք, մեթոդական առումով կիրառությունները չի գտնում, չի տարբերվում զրքից, տեսրից, սղագրության նոթատետրից, որովհետև երկուսն էլ ինֆորմացիայի կրողներ են, բայց

երկուսն էլ այն կիրառել չեն կարող: Այդ իմաստով, վստահ եմ, որ մտավորականի կոչումը պետք է լինի ոչ միայն գիտելիքներ ունենալը, ոչ միայն դասավանդելը, այլև պրակտիկայում դրանք կիրառելը, խնդիրները լուծմանը ծառայեցնելը:

Զրույցի ամբողջական տեսագրությունը կարելի է դիտել համացանցի հետևյալ կայք էջերում.

<http://www.armnewstv.am/programs/2293/216>

[23](#):

23 հունվարի, 2014 թ.

ԱՐՄՆՅՈՒԶ լրատվական հեռուստաալիքի  
վիդեոդարան՝ «Հովհաննես Հովհաննիսյանի  
գրադարանը»

# ՀՈԳԵԲԱՆԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ԽՈՒԴՈՅԱՆ ՄԱՍՎԵԼ

## ԻՆՉՊԵՍ ԱՌԱՋԱԴՐԵԼ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐ ԳԱՂԱՓԱՐ

1. Գիտական ստեղծագործության համար աշխատե՛ք ընտրել այնպիսի հիմնախնդիր, ինչի հետ անմիջականորեն բախվել էք, ինչը ձեզ խիստ հոգեհարազատ է, միշտ հետաքրքրել է ձեզ, ինքնաբուխ ձևով հայտնվել է ձեր մեջ կամ տվյալ երևույթի հետ կապված ինչ-որ օրիգինալ միտք է ծագել:
2. Նախքան թեմային առնչվող գրականության հետ ծանոթանալը՝ ստեղծե՛ք հիմնախնդրի հետ կապված ձեր վարկածը, ձեր գաղափարը:
3. Ամենայն մանրամասնությամբ ուսումնասիրե՛ք, թե այդ հիմնախնդրի հետ կապված ինչ գաղափարներ կան, ստուգե՛ք, թե գոյություն ունեցող գաղափարները, որքանով են մոտ ձերին, ինչով կարելի է տարբերել: Նորությունը գնահատելիս հիմք ընդունե՛ք միայն գիտական կարծիքները, հստակ ձևակերպումները, ֆորումներում արտահայտված աղոտ, ոչ մասնագիտական ձևակերպումների վրա ուշադրություն մի դարձրեք: Հիշե՛ք, որ գիտական նորույթն այն գաղափարն է, որը հստակ ձևակերպված է ու հիմնավորված, հրատարակված է գիտական հանդեսում: Մինչև Ջ.Ֆրոյդն էլ էին անգիտակցականի մասին խոսել, բայց ակնարկներով, աղոտ. հիմնախնդիրը նա գիտակցեց ու հետազոտեց:
4. Հիմնախնդրի հետ կապված բազմակողմանի հարցեր տվե՛ք ձեզ: Հիշե՛ք Հեգելի միտքը, որ կարևորը հարցն է, ճիշտ տրված հարցի պատասխանն ինքնաբերաբար է գալիս:
5. Եթե որևէ առկա տեսության քննադատության արդյունքում եք նորը ստեղծելու, ապա պարզեք, թե որ հարցի պատասխանն է այդ տեսությունը և տվե՛ք այդ հարցի հետևի, ավելի ընդհանուր հարցը, ինչի պատասխանի արդյունքում այդ տեսությունը կդառնա ձեր ստեղծած տեսության մասնավոր դեպքը:
6. Նույնիսկ ամենավերացական հիմնախնդիրների դեպքում կենտրոնացե՛ք հողային, կենսական, պիտանի կողմերի վրա:
7. Հիմնախնդրի շուրջ մտածե՛ք գիշերը, քայլելիս, պառկած, անընդհատ... Գրառումներն արեք առավոտյան:
8. Եթե փակուղու առաջ եք կանգնել, թողե՛ք խնդրի շուրջ մտորումները, զբաղվե՛ք ուրիշ գործով, օրերով, շաբաթներով, ամիսներով այդ թեմայի շուրջ մի մտածե՛ք: Վերսկսե՛ք ձեր մտորումներն այն ժամանակ, երբ պատահականորեն թեման կհիշեք:
9. Ձեր գաղափարի հետ կապված քննարկումներ արե՛ք ընկերների, ուսանողների և բոլոր նրանց հետ, ովքեր կլսեն ձեզ: Երևակայությամբ ձեր մոտեցումները պատմեք ուրիշներին, մտովի լսե՛ք

նրանց քննադատությունները, պատասխանե՛ք դրանց:

10. Ձեր գաղափարը հաստատող հնարավորին չափ շատ կյանքից վերցված փաստեր հավաքե՛ք ու հիշե՛ք, որ հոգեբանության ոլորտում թեստերը և նմանատիպ հիմարություններն ավելի շատ ուրիշներին խաբելու, քան ինչ-որ բան պարզելու համար են: Հետազոտության լավագույն միջոցները դեպքերի վերլուծությունը, գրույցները, գիտափորձերը, պրոյեկտային մեթոդները, դիտումը և ընդհանրապես որակական մեթոդներն են: Սա սուբյեկտիվ տեսակետ է և շատերը կարող են չհամաձայնել:
11. Ձեր գաղափարը շարադրեք այնքան պարզ, որ երեխան էլ հասկանա, եթե չի հասկանա, ուրեմն այդ գաղափարը կարիք ունի ավելի պարզեցնելու: Հիշե՛ք,

բարդ գրելը կամ դերասանություն է, որի իմաստն այն է, թե «եթե իմ ասածը չես հասկանում, ուրեմն ես քեզանից խելոք եմ» կամ հենց ինքը տվյալ հիմնախնդիրը լավ չի պատկերացնում, այդ պատճառով էլ միտումնավոր խճճում է: Կարդացե՛ք մեծագույն հանճարների՝ Ֆրոյդի, Յունգի, Ադլերի, Ֆրանկլիի, Մարտրի, Վիգոտսկու գործերը: Նրանք շատ պարզ են գրում, որովհետև տիրապետում են նյութին, լավ են հասկանում, թե ինչի մասին են գրում:

12. Մի՛ հուսահատվեք քննադատություններից: Մարդիկ դժվարությամբ են ընդունում նորը. հիշե՛ք, որ մարդն ի վիճակի չի ստեղծել մի բան, որն իրականության մեջ գոյություն չունի, ուղղակի ուրիշներին համոզելու համար պետք է շատ փաստեր ներկայացնել:

## ՏԱՍԸ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՈՒՐԴ

1. Ամեն օր մտածե՛ք, թե հանուն ինչի եք ծնվել, որն է ձեր տեղն այս կյանքում, որն է ձեր կյանքի իմաստը... Մտածե՛ք այնքան, մինչև կասեք. «ես ծնվել եմ այս խնդիրը լուծելու, այս գործն անելու համար»:
2. Եղե՛ք կատարյալ անկեղծ ինքներդ ձեզ հետ... Եթե իսկապես քաղցած եք՝ կերե՛ք, ծարավ եք՝ խմե՛ք... Եթե սրիկայություն եք արել՝ խոստովանե՛ք ինքներդ ձեզ ու ներողություն խնդրե՛ք նրանից, ում նկատմամբ դա արել եք: Անկեղծորեն գնահատե՛ք ձեր արտաքինը, խելքը, բնավորությունը... Միշտ հիշե՛ք, որ անընդհատ կարող եք կատարելագործվել: Մի՛ խաբեք ձեզ և ուրիշներին: Կեղծ գոյությունը հանգեցնելու է ինքնա-

ատելության (հաճախ՝ չգիտակցված)՝ իր սարսափելի հետևանքներով:

3. Իրականությունից կտրող ամեն ինչից (հեքիաթներ, ֆանտազիաներ, խմիչք և այլն) հրաժարվե՛ք:
4. Միշտ ծրագրավորե՛ք ձեր կյանքը՝ շաբաթվա, ամսվա, տարվա, տասնամյակի ամբողջ կյանքի կտրվածքով... Ծրագիրը գրե՛ք և պահե՛ք... Ոչինչ, որ ինչ-որ բան այս շաբաթ, կամ այս տարի չեք հասցրել: Կտեսնեք, որ այն ինչ ծրագրել էիք, ի վերջո, կիրականացնեք:
5. Ձեր առջև դրեք հնարավորինս իրական, բայց գրանդիոզ նպատակներ ու հիշեք մեծերի խոսքը՝ «հասնել հնարավորին կարող է միայն նա, ով անհնարին է ձգտում»:

6. Կյանքի ոչ մի կողմի վրա խաչ մի՛ քաշեք՝ մարդուն պետք է և մարմինը և հոգին, և հոգևորը և փողը, և սնունդը և ինֆորմացիան, և սերը և սեքսը և այլն և այլն:
7. Հիշե՛ք, որ ցանկացած պահից, նույնիսկ 90 տարեկանից կարելի է նոր կյանք սկսել, լրիվ փոխվել ու հասնել բարձունքների:
8. Երբեք մի՛ ասեք՝ չեմ կարող, լավն եմ կամ վատը (մի խաբեք ձեզ՝ ոչ լավն էք, ոչ վատը, քանի որ չկա ձեզ նման մեկ ուրիշը, որի հետ համեմատենք ու ասենք, ահա դու լավն ես, նա վատը), այս մարդը լավն

է, իսկ ահա նա՛ վատը (կան լավ ու վատ արարքներ, բայց ոչ լավ ու վատ մարդիկ):

9. Զգուշորեն ընտրեք այն մարդկանց ում հետ թիմ եք կազմում, ընկերություն անում: Հիշեք, որ գողի ու սրիկայի հետ շփվես քեզ գող ու սրիկա են համարելու, ինչի արդյունքում դու էլ ես այդպիսին դառնալու, և՛ հակառակը:
10. Ձեր մասին ուրիշի արտահայտած կարծիքից վերցրեք միայն ա՛յն, ինչն օգնելու է ձեզ զարգանալ, մնացածը, հատկապես գովեստները, թափե՛ք աղբարկղ:



## ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԽՈՂԵՐ

- ❖ Արտաքին աշխարհը՝ մտքի ստեղծածն է: Մտքի միջոցով է, որ մենք տեսնում ու կանոնավորում ենք աշխարհը:
- ❖ Փիլիսոփայությունը, որը նշանակում է «Մեր իմաստության», նաև ամեն ինչ իրական տեսնելու գիտություն է, մտքի կանոնավորվածություն:
- ❖ Փիլիսոփայությունը՝ բարձր աստիճանի զգացականություն է: Փորձ է՝ կառուցվելիք մտքի պատկերի մեջ ներառել ամբողջ տիեզերքը, և այն ամենը, ինչը տեղավորվում է մարդկային մտքի մեջ:
- ❖ Մենք փիլիսոփաների ազգ չենք: Մենք բանաստեղծների ազգ ենք, սրանք շատ անգամ ասված խոսքեր են: Մեր ազգի ամենաժողովրդական պատմաբան՝ Լենոն (Առաքել Բաբախանյանը) ասել է՝ «Ճյուղերու վրա թառած թռչուններու նման, և իրականությունե բավական հեռավորությամբ, մեր բանաստեղծները՝ լուսինը և աստղերը զվարճացուցեր են՝ վարդերու և աստղերու մասին երգեր երգելով»:
- ❖ Խուսափել է պետք՝ չար մարդու սիրալիրությունից և բարի մարդու թշնամությունից:
- ❖ Երբ մարդը ցույց է տալիս իր իրական կերպարը, իր ով լինելը՝ հավատա նրան: Որովհետև ամեն մարդ՝ ինքն իրեն ավելի լավ է ճանաչում, քան դիմացինը:
- ❖ Սովորիր՝ ո՛չ ասել... Մեկը, եթե քեզնից ոչ չլսի, կսկսի շահագործել ու ճնշել քեզ: Սովորիր՝ ոչը՝ երբ ասել: Ո՛չ ասելու ճիշտ ժամանակը խիստ կարևոր է:
- ❖ Երբ, մեկին հոգուդ մոտ ես թողնում՝ հոգիդ կակդում ու խոցելի է դառնում: Դրա համար էլ ավելի խոցվում ես նրանից, ում հետ լիովին անկեղծ ես եղել, ու զգացմունք կիսել: Մ՛ի թողնիր մարդկանց մարմնիդ այնքան մոտիկ, որ քեզ խոցեն, խոցոտեն:
- ❖ Լավը, վատից շատ տարբեր չէ... նրա շարունակությունն է...
- ❖ Կրոնի նույնիսկ ամենաճշմարիտ թվացող հասկացությունն անգամ, պարադոքսալ է՝ այսինքն համակարծիքների տեսակետ է միայն:
- ❖ Կրոնի և փիլիսոփայության միջև հակասություն կա՝ մեկը վերացական է, մյուսը խիստ առարկայական: Իրար հակասող, հակառակ երևույթներ են: Փիլիսոփայություն, նշանակում է «Մեր իմաստության»...
- ❖ Մեծ մարդկանց կոչումը, խմբավորման մեջ գտնվելը չէ, այլ խմբավորման համար տրամաբանական նոր ուղի բացելը, ու մարդուն՝ ինքնաճանաչման երանություն պարզելը:
- ❖ Փիլիսոփայության միջոցով է, որ երևույթները՝ իմաստ, արժեք, խորք ու տարողություն են ստանում: Եվ այստեղ է՝ նրա «հասկանալու ուրախությունն ու գերագույն հաճույքը»:
- ❖ Չեմ հանդիպել մարդու, որից հնարավոր չէ սովորել՝ սովորում ես լավից էլ, վատից էլ հավասարապես:
- ❖ Խելացի մարդը՝ հպարտ է լինում, և անսահման բարի...

- ❖ Բնությունը՝ մարդ արարածի մեջ դրել է՝ հզոր ուղեղ, և թույլ մարմին...
- ❖ Դու շատ քիչ բան գիտես՝ չիմացածիդ համեմատ... Մենք, աշխարհը չափում և արժևորում ենք՝ մեր գիտակցությամբ, բայց հարց է, թե որչափ է տեղավորվում մեր ուղեղի մեջ, որն էլ մեր իմացած աշխարհի չափանիշն է...
- ❖ Սխալվելով՝ մարդ շատ բան կտվորի, և լավ կտվորի: Սովորի՛ր ուրիշի սխալի վրա, քո սխալը՝ վճարովի է...
- ❖ Եթե չես պայքարում, չես շահում ոչինչ: Պայքարը՝ հաղթանակի հույսն է...

Մարդկային կյանքի պայքարը, անվերջանալի է, նրա կյանքի ճանապարհն է...

- ❖ Կամքով թույլ մարդիկ, փնտրում են իրենցից թույլերին, կամքով ուժեղները՝ փնտրում են իրենցից ուժեղներին:

ՄԵՆՔ՝ ԲՈԼՈՐՍ, ՋԱՎԱԿՆԵՐ ԵՆՔ ԱՍՏՂԱՓՈՇՈՒ...

Ո՛Յ, ՋԱՐՄԱՆԱԼԻ...

(ասք երկրագնդին)

Մշտապես հղի՝ Մայրը ամենի,  
 Բի՛րտ մի թագուհի՝ երկրագունդը մեր...  
 Մահու՛ն սահում է դարե՛ր շարունակ,  
 Լույսի հեղեղում անծայրածավալ,  
 Բյուրահո՛ւս, անծի՛ր, մշտագնաց, անբավ:  
 Հրա՛ շքն այդ կապույտ անսասանելի  
 Ու բազմաբեղուն,  
 Ծնու՛մ է, ծնում՝ կյանք տալիս ճիչով,  
 Կյանք տալիս ճիչով՝ ե՛տ առնում նորից.  
 Ե՛տ առնում նորից իր տված կյանքը,  
 Ու մնում հղի՛...  
 Անհասկանալի, անվերծանելի,  
 Իր իսկ գոյությամբ՝  
 Վե՛հ, զարմանալի:  
 Իրենով հպարտ հանդա՛րտ պտտվել,  
 Աստղերի կուռքն է նա մի օր դարձել,  
 Ողջ տիեզերքի գոհար մի անգին,  
 Ու կռվածաղիկ աստղերի համար:  
 Կրակ է ներսից, կրա՛կ դրսից հրաշող,  
 Ինքն էլ իր վրա հիացած ընդմիշտ,  
 Հանդա՛րտ շրջվում է նա թավազուր,  
 Որ հույ՛ժ գեղեցիկ մարմինը ցույց տա,  
 Լուսատու աստղին, Լուսնին, Արևին:  
 Շուրջպա՛ր է բռնում լույսով աստղերի,  
 Շրջվում է դանդա՛ղ ու վեհագնաց.  
 Ծնունդ է տալիս նա երկնապարզն՝  
 Աստղերի ցուրը՝ կռնակին առած:  
 Կրա՛կ է հավում նրա ընդերքում,  
 Ուժ տալիս թափին, անիվ պտույտի:  
 Կրակը ներսից, կրակ դրսից ատրաշեկ,  
 Հու՛ր արևը թագ ու պսակ,  
 Թագավո՛ր է, դիտո՛րդ կարգված,

Որ շուրջպարում միշտ հիանա  
 Ի՛ր թագուհու նազանքներով:  
 Իսկ թագուհին, Արևի շուրջ հրաբորբ՝  
 Հե՛զ սահում է անհատնում,  
 Օվկյանոսներն էլ կոնքե՛րն են շոյում,  
 Երկրագնդի՛ հավերժահարս:  
 Դարեր են անցել անթիվ, անհամար,  
 Դարեր են դարձել անհաշի՛վ, անծայր՝  
 Սառույց է կտրել նա երկարատև,  
 Ջերմոտել նորից՝ հա՛լք ու հալիլոց...  
 Աստղերն են լույսով պարուրել կրկին,  
 Լույս ուլունք դարձած՝ շարան առ շարան,  
 Շուրջպար են բռնել հրակազմ դարձած,  
 Երկնքի զարդ, թագուհու շուրջ գերագեղ:  
 Աստղերի փոշուց նա բեղմնավորված՝  
 Այնքա՛ն պտտվել, այնքա՛ն պտտվել,  
 Գլխապտույտից գժվե՛լ է մի օր,  
 Գերազանցել է նա ինքը իրեն՝  
 Ու «Մա՛րդ» է երկնել հրաշածին.  
 Ջարմանակերտ, զարմանագործ՝ մի էակ:  
 Կրակ է ներսից, կրակը դրսից լուսաշող,  
 Ծնու՛մ է, ծնում՝ անբավ, անհոգնում,  
 Որ մարդը գա ուրիշ, կենդանին ուրիշ,  
 Ծառն ու ծաղիկը նորոգվեն ուրիշ,  
 Նոր հագուստներով, գույներով պես-պես:  
 Լուսավառ աստղերին օգնության կանչել՝  
 Մա՛րդ է երկնել...  
 Մա՛րդ է երկնել,  
 Թա՛գ ուղեղով նա զարդարել՝  
 Դարերի զա՛րդ,  
 Դարե՛ր չափող՝ միտք-ուղեղով.

Որ մարդը դառնա տերը երկրի,  
Չափը՝ բնության ու տիեզերքի,  
Ու հպարտ քայլի աշխարհի վրա՝  
Առանց սողալու:  
Մարդով միշտ հպարտ իր իսկ ստեղծած,  
Երբեք չի կարծել, որ ազահ ու նենգ  
Մի մահկանացու...  
Մասնատելու է իր ամբողջական,  
Հպարտ ու հղի մարմինը՝ մի օր...  
Եվ պատերազմներ են խոցել-ձևելու  
Հրաշքի նման մարմինը նրա:  
-«Հասկացե՛ք մարդի՛կ, ո՛վ ազահ մարդի՛կ,  
Դեռ չե՞ք հասկացել, հա՛րկ է հասկանաք.  
Անսկի՛զբ, անվե՛րջ, ինքնակրկնող  
տիեզերքինն է  
Կացարանը ձեր, տիեզերքինն  
անժամանակ:  
Եվ, ամեննին էլ մարդը չէ իրի «չափն ու  
կշիռը»,  
Ու տերն ամենի:  
Անիվ տիեզերքն է ինձ տուն սվող՝ տերը,  
Ու թե՛ժ արևը ժամանակ կարգող:  
Այսքանը իմը՝ այնքանը քոնը,  
Ի՛նչ ազահություն, ի՞նչ ազահություն:  
Ավելի լավ է, մարդը թող մնա իր հին  
կարծիքին,  
Թե, ունայնություն է նյութի աշխարհում՝  
«Ունայնություն՝ն, ունայնությա՛նց»...  
Ո՛վ, մա՛րդ, հասկացի՛ր...  
Նյու՛թը չէ, ժամանա՛կն է քո ունեցած  
զանձը,

Անգին գոհարը,  
Ժամանակ «արքա՛ն» է կարգն ու կանոնը,  
Վիճակի տե՛րը...  
Թե ազա՛հ լինես, կամ թե չլինես՝  
Չե՛ս կարող դառնալ «չափն» ու «գուշակը» քո  
ապագայի:  
Հո՛ւր ես դու երկրում ժամանակավոր.  
Կյանք է քեզ տրված, որ ապրես ուրա՛խ,  
Սե՛ր տաս, սե՛ր առնես, վայելես կյանքի  
Քո՝ «ակնթարթը»...  
Գոհացիր լույսով, բնությամբ չքնաղ,  
Հուրհան արևով, անգին ուղեղով»:  
Ու թագուհին, արևի շուրջ հրաբորբ,  
Հե՛զ սահում է անհատնում,  
Լույսերի ծով, լույսի հեղեղ երկնքում:  
Կրակը ներսից, կրակ դրսից հրազարդ,  
Ծնու՛մ է անվերջ, ե՛տ առնում նորից իր  
տված կյանքը՝  
Ու մնում հղի՛...  
Անի՛վ-բանի՛վ տիեզերքում ինքնագլոր:  
Դարերի հունձքը կոնակին առած,  
Աստղերի լույսով ընդմիջտ պարուրված՝  
Հրա՛շքն այդ կապույտ, վե՛հ  
զարմանալի...  
Շու՛ռ է գալիս, աստղերի հետ պտույտ տալիս  
բոլորվելով,  
Ապրել ցանկացող, ժամանակ հաշվող՝  
Մա՛րդ արարածին՝ արհամարհե-  
լով...

## ՅՈՒՅՈՒՄՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ\*

1. Հանդեսում կարող են հրատարակվել միայն նախկինում չհրատարակված հոդվածները:
2. Հեղինակները պատասխանատու են տրամադրված տեղեկատվության ճշգրտության համար:
3. Հոդվածը պետք է քննարկված և հրատարակության երաշխավորված լինի համապատասխան ամբիոնի (գիտահետազոտական հաստատության գիտական խորհրդի) նիստում:
4. Հոդվածը կարող է ներկայացվել հայերեն, ռուսերեն, անգլերեն:
5. Հոդվածի ծավալը պետք է լինի 5-15 էջի սահմաններում:
6. Հոդվածը պետք է ներկայացվի էլեկտրոնային տարբերակով, որտեղ պետք է նշված լինեն նաև հոդվածի հեղինակի մասին տվյալներ՝ հայերեն, անգլերեն (ռուսերեն լեզվով հոդվածների դեպքում՝ նաև ռուսերեն):
7. Վերնագրերը, հեղինակների անունները և ազգանունները պետք է գրվեն մեծատառերով:
8. Հոդվածը պետք է գրված լինի Microsoft Office Word ծրագրով, A4 ձևաչափի թղթի վրա, վերնագիրը՝ 14, իսկ տեքստը 11 տառաչափով: Տողերի միջև հեռավորությունը պետք է լինի 1.3: Հայերեն հոդվածը պետք է գրված լինի Sylfaen, իսկ անգլերեն և ռուսերեն հոդվածները՝ Calibri, տառաձևով:
9. Հոդվածը պետք է ունենա ամփոփում. հայերեն և անգլերեն լեզուներով հոդ-

\* Առաջադրվող պահանջները պետք է խստորեն պահպանել:

վածների դեպքում՝ հայերեն և անգլերեն (Summary), ռուսերեն հոդվածի դեպքում նաև՝ ռուսերեն (Резюме): Ե՛վ հայերեն, և՛ անգլերեն, և՛ ռուսերեն ամփոփմանը պետք է հաջորդի 5-6 հանգուցային հասկացությունների թվարկումը՝ համապատասխան լեզվով:

10. Հոդվածում պետք է օգտագործվի հղման APA տարբերակը<sup>1</sup>, այսինքն՝ տեքստում տեղ գտած մեջբերումներից և հղումներից հետո փակագծերում տեղեկատվության աղբյուրը պետք է նշել հետևյալ կերպ. Հեղինակի ազգանունը, հրատարակման տարեթիվը, անհրաժեշտության դեպքում՝ մասնանշվող էջերը, օրինակ՝ (Կողբացի 1994. 70) կամ (Quine 1953: 45) կամ (Ойэрман 2009: 415): Մեջբերվող աղբյուրի վերաբերյալ լրիվ տեղեկատվությունը պետք է տեղադրվի հոդվածի վերջում այբբենական կարգով՝ «Մեջբերված և հղված գրականություն» ենթավերնագրով՝ հիմք ընդունելով հետևյալ տիպօրինակը:

### ***Գիրք մեկ հեղինակով.***

1. Հովհաննիսյան, Հ.Օ. (2003): Հասարակական համակարգի զարգացման հիմնախնդիրները, Երևան, *Նորավանք* գիտակրթական հիմնադրամ:
2. Toulmin, S. E. (1958). The Uses of Argument (updated ed., 2003; reprint, 2006). New York: Cambridge University Press.
3. Ивлев, Ю.В. (2009). Теория и практика аргументации. Москва, изд.-во Проспект.

### ***Գիրք մեկից ավելի հեղինակներով.***

1. Բրուտյան, Ա., Բրուտյան, Գ. (2003): Քաղաքական փաստարկման 101 կա-

<sup>1</sup> APA հղման ձևի վերաբերյալ մանրամասին տեղեկության համար տե՛ս՝ Publication Manual of the American Psychological Association, 4<sup>th</sup> ed., 1994:

նուն: Երևան. *Նաիրի* հրատարակչություն, 134 էջ:

2. Hilbert, D. & Bernays, P. (1934). *Grundlagen der Mathematik* (vol. 1). Berlin: Springer.
3. Лисецкий, К.С., Литягина, Е.В. (2005). *Психология негативных зависимостей*. Самара: Изд-во «Универс групп».

#### ***Խմբագրի կողմից կազմված գիրք.***

1. Ayer, A. J. (Ed.). (1959). *Logical Positivism*. The Free Press, Glencoe, Illinois.
2. Мертон, Р.К. (1994). “Явные и латентные функции” // *Американская социологическая мысль*. Под. ред. В.И. -Добрененькова (сс. 379-448). Москва.

#### ***Ամսագրում տպագրված հոդված.***

1. Ջիջյան, Ռ. (2011). «Ակնհայտն` անհավատալի»: Պատմաբանասիրական հանդես 2011, № 1.
2. Hacking, I. (1979). “What is Logic”. The Journal of Philosophy, Vol. LXXVI, №. 6, June.
3. Хотинец, Ю.В. (2002). «Формирование этнического самосознания студентов в Процессе обучения в вузе». Вопросы психологии. Москва, № 2.

#### ***Պարբերականում կամ ժողովածուում տպագրված հոդված.***

1. Խաչիկյան, Լ. (1964): «Գրիգոր Պարթևին վերագրված Հարցումը որպես հայ մատենագրության երախայրիք»: Բանբեր մատենադարանի, № 7:
2. Quine, W.V. (1953). “Two Dogmas of Empiricism”. In Quine, W.V. From a Logical Point of View. Harvard University Press.
3. Франц, А. (1986). “Об идеальном единстве морального, логического и философского способов обосновании”. В сб.: Восканян, А., Григорян, Г. (ред.) (1986). Второй семинар молодых ученых по проблемам аргументации. Тези-

сы докладов (13-22 октября) (сс. 8-10).

Ереван: Изд-во АН Армянской ССР.

11. Եթե հոդվածի տեքստը պարունակում է ոչ տառային նշաններ (օրինակ` մաթեմատիկական կամ տրամաբանական բանաձևեր, գծապատկերներ), ապա տեքստի PDF տարբերակը պետք է կցվի անհրաժեշտ ստուգման համար:
12. Տեքստերը, նկարները և հրատարակվող այլ նյութերը պետք է ուղարկվեն. Խմբագրություն հետևյալ հասցեով` Տիգրան Մեծի պ. 17, Երևան 0010, Հայաստան: Էլեկտրոնային հասցե` [metaphilosophy.transflogic.arg@gmail.com](mailto:metaphilosophy.transflogic.arg@gmail.com) Հեռ.՝ (+37410) 597093, (+37493) 814911, Ֆաքս՝ (+374 10) 597008:
13. Նյութերը և խտասկավառակները հետ չեն վերադարձվում:

## INSTRUCTIONS FOR THE AUTHORS\*

1. In the Journal can be published only the articles that haven't been published before.
2. The authors are responsible for the accuracy of the provided information.
3. The article must be discussed at the meeting of the appropriate chair (research organization academic council) and guaranteed for publication.
4. The articles must be presented in Armenian, English, Russian.
5. The volume of the article must be from 5 to 15 pages.
6. The article must be submitted in electronic version including also the author's personal data in Armenian and English (and in Russian, in case the article is in Russian).
7. The title of the article, name and surname of the author must be UPPERCASE:
8. The Articles should be written in Microsoft Office Word on A4 paper, font size for the title – 14, for the text of the article – 11. Line spacing is 1.3. The Armenian papers must be typed in Sylfaen font and English and Russian papers in Calibri.
9. The articles must have a Summary: for Armenian and English articles the summary must be in Armenian (Ամփոփում) and English, for Russian papers the summary must be also in Russian (Резюме). After each summary must be given about 5–6 key words and expressions.
10. In the article must be used the APA<sup>1</sup> citation system, i.e. in the text, after the citation or reference, in the brackets

---

\* The requirements should be strictly kept.

<sup>1</sup> For a detailed account of the APA citing style see the Publication Manual of the American Psychological Association, 4th ed., 1994.

should be mentioned the source in the following way – the author's surname, year of publication, the page if necessary, for example: (Շողիբաբյան 1994. 70) or (Quine 1953: 45) or (Ойэрман 2009: 415). The full information about the cited materials should be placed at the end of the text under the title 'References' in the alphabetical order. The forms for the full information in "References" are as follows:

### **For a book by a single author**

1. Հովհաննիսյան, Հ.Օ. (2003): Հասարակական համակարգի զարգացման հիմնախնդիրները, Երևան, *Նորավանք* գիտակրթական հիմնադրամ:
2. Toulmin, S. E. (1958). *The Uses of Argument* (updated ed., 2003; reprint, 2006). New York: Cambridge University Press.
3. Ивлев, Ю.В. (2009). *Теория и практика аргументации*. Москва, изд.-во Проспект.

### **For a book by two or more authors:**

1. Բրուտյան, Ա., Բրուտյան, Գ. (2003): Քաղաքական փաստարկման 101 կանոն: Երևան. *Նաիրի* հրատարակչություն, 134 էջ:
2. Hilbert, D. & Bernays, P. (1934). *Grundlagen der Mathematik* (vol. 1). Berlin: Springer.
3. Лисецкий, К.С., Литягина, Е.В. (2005). *Психология негативных зависимостей*. Самара: Изд-во «Универс групп».

### **For a book by an editor:**

1. Ayer, A. J. (Ed.). (1959). *Logical Positivism*. The Free Press, Glencoe, Illinois.
2. Мертон, Р.К. (1994). "Явные и латентные функции" // *Американская социологическая мысль*. Под. ред. В.И. - Добренкова (сс. 379-448). Москва.

**For an article in a journal:**

1. Ջիջյան, Ռ. (2011). «Ակնհայտն՝ անհավատալի»: Պատմաբանասիրական հանդես 2011, № 1.
2. Hacking, I. (1979). "What is Logic". The Journal of Philosophy, Vol. LXXVI, №. 6, June.
3. Хотинец, Ю.В. (2002). «Формирование этнического самосознания студентов в Процессе обучения в вузе». Вопросы психологии. Москва, № 2.

**For an article in a periodical:**

1. Խաչիկյան, Լ. (1964): «Գրիգոր Պարթևին վերագրված Հարցումը որպես հայ մատենագրության երախայրիք»: Բանբեր մատենադարանի, № 7:
  2. Quine, W.V. (1953). "Two Dogmas of Empiricism". In Quine, W.V. From a Logical Point of View. Harvard University Press.
  3. Франц, А. (1986). "Об идеальном единстве морального, логического и философского способов обоснования". В сб.: Восканян, А., Григорян, Г. (ред.) (1986). Второй семинар молодых ученых по проблемам аргументации. Тезисы докладов (13-22 октября) (сс. 8-10). Ереван: Изд-во АН Армянской ССР.
11. If the text contains non-alphabetical symbolism (for example: mathematical or logical formulas, charts) the PDF version of the text should be enclosed for the verification.
  12. Texts, photos and other publishing materials should be sent to editorial address: Georg Brutian, 17 Tigran Mets Ave., Yerevan 0010, Armenia. E-mail: [metaphilosophy.transflogic.arg@gmail.com](mailto:metaphilosophy.transflogic.arg@gmail.com) Phone: (+37410) 597093, (+37493) 814911.

Fax: (37410) 597001.

13. The materials and CDs will not be returned.



## ИНСТРУКЦИИ ДЛЯ АВТОРОВ\*

1. В журнале могут быть изданы только ранее не изданные статьи.
2. Авторы ответственны за точность и правильность отраженной информации.
3. Представленные в журнал статьи должны быть обсуждены на заседании соответствующей кафедры, на заседании ученого совета научно-исследовательской организации и рекомендованы к опубликованию.
4. Статьи могут быть написаны на армянском, английском и русском языках.
5. Объем статьи должен быть от 5 до 15 страниц.
6. Статья должна быть представлена в электронном варианте, в ней должны наличествовать также сведения об авторе статьи.
7. Заглавие статьи, имя и фамилия автора должны быть написаны заглавными буквами.
8. Статьи должны быть набраны на Microsoft Office Word, на бумаге А4, размер шрифта заглавия – 14, а текста статьи - 11. Междустрочный интервал – 1,3. Статьи на армянском языке должны быть напечатаны фонтон Sylfaen, а статьи на английском и русском языках - фонтон Calibri.
9. Статья должна иметь резюме: в случае статей на армянском и английском языках резюме должны быть на армянском (Ամփոփում) и английском (Summary) языках, а в случае статей на русском языке - на армянском, английском и русском языках. Резюме должны иметь 5-6 ключевых слов и выражений на соответствующем языке, отражающих основные положения статьи.

\* Представленные требованиям должны быть строго соблюдены.

10. В статье должна быть использована система цитирования АРА<sup>1</sup>, т.е. в тексте после цитаты или ссылки следует в скобках указать исходные данные в следующем порядке: автор, год издания, страницы (при необходимости), например: (Quine 1953: 45). Полная информация о цитируемом источнике должна быть дана в конце текста статьи в алфавитном порядке под заголовком «Цитируемая и упомянутая литература».

### Для книг с одним автором.

1. Հովհաննիսյան, Հ.Օ. (2003): Հասարակական համակարգի զարգացման հիմնախնդիրները, Երևան, *Նորակարգ* գիտակրթական հիմնադրամ:
2. Toulmin, S. E. (1958). The Uses of Argument (updated ed., 2003; reprint, 2006). New York: Cambridge University Press.
3. Ивлев, Ю.В. (2009). Теория и практика аргументации. Москва, изд.-во Проспект.

### Для книг с двумя и более авторами.

1. Բրուսյան, Ա., Բրուսյան, Գ. (2003): Քաղաքական փաստարկման 101 կանոն: Երևան. *Նաիրի* հրատարակչություն, 134 էջ:
2. Hilbert, D. & Bernays, P. (1934). Grundlagen der Mathematik (vol. 1). Berlin: Springer.
3. Лисецкий, К.С., Литягина, Е.В. (2005). Психология негативных зависимостей. Самара: Изд-во «Универс групп».

### Для книг, составленных редактором.

1. Ayer, A. J. (Ed.). (1959). Logical Positivism. The Free Press, Glencoe, Illinois.

<sup>1</sup> Для детального ознакомления со стилем цитирования АРА см. Publication Manuel of the American Psychological Association, 4th ed., 1994.

2. Мертон, Р.К. (1994). “Явные и латентные функции” // Американская социологическая мысль. Под. ред. В.И. - Добренькова (сс. 379-448). Москва.

**Для статей из журналов.**

1. Ջիջյան, Ռ. (2011). «Ակնհայտն` անհավատարի»: Պատմաքաղաքագրական հանդես 2011, № 1.
2. Hacking, I. (1979). “What is Logic”. The Journal of Philosophy, Vol. LXXVI, №. 6, June.
3. Хотинец, Ю.В. (2002). «Формирование этнического самосознания студентов в Процессе обучения в вузе». Вопросы психологии. Москва, № 2.

**Для статей из периодических изданий.**

1. Խաչիկյան, Լ. (1964): «Գրիգոր Պարթևին վերագրված Հարցումը որպես հայ մատենագրության երախայրիք»: Բանբեր մատենադարանի, № 7:
2. Quine, W.V. (1953). “Two Dogmas of Empiricism”. In Quine, W.V. From a Logical Point of View. Harvard University Press.
3. Франц, А. (1986). “Об идеальном единстве морального, логического и

философского способов обосновании”. В сб.: Восканян, А., Григорян, Г. (ред.) (1986). Второй семинар молодых ученых по проблемам аргументации. Тезисы докладов (13-22 октября) (сс. 8-10). Ереван: Изд-во АН Армянской ССР.

11. Если текст содержит не алфавитную символику, например, математические и логические формулы, графики, то PDF версия текста должна быть приложена для верификации.
12. Тексты, фотографии и другие публикуемые материалы следует направлять по адресу редакции: G. Brutian, Tigran Mets St. 17, Yerevan 0010, Armenia. Эл. почта: [metaphilosophy.transflogic.arg@gmail.com](mailto:metaphilosophy.transflogic.arg@gmail.com) Телефон: (37410) 597093, (+37494) 452856, Факс: +(374 10) 597001
13. Материалы и компакт-дискеты не возвращаются.

# ՀԵՂԻՆԱԿՆԵՐ

## THE AUTHORS

ԱԲՈՎՅԱՆ ՄԵԼԱՆԻԱ  
ABOVYAN MELANIA

Երգչուհի-ազգագրագետ (ԱՄՆ)  
Singer-ethnologist (USA)

ԱԹԱՆԵՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ  
ATANESYAN ARTHUR

Երևանի պետական համալսարանի սոցիոլոգիայի ֆակուլտետի կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի վարիչ, քաղաքական գիտությունների դոկտոր, դոցենտ  
Head of the Chair of Applied Sociology at the Faculty of Sociology of the Yerevan State University, PhD, Doctor of Habilitation in Politics, Associate Professor

ՀԱՐՈՅԱՆ ՆԵԼԼԻ  
HAROYAN NELLY

Երևանի պետական համալսարանի սոցիալական հոգեբանության ամբիոնի դոցենտ, հոգեբանական գիտությունների թեկնածու  
Associate Professor of the Chair of Social Psychology at the Yerevan State University, PhD in Psychology

ԲԶՆՈՒՆԻ ՎԱՀԱՆ  
BZNUNI VAHAN

Լոս Անջելեսի (ԱՄՆ, Կալիֆորնիա) քաղաքային քոլեջի շրջանավարտ  
Senior at Los Angeles (USA, California) City College

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՇՈՏ  
GEVORGYAN ASHOT

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի փիլիսոփայության և տրամաբանության ամբիոնի դոցենտ, փիլիսոփայական գիտությունների թեկնածու  
Associate Professor of the Department of Philosophy and Logic at the Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan, PhD in Philosophy

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՄԱՐԻԱՄ  
GEVORGYAN MARIAM

ՀՀ ԳԱԱ Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի և Բուրգունդիայի համալսարանի (Ֆրանսիա) և Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի ասպիրանտ  
Post Graduate Student at the Institute for Physical Research at NAS of Armenia and the University of Bourgogne in France and the Faculty of Mathematics, Physics and Informatics of the Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan

ԴԱՎԹՅԱՆ ՆԵԼԼԻ  
DAVTYAN NELLI

Արցախի պետական համալսարանի դասախոս  
Lecturer of the Artsakh State University

ԹԱՆԳԱՄՅԱՆ ՏԻԳՐԱՆ  
TANGAMYAM TIGRAN

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի կենսաբանության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր  
Head of the Chair of Biology and its Teaching Methods at the Armenian State

Pedagogical University after Khachatur Abovyan, PhD, Doctor of Habilitation in Pedagogy, Professor

ԹԵՎՈՍՅԱՆ ՄԱՐԻԱ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հոգեբանության տեսության և պատմության ամբիոնի դասախոս

TEVOSYAN MARIA

Lecturer of the Chair of Theory and History of Psychology at the Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ասպիրանտ, Պատմության և իրավագիտության ֆակուլտետի դեկանի օգնական

KHACHATRYAN TIGRAN

Post Graduate Student at the Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan, Assistant Dean of the Faculty of History and Jurisprudence

ԽԱՉԻԲԱԲՅԱՆ ՄԱՆԵ

Հայաստանի ամերիկյան համալսարանի *Անգլերեն և հաղորդակցություն* ֆակուլտետի 2-րդ կուրսի ուսանողուհի

KHACHIBABYAN MANE

Sophomore at the American University of Armenia, Department of English and Communications

ԽԱՉԻԿՅԱՆ ԳԱՅԱՆԵ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի կիրառական հոգեբանության ամբիոնի դոցենտ, հոգեբանական գիտությունների թեկնածու

KHACHIKYAN GAYANE

Associate Professor of the Chair of Applied Psychology at the Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan, PhD in Psychology

ԽՈՒԴՈՅԱՆ ՍԱՄՎԵԼ

Հոգեբանական գիտությունների դոկտոր, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի զարգացման և կիրառական հոգեբանության ամբիոնի վարիչ

KHUDOYAN SAMVEL

Head of the Chair of Development and Applied Psychology at the Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan, PhD, Doctor of Habilitation in Psychology

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի տարիքային և մանկավարժական հոգեբանության ամբիոնի վարիչ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

KARAPETYAN VLADIMIR

Head of the Chair of Age and Pedagogical Psychology at the Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan, PhD, Doctor of Habilitation in Psychology, Professor

ԿԱՐՈՅԱՆ ՄԱՐԻՆԵ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գեղարվեստական կրթության ֆակուլտետի երաժշտության տեսության, դասավանդման մեթոդիկայի և նվագա-

KAROYAN MARINE	<p>բանների ամբիոնի դոցենտ, հոգեբանական գիտությունների թեկնածու Associate Professor of the Chair of Theory of Music, its Teaching Methods and Musical Instruments of the Faculty of Art Education at the Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan, PhD in Psychology</p>
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿՈՒՆԻ	<p>Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, դոցենտ</p>
HARUTYUNYAN HAYKUNI	<p>Head of the Chair of Mathematics and Methodic of Elementary Education at the Armenian State Pedagogical University, PhD in Physics and Mathematics, Associate Professor</p>
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՌԱՔԵԼ	<p>Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հոգեբանության տեսության և պատմության ամբիոնի դոցենտ, հոգեբանական գիտությունների թեկնածու</p>
HOVHANNISYAN ARAQEL	<p>Associate Professor of the Chair of Theory and History of Psychology at the Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan, PhD in Psychology</p>
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՍՄԻԿ	<p>Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ Մետափիլիսոփայության, փոխակերպական տրամաբանության և փաստարկման տեսության միջազգային գիտահետազոտական ինստիտուտի փոխսնօրեն, ՀՊՄՀ փիլիսոփայության և տրամաբանության ամբիոնի վարիչ, փ.գ.թ., դոցենտ</p>
HOVHANNISYAN HASMIK	<p>Vice-president of International Research Institute for Metaphilosophy, Transformational Logic and Argumentation at the Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan, Head of the Department of Philosophy and Logic of Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan, PhD in Philosophy Associate Professor</p>
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ	<p>Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Մետափիլիսոփայության, փոխակերպական տրամաբանության և փաստարկման տեսության միջազգային գիտահետազոտական ինստիտուտի փոխսնօրեն, ՀՀ հանրային խորհրդի քաղաքացիական հասարակության կայացման հարցերի հանձնաժողովի նախագահ, փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ</p>
HOVHANNISYAN HOVHANNES	<p>Vice-president of International Research Institute for Metaphilosophy of, Transformational Logic and Argumentation at the Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan, Chairman of the Committee on Civil Society Development of the Public Council of the RA, PhD in Philosophy, Associate Professor</p>

ՀՈՎՍԵՓՅԱՆ ՍԵՂԱ	Երևանի պետական համալսարանի սոցիոլոգիայի ֆակուլտեի ասպիրանտ
HOVSEPYAN SEDA	Post Graduate Student at the Faculty of Sociology at Armenian State University
ՊԵՏՐՈՍՅԱՆ ՌՈՒԲԵՆ	Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հոգեբանության գիտահետազոտական լաբորատորիայի ավագ գիտաշխատող, մանկավարժական գիտությունների թեկնածու
PETROSYAN RUBEN	Senior Research Fellow of the Psychology Research Laboratory at the Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan, PhD in Pedagogy
ՍԱՐԳՍՅԱՆ ՀԱՍՄԻԿ	Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի նախադպրոցական մանկավարժության ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու
SARGSYAN HASMIK	Associate Professor of the Chair of Preschool Education at the Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan, PhD in Pedagogy
ՍԱՖՐԱՍՅԱՆ ՌՈՒԲԵՆ	ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
SAFRASYAN RUBEN	Corresponding member of NAS RA, Doctor of Habilitation in History, Professor
ՓՆՋՈՅԱՆ ԱՐՈՒՍՅԱԿ	Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի մետափիլիսոփայության, փոխակերպական տրամաբանության և փաստարկման տեսության միջազգային գիտահետազոտական ինստիտուտի մասնագետ
PNJOYAN ARUSYAK	Specialist of International Research Institute for Metaphilosophy, Transformational Logic and Argumentation at the Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan
ՕՀԱՆՅԱՆ ՔԱԶԻԿ	Մանկտ-Պետերբուրգի պետական տնտեսագիտական համալսարանի սոցիոլոգիայի ամբիոնի վարիչ, փ.գ.դ., պրոֆեսոր
OHANYAN KADJIK	Head of the Chair of Sociology at the Saint-Petersburg State University of Engineering and Economics, Doctor of Habilitation in Philosophy, Professor



### ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹ

Մանրանկար *Սահմանք իմաստասիրության* ձեռագրի անվանաթերթից.  
Մատենադարան, ձեռ. թիվ 1746, էջ 2ա (1280 թ.)

### DAVID ANHAGHT

Miniature of the Title of the manuscript *Definition of Philosophy*:  
Matenadaran, Ms. 1746, ca. 1280

**Մետափիլիսոփայության, փոխակերպական տրամաբանության և  
փաստարկման տեսության միջազգային գիտահետազոտական ինստիտուտ**

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան 0010, Տիգրան Մեծի 17:

Հեռ.՝ (+374 10) 59 70 93, (+374 10) 59 70 65:

E-mail: [metaphilosophy.transflogic.arg@gmail.com](mailto:metaphilosophy.transflogic.arg@gmail.com)

Ֆաքս՝ (+3741)59 70 08:

**International Research Institute for Metaphilosophy,  
Transformational Logic and Theory of Argumentation**

17 Tigran Mets Ave., Yerevan 0010, RA.

Phone: (+374 10) 59 70 93, (+374 10) 59 70 65.

E-mail: [metaphilosophy.transflogic.arg@gmail.com](mailto:metaphilosophy.transflogic.arg@gmail.com)

Fax՝ (+3741)59 70 08.